

5343

Копия рукописей
многих книг

1918

059
7-33



יְהוָה אֱלֹהֵינוּ
יְהוָה אֱלֹהֵינוּ
יְהוָה אֱלֹהֵינוּ
יְהוָה אֱלֹהֵינוּ

מִלְּפָנֶיךָ יְהוָה
מִלְּפָנֶיךָ יְהוָה
מִלְּפָנֶיךָ יְהוָה
מִלְּפָנֶיךָ יְהוָה

1918


059
7-33

66

65

ԵԳԻՊՏԱՆԻ ՏԱՐԵՑՈՅՑԸ

K. & G. MELKONIAN CIGARETTES



Գ. ԵՒ Կ. ՄԵԼԿՈՆԵԱՆ

ԱՄԵՆԱՀԻՆ ԵՒ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ

ՍԻԿԱՐԷԹԻ ՀԱՅ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՉ, ՀԱՍՏԱՏԵԱԼ 1882ԻՆ, Ի ԳՍՀԻՐԷ

ԱՄՍԱԿԱՆ ՄՊԱՌՈՒՄՆ Է 12,000,000 ՄԻԿԱՌԷԹ

ՓՆՏՈՒՆԸ ՄԵԼԿՈՆԵԱՆ ՏԱՆ ԱՌԱՋՆԱՅՍԱՏՈՒԿ

«Վիկտոր Մասեկ», «Սիլբեր Մասեկ» եւ «Մասեկ» Սիկարեթները

Հայթայթիչ՝ մասնաւոր առանձնաշնորհման հրովարտա-
կով՝ ճարտնական Կառավարութեան, Սիւմի Արքունիքին,
Եգիպտոսի Անգլիական Բարձր Գովիտէրին եւ Զօրարանակ-
ներուն, Սոսանի Կառավարիչին ու Զօրանոցներուն, Եւն.,
Եւն., Եւն.:

Գործատուն՝ Գահիրէ, Թէվֆիզիյէ թաղ (Ապպա թաւ-
րանին դիմաց)։ — Կոնստանտնուպոլիսի կեդրոններ՝ Աթապա-
էլ-Սաարա (Շիպային դիմաց), Պապ-էլ-Հաարա (Կայարանին
դիմաց), Ապպաի հրապարակին վրայ, Էզպէքիյէի մէջ, Եւն.:

Ունի իր 80 մասնաձեւերը Եգիպտոսի եւ Սուտանի
զանազան կեդրոններուն մէջ, ինչպէս նաեւ իր ներկայացու-
ցիչները՝ Մայրաքոյն-Արեւալքի եւ Եւրոպայի գլխաւոր քա-
ղաքներուն մէջ:

059
7-33

ALMANACH ARMÉNO-ÉGYPTIEN

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻԵԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ

ՏԱՐԵՑՈՅՑԸ



✻ Ե. ՏԱՐԻ ✻

✻ 1918 ✻

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՍԱՊԵԱՆ

ԱՂԵԲՍԱՆԳՐԻՍ



ԾԻԱԽՈՏՔ ԵՒ ՍԻԿԱՐԵՔ

ՄԱԹՈՍԵԱՆ

(Անանուն Ընկերություն)

TABACS & CIGARETTES

MATOSSIAN

(Société Anonyme)

LE CAIRE (EGYPTE)



ՀԱՍՏԱՏԵԱԼ 1899ԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՈՎ

ԿԵԳՐՈՆԱՏԵՂԻ	• • • • •	ԿԻՋԷ (Գահիրէ)
ձԻԻՂ	• • • • •	ԱՂԵՔՍԱՆԳՐԻԱ
ՄԱՍՆԱՃԻՂ ԵՒ ԳՈՐԾԱՏՈՒՆՔ	• • • • •	ԹԱՆԹԱ ԵՒ ԱՍԻՈՒՔ



ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՏՈՒՆԸ
 ԾԻԱԽՈՏԻ ԵՒ ԱՍԵՆԱԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵՔՆԵՐՈՒ
 ՀԱՅԹԱՅԹԻՉ ԵԳԻՊՏԻ ԲԱՆԱԿԻՆ
 ՍՐԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄ 15 000 ԲԻԼՕ



53079-ախ

393/2-67

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

★ ԵՂԲԱՐՔ ★



GAMSARAGAN FRÈRES

TABACS & CIGARETTES



ՅԱՐԳԵԼԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԿԸ ՅԱՆՋՆԱՐԱՐՈՒԻՆ ՄԱՍՆԱԻՈՐԱՊԷՍ

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՍԻԿԱՐԵՔՆԵՐԸ

ԵՒ

ԱՊՈՒՆԻԿՄԷ ԾԻԱԽՈՏԸ

ՈՐ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՏԱՆ ԱՌԱՆՋՆԱՅԱՏՈՒԿ Է



ԳՈՐԾԱՏՈՒՆ	• • • • •	ՋԱԿԱԶԻԿ
ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ	• • • • •	ԱՂԵՔՍԱՆԳՐԻԱ

Գլխաւոր վաճառատուն Գահիրէի մէջ
 ՕԲԷՐԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ

ԳԷՈՐԳ ԻՓԷԿԵԱՆ



KEVORK IPEKIAN EGYPTIAN CIGARETTES



ԾԻՆՑԵՔ ԻՓԷԿԵԱՆ ՍԻԿԱՐԵԹՆԵՐԸ

Իփէկեան սիկարէթները գնահատելու համար չի բաւեր անոնց բաւազօյն արեւելեան ծխախոտներէ պատրաստուած ըլլալը հաստատել, պէտք է նաև գիտնալ որ ծխախոտի առաջնակարգ մասնագէտ՝ նոյն ինքն Տիար Գէորգ Իփէկեանի հսկողութեան տակ կը կատարուի անոնց բազազրութիւնը (խարման): Իփէկեան Գործատան մէջ ծխախոտը կը կտրուի հաւանով (և ոչ թէ մեքենայով) և բոլոր սիկարէթները ձեռնով կը պատրաստուին:

Ազեքսանդրիա մեծ մասամբ կ'ըմբռնին Իփէկեան Սիկարէթները, որոնք նաև եգիպտական մեծ կեդրոններու մէջ կը գնահատուին:

Գահիրէի ամէն ծխավաճառներու մօտ կը գտնուին Իփէկեան Սիկարէթները: Գահիրէի Իփէկեան սիկարէթներու գլխաւոր վաճառատունը կը գտնուի Սինէմա Վիլլէի կից: Թոյլ տեսակներէն կը յանձնարարուին՝ Պորճա և Սրէսիալ: — Խիստ տեսակներէն (սէրթ) կը յանձնարարուին՝ Սամսոն Մատէն և Սամսոն Սրէսիալ:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Եգիպտահայ Տարեցոյց»ին հինգերորդ հասրն է ասիկա: — Ու պէտք կը զգամ քանի մը տող յառաջարանի:

Նախորդ չորս հասրները, զուցէ քիչ մը աղօս, անբաւական, բայց միշտ հաւասարիմ հայելիներն եղան իրենց արձանագրած եգիպտահայ տարիներուն:

Տեղական ազգային կեանքի դէպքերն այնպէս մը դասաւորուեալ էին որ անոնց խղճամիտ պատկերացումը՝ «Եգիպտահայ Տարեցոյց»ին Ա. Բ. Եւ Գ. Հասրներուն մէջ՝ մասնաւոր դիւրագրածութիւններ վրդովելու բնոյթը չէր ունեցեր:

Նոյնը չեմ կրնար ըսել Գ. Հասրին համար: — Բացառիկ ու կրֆոս շահագրգռութեան մը առարկայ եղաւ, անցեալ տարի, այս համեստ հրատարակութիւնը, «Ֆննադասական» կամուրթիւններ, բանակոտի վրիպած փորձ մը, Էնտէօի խուլ հրահանգներ յարուցանելով... Երեսոյքը, ո՛րքան ալ թելադրական, զիս անտարբեր կը թողար. . . Կը հասկնայի զայն, Եւ ա՛յդքանը կը բաւէր ինձի... Ո՛չ ոք լըջօրէ՛՛ պիտի մտածէր որ գրական չփաւոր փառասիրութիւնն ունեցած ըլլայի երբէք ապագայ սերունդներուն ըսել տարու. «Եգիպտահայ Տարեցոյցներուն հեղինակն էր»... Իմ յիշատակիս ըլլալիք այդ բօսքիւմ հասուցումը

գեղեզմանին մէջ անգամ պիտի խնդացնէր զիս... Միւս կողմէն՝ պարզ էր թէ — քրոնիկագրի չափազանց բարեխիղճ ըմբռնումի մը հետեւանով — այս էջերէն ներս սպրդած ո՛ր է ձախորդ նրամարտութիւն պիտի պատճառակէր եւ պիտի բացարէր առտուն-կանուխ ելլող «գրախօս»ներու ամբողջ ֆրեսազան աւիւնն ու ժխտական ծամաձուրթիւնները :

Արդ, «Տարեցոյց» մը գաղափարական պայփարի կամ փրօփականի միջոց մը չէ՛, այլ սոսկ ընկերային կամ աշխարհիկ հրատարակութիւն մը՝ ամէն հաշակի հանոյ, ամէն ֆիւմի դուրեկան ըլլալու սահմանուած : Պոուցիկ նշմարներու, մակերեսային հետաքրքրութիւններու, շահեկան մանրամասնութիւններու, ժպտուն փաստերու, լաւատես ծանօթագրութիւններու, համակրական մեկնաբանութիւններու, գնահատական ներկայացումներու, յանկուցիչ վերլիւծումներու, անմեղ ու գգուական յարադրութիւններու խառնուրդ մը, միջակութեան ակնածանձովն օծուած, մէկ խօսում՝ ժամանցի գիրք մըն է որմէ կը պահանջուի մարտողութիւն դիւրացնել անպայման, եւ ո՛չ թէ գլխու ցաւ կամ արտնային պատճառել :

Այս տեսակէտով՝ բոլորովին աւելորդ, նոյն իսկ անհարկի կը թուի այսօր ինծի եգիպտահայ ազգային կեանքի տարեկան հաշուեկէիւրը, որով պարտք սեպած էի բանալ այս հրատարակութեան նախորդ ֆառեակ հաստները :

Ուրեմն վնասաբար կը ջնջե՛մ «Եգիպտահայ Տարեցոյց»ին «Տարեկան Տեսութեան» այդ բաժինը, գոր էական կարծելու միամտութիւնն ունեցեր էի, եւ որ զիս հարկաւորաբար կը ստիպէր

յետադարձ սաժանելի վերլուծումներու : Մարդ ո՛րքան ալ առարկայակաւօրէն մօտեայ հանրային հրատարակութեան, չի կրնար «գոնացնել ամենիք եւ իր հայրը», ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիք :

Այսպէտով, «Եգիպտահայ Տարեցոյցը» էթէ՛ իբրեւ տարեգրութիւն, իբրեւ պատմանուէր տօթա՞տան՝ բան մըն ալ կորսնցնէ իր խորութենէն կամ ծանրութենէն, իբրեւ անմիջական օգտակարութեան ձեռնարկ՝ աւելի շահաւոր դուրս կուգայ, ապահովաբար :

Արագ գործողութեան այս տեսակային ու նետասպառ օրերուն՝ ետեւ դառնալու եւ անձկոտ խոկմունիներու մէջ յամենալու կեցումովը արդէն չի պիտի հրապուրէր մեզի : Եւ եթէ տուած չէ մեզի տարեցոյցագրութենէ տարբեր ու լաւագոյն դերի մը յաւակնիլ այս մեծ ժամուն, գոնէ գիտնա՛նք խնդումներեւ հանդակասարութեամբ կատարել մեզի վիճակուած անփառունակ գործը, ըստ առածին թէ՛ «Չի՛կայ յիմար արուեստ»... :

ՍՈՒՐԵՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

KODAK (Egypt) Ltd.

ԱՇԽԱՐՀԻՍ ՄԵԾԱԳՈՅՆ ՏՈՒՆԸ

ԼՈՒՍՍՆԿԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՒ ԵՒ ՊԻՏՈՅՔՆԵՐՈՒ

Գանձիւրէ, Place de l'Opera

Աղեֆաանդրիա, 30, Rue Cherif Pacha



Եգիպտանայոց Առաջնորդ Գեր. Թորգոմ Եպիսկ. Գուռակեան

ԱՌԱՋՆՈՐԴՆԻՍ - ԱՌԱՔԵԱԼ

ՈՒՇԱԳՐԱԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ ՄՇ

Վերջացող տարուան եգիպտանայ ամենաուշագրաւ երեւոյթներէն մին եղաւ մեր Առաջնորդ Սրբազանին բացակայութիւնը:

Գեր. Թորգոմ Եպիսկ. Գուռակեան թերեւս իր առաջնորդական ներկայութեան ամենէն սրառուշ կեցուածքովն իսկ այնքան հմայած չէր իր հօտը՝ որքան իր առաքելական բացակայութեամբը կրցաւ զայն յանկուցանել:

Մեկնումները, բաժանումները, հեռակայութիւնները չ'ս գիտեր ի՞նչ ողորիչ բան մը ունին, արգէն, որ բացական կարօտելի, ցանկալի կ'ընծանէ ներկաներուն, և փոխադարձաբար, նո՛յն իսկ երբ անոր ու ասոնց միջև համակրութեան կապերը թուլցած ըլլան:

Թորգոմ Սրբազանի պարագային հոգեբանական այս գիտողութիւնը գերազանցապէս կը պատշաճի: — Նորին Սրբազնութիւնը այն հզօր անհատականութիւններէն չէր որոնք երբեմն շերմեանդ բարեկամներ ու միշտ մտնուանդ հակառակորդներ կ'ունենան: Միջին ճամբաներու, միջակ միջոցներու, առձեռն գործերակերպերու մարզն էր՝ որ եգիպտոսի մէջ քիչ մը միամիտ սխալանքը կ'ունենար ինքզինքին վերագրելու տարապալման նրբամտութիւն մը, կարող զինք վեր ու անխոցելի պահելու մեր անդական երկու գլխաւոր ընկերային հասանքներէն, հո՛ս համոզում մը լռելով, հո՛ն խղճահարութիւն մը կուլ տալով, անդին ժպտուն առնուշադրութեան մը գիշանելով:

Ու պատահեցաւ ինչ որ անխուսափելի էր: — Աջակողմը, որ արդէն կը հանդուրժէր միայն իր «անկողմնակալութեանը», զինք որ մը թողուց մարեգնութեանը տակ ձախակողմին, զոր կը ջգադրուէր իր անվճարականութիւնը:

Յանուն ամենասուրբ «Երրորդութեան» — ակննջը խօսի՜ Բրուտեան Մարտիկ աղային — Եգիպտահայ Առաջնորդութեանէն հրաժարած՝ Թորգոմ Սրբազան իր պաշտօնին վրայ մնաց, թէև «առժամեայ հանգամանքով», մինչև որ՝ իբրև հայրապետական պատուիրակ՝ մեկնեցաւ դէպի Հնդկաստան:

Այդ միջոցին, եգիպտահայ միջնորդը հրաշիւք իմն պայծառանալ սկսեր էր արդէն: Համերաշխութեան հոգեպարար շունչը կազդուր կը սփռէր ամենուս վրայ... Սրբազան Առաջնորդին՝ Պուլազի իր մինաւոր գիշերներուն մէջ՝ պահ մը փորձուեցաւ մտածել թէ արդեօք իր հրաժարումին կը սպասուէր Նեղոսի ափերուն վրայ իրազօրծելու համար հայ սրբազան միութիւնը... Դիպուածի խնդիր, աշխարհիս բաներուն հեզնութիւնը սո՛սկ... Սրբազանը չափազանց իրազեկ էր հայկական անցուդարձերուն՝ մերամողձտ ու մուսլ խորութիւն մը տարւ համար, այդ առթիւ, իր մեկուսի խօսմունքներուն...:

Եգիպտահայ ազգային-վարչական մարմինները, թէև առանց խանդավառութեան, բայց վերջապէս պարտուպատշաճ հոգածութեամբ, նկատի պիտի առնէին Սրբազանին «հրաժարման» հարցը, և մինչև հնդկական ափերը անոր հետ հեռագրական բանակցութիւններ ունենալով՝ պիտի լուծէին առկախ կնճիւր... Թորգոմ Սրբազան, որ կիրքի մարդ, այլ մանաւանդ կիրքերու մարդը չէ՛, բարեհաճօրէն պիտի վերստանձնէր Եգիպտահայոց Առաջնորդի իր հանգամանքը, որ կը թուի թէ անհրաժեշտ շառափ մը կ'աւելցնէր իր առաքելական պաշտօնին՝ Հնդկահայ Գաղութին մէջ... Միայն Մարտիկ աղան հոս յուստենական անդոճի մասնուած պիտի մնար՝ «Մուրր Երրորդութեան» առունով երգմնազանցութեան մը իր միտիքական մտուղիւններուն մէջ...:

* * *

Գեր. Թորգոմ Եպիսկ. Գուշակեան վատահ ենք թէ լուսադոյն տպաւորութիւնը գործած է մեր հնդկահայ եղբայրներուն վրայ, ինչպէս, տարիներ առաջ, Կովկասի մէջ ալ հաճելի ու համակրելի անցորդ մը հանդիսացած էր:

Նիւթական հունձքը, զոր իր առաքելութիւնը քաղած պիտի ըլլայ հոն ի նպատակ ազգին ազգատեղիներուն, եթէ ոչինչ աւնի ակնկալուածին պէս առասպելական, բայց անշուշտ երախտիքի մեծ ու տեւական փրօցոս մը կ'ապահովէ Գուշակեան Սրբազանին:

Կը մազթենք որ Նորին Սրբազնութիւնը յաջողած ըլլայ հայկական ցուազին ու անդրժեղի եղբայրութեան զգացումը ներշնչել ցեղին այն հեռաւոր բեկորներուն որոնց այցելեց:

Մենք հոս Առաջնորդ Սրբազանին բացակայութիւնն աւազել տուող եթէ չունեցանք ո՛ր և է ներքին խնդիր, իր հեղանոյշ ու կշռաւոր խօսքին կարօտը քաշեցինք կարգ մը հանդիսաւոր առիթներու մէջ, ուր իր մարգարտաշար բառերը այնքան վայելչութիւն պիտի կերտէին:

“COMET PHOTO STUDIOS.”

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՃՈՎ

ՎԱՅՐԿԵԱՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՍՏԳԻԻՏ ՃԱՇԱԿ

«Քօմէթ» Լուսանկարչատան յաջողութիւնը նուիրագործուած է Ամերիկայի Միացեալ-Նահանգաց մէջ: Իսկ Եգիպտոս իր մուտքը յեղափոխութիւն մը եղաւ լուսանկարչական հրապարակին վրայ:

Դիմել՝ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ, Հիմ Պօրտալի փողոցը, Իսկ ԳԱՀԻՐԵ՝ Օբեբայի Հրապարակը, Զօհէպ կալուածին տակ:

ԲՕԼ ՎԷՐԼԷՆԻ “ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ”ԷՆ



I

Ո՛վ իմ Ասուածս, Գուն խոցեցիր զիս սիրով,
 Ու վերք դեռ կը կոսայ.
 Ո՛վ իմ Ասուածս, Գուն խոցեցիր զիս սիրով.
 Ո՛վ իմ Ասուածս, Երկիւղը զիս հարուածեց,
 Այրուցքն հոն դեռ կը մըխայ.
 Ո՛վ իմ Ասուածս, Երկիւղը զիս հարուածեց.
 Ո՛վ իմ Ասուածս, ամեն բան գարե է, գիցայ,
 Ու փառքը մէջս բազմեցաւ.
 Ո՛վ իմ Ասուածս, ամեն բան գարե է, գիցայ.
 Գինույդ ալեաց մէջ ողորէ՛ իմ հոգին,
 Զանգէ՛ իմ կեանքս սեղանիդ սուրբ Հացովն.
 Գինույդ ալեաց մէջ ողորէ՛ իմ հոգին.
 Ահա՛ արիւնքս, զոր բափել չը կըրցայ,
 Ահա՛ մարմինքս՝ քանջանքի անարժան.
 Ահա՛ արիւնքս, զոր բափել չը կըրցայ.
 Ահա՛ նակասքս, որ շիկնի՛լ գիցցաւ լոկ,
 Քու պաշտելի ոսկերուդ սակ պատուանդան.
 Ահա՛ նակասքս, որ շիկնի՛լ գիցցաւ լոկ.
 Ահա՛ ձեռներս, որ չը կըրցան աշխատիլ,
 Ածուխ հրանուս եւ ընտիր խունկ նեններման.
 Ահա՛ ձեռներս, որ չը կըրցան աշխատիլ.
 Աւասիկ սի՛րսս, որ բաբախեց ընդունայն,
 Գողգոթայի քանակներուն վրայ տոփուն.
 Աւասիկ սի՛րսս, որ բաբախեց ընդունայն.
 Ահա՛ ոսկերքս, նանրագնաց ուղեւոր,
 Շնորհահրաւեր ձայնիդ յօծար նեամուս.
 Ահա՛ ոսկերքս, նանրագնաց ուղեւոր.
 Աւասիկ ձայնքս, խրդուրտիւն նենգ՝ սրխեղծ,
 Ապառաւի կըքամքանքին առջեւ լուռ.
 Աւասիկ ձայնքս, խրդուրտիւն նենգ՝ սրխեղծ.

Ահա՛ աչքերս, մոլորանքի լապտերներ,
 Աղօթայոյց արցունքներէ շիջանուս.
 Ահա՛ աչքերս, մոլորանքի լապտերներ.
 Եղո՛ւկ, Ասուած ողորմութեան՝ սիրոյ, Գուն,
 Ապախութեանս անդրնդախոր այն վիրապն,
 Եղո՛ւկ, Ասուած ողորմութեան՝ սիրոյ, Գուն,
 Արհաւիրքի՛ Ասուած, Ասո՛ւած սրբութեան,
 Ոնիրներուս, աւա՛յլ, այն վիհը մըքին,
 Արհաւիրքի՛ Ասուած, Ասուած՝ սրբութեան,
 Երջանկութեան՝ խաղաղութեան Ասուած, Գուն,
 Բոլոր վախերքս, բովանդակ անգիտանքս,
 Երջանկութեան՝ խաղաղութեան Ասուած, Գուն,
 Գո՛ւն այս ամե՛նը, այս ամե՛նը գիտես,
 Եւ թէ մարդոց մէջ ամենէն նեքն եմ ես,
 Գո՛ւն այս ամե՛նը, այս ամե՛նը գիտես,
 Բայց ունեցածս, օ՛հ, Ասուած իմ, կուտամ Քեզ:

II

Ունայն ու բիրտ եր հին հոգին.
 Ան, վիշտին մէջ կը տեսնե՛ր լոկ
 Դաժանութիւնն ըզկըծանքին
 Կամ անքեքին զարմանքն անհոգ.
 Արուեսն, անոր ձեռն է՛ն յրսակ,
 Զոյգ մ՛ըզգացմունքն այս կը ցուցնէ
 Երկու շքեղ սիպարի սակ
 Մօր մ՛եղած սր վրճաց դրժնէ.
 Մին՝ ծեղ դրժան է Տրովայի.
 Զարկեր է սուրն որդիքն անխնայ.
 Կը հաչէ սուզն այն ամենի,
 Ու ծովեզրին վըրայ կ՛ոռնայ.
 Ափունքին վրայ կ՛վազէ վեր վար
 Փրփրոս ալեաց դեմ կ՛ժայթէ բուխ,
 Կը կաղկանձէ վայրագաբար,
 Շուն իրական, ինքնայատուկ.

Միւսը, Նիոբէն, որ, շրվորուն,
Կը սեւեռէ աչքն անտեր,
Գեղեցկաշար սալաբերուն.
Գիբ գաւկրներն են ըսպաներ.

Կ'ըսպառի շունչը շրքանց վրայ,
Կը մեռնի խօլ շարժմամբ մ'յանկարծ.
Ա՛յ մարմարին մ'է անըզգայ,
Չես գիտեր հոն ո՛ւսկից բերուած.

Քրիստոնեական վիճակն է անկուն,
Ինչպէս մարդուն սիրեն ինքնին. ան
Կը սառապի. յետոյ, խոհուն,
Կ'սանի յառաջ, լուս, իր համբան.

Գողգոթային վրայ կանգնած,
Արտասուալից, անմուռնչ, այլ խոց
Մայր մըն է ան, ա՛ն, սրտագգած,
Բայց ի՛նչպիսի մայր ի՛նչ որդուց.

Կը մասնակցի ան Տանջանքին,
Որ կը փրկէ ազգերն համայն,
Չոնին սալով գորովագին
Կարեկցութիւնն իր անսահման.

Եւ զի ամենին իրեն որդի
են, աշխարհի վրայ համօրէն
Ամբողջ իր գուրը կը յորդի,
Իր սրտի եօթը վերհերէն.

Բա՛րէ, փառքի օրն այն, երբ
Բացուի երկինքն յանկարծօրէն,
Որոնք եղան հաւատաւոր
Հեզ, բարի, բացի միայն Չարէն,

Անոնք, դեպ ի բերկրանքն յաւէ
Սիոնի սուրբ բլրին վրայէն,
Պիտ' վերբուեն երանաւէս,
Կառչած լողկին աննիւթեղէն:

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ԾԵՐՈՒՆԻՒՆ ԱՂԱՂԱԿ

(ՆՈՐԱՎԷՊ)



«Վարագոյրները վեր առ, Կարապետ: Թիկնաթոռս
այ պաշգամը հանէ, հոն պիտի նստիմ»:»

Մայիսի գաղջ առտու մըն էր: Օդին մէջ թռչուն-
ներու թեւերուն և պարտէզներու դեռածիլ տերեւե-
րուն վրայէն հով սարսուռ մը կը պատէր: Ամէն բան
կարծես ուրախութենէ և երջանկութենէ կ'արտասուէր:
Էակաները կեանքի առատարուխ երանութեան բեռին
տակ կը հեծէին: Անգիի փողոցէն՝ վին ուսանող երի-
տասարդի մը նուագարանին մէջ մարած մրմունջներ
կուլային:

Մերունի տանուտէրը, Պ. Միքայէլ, ուզեց պա-
տուհանէն դուրս նայիլ. ատօր համար է որ պատշգամը
եղալ կ'ուզէր: Սպասուորը աթոռը տարաւ, և Պ. Մի-
քայէլ գուրը նստեցաւ: Պատուհանէն դուրս նայիլ.
ահա բան մը զօր շատ անգամ առիթ չեն ունենար
ընելու անկողինին գամուած ծերեր, որոնք հիւանդկախ
են և քիչ մը անգամալոյժ:

Եօթանասունը անցուցած ծերունի մըն էր Պ. Մի-
քայէլ: Տարիներով սեղանաւորութիւն ըրած և բաւա-
կան տոկոս հարստութիւն մը գիլած էր, որմէ տուտ
բաժին կը հանէր կարօտեալ ազգակիցներուն: Ամուս-
նացած չէր. այրի մնացած քոյր մը և անոր տասներ-
կու տարեկան մէկ մանչ զաւակը. ահա իր բոլոր ըն-
տանիքը: Ամուրիութիւնը մարդը կը դառնացնէ ու
կը խտացնէ. ընտանեկան գորովի և երջանկութեան
յարատեւ բացակայութիւնը վերջը վերջը գրեթէ մար-
դատեաց կ'ընէ մարդս, և բաւական անզգայ. Պ. Մի-
քայէլ բացառութիւն մըն էր. շատ զգայուն և բարե-
համբոյր անձ մը:

Վերջին մէկ երկու տարուան մէջ հայ հայրենիքին
պատահած սոսկալի աղէտքները ժամանակէն առաջ
վատուժցուցած էին զինքը. վասն զի քաջասողջ ծե-
րունի մըն էր:

Հիմա համակերպութեամբ կը պատէր ամէն բանի
վերջին համեմուն:



Handwritten vertical text: 1393/2-67

Փողոցը նայեցաւ: Իր բնակարանէն երկու տուն վար, իշու մը լծուած սայլ մը կարասիներով կը բեռ-
ցընէին: Կենդանիին ականջներէն գարիի պարկ մը
կախեր էին. կ'ուտէր, կ'ուտէր, կ'ուտէր: Բեռնակիր-
ները հետզհետէ բերին զհանգեցին սայլին մէջ՝ նախ
գարգիճի ձողեր, յետոյ հեշտագարաններ, սնտուկներ,
պահարաններ, խոհանոցի անօթներ, մահիճներ, զա-
նազան կահ կարասի: Իւրաքանչիւր զետեղումի, համ-
բերատար անասունը, սակայն, ծամելիքը երբեքնելով
հանդերձ, քովընտի նայուածք մը կ'արձակէր բերուած
և իր քաշելիք անդրուվարին վրայ գրուած տուրկա-
ներուն, ականջները թօթուելով և պոչը երկուստեք
շարժակելով: Կ'երեւայ թէ, իր տխմար անասունի
մթին ուղեղին խաւարին մէջ, կը հաշուէր գումարը
ծանրութեան զոր պիտի յոգնէր, և զժգոհութեան
կայծ մը կը վառէր սե խոշոր աչուրներուն մէջ: Բայց
յարգը կար հիմա, գարին կար, ախորժակ ունէր, և
անօթի չէր մնար: Ասոր համար, հաւանականաբար
կը մտածէր որ իր տէրը, որ քիչ մը չափազանց կ'աշխատ-
ցընէր զինքը, սակայն կերակուրն ալ պակաս չէր ընէր:

Ո՛վ որ կ'աշխատի՝ կ'ուտէ. ո՛վ որ չաշխատի՝ չուտէր:

Հիմա սայլը պիտի լեցուէր և ճամբոյ պիտի ել-
լար: Տուն մը պիտի փոխադրուէր ուրիշ տուն:

Եւ Պ. Միքայէլին մտքին աչքերուն առջև սարսաե-
ցուցիչ պատկեր մը մարմին առաւ:

Այդ փոխադրումի գործը ուրիշ փոխադրումներ
յիշեցուց իրեն, որոնք տեղի ունեցան և կ'ունենան հե-
ռաւոր մարզերու մէջ, զէպի արեւելք, երկրի մը մէջ
որ իր հայրենիքն էր:

Ու նայուածքը պղտորեցաւ, մշտագետց: Երեւա-
կայեց տուններնին տեղերնին թողլով ճամբայ իյնող հայ
ընտանիքները, շատ անգամ թողլով նաև հոն իրենց
բոլոր ինչերն ու կահ կարասին, երբեմն քանի մը սե-
րունդներէ իրենց կտակուած թերափներ: Յետոյ ան-
ջրդի անապատներու եզերքը ժամանումը, պատուտած
կոշիկներով, քուրջ գարձած թերաքամ հագուստներով,
մինչդեռ մանուկները կուլային ու կը հեծկտային, և
կուլային ու կը հեծկտային նաև մարգակերպ գաղան-

ներու ոտքը իյնող և աղաչող պաղատող զեռահասակ
կիներ և աղջիկներ զոր ձեռքէ ձեռք կը յափշտակէին
կը հափափէին. այո, ոտքերնին իյնալով և աղաչելով,
և քովընտի աղեխարշ նայուածք մը արձակելով իրենց
մայրերուն և հայրերուն, որ զիրենք չէին կրնար
պաշտպանել, որ սակայն սակէ առաջ, երբ իրենք
Ջերմահար հիւանդ պառկէին, օրերով գիշեր ցորեկ
անքուն կը մնային իրենց սնարին քով, սփոփանքի ա-
նուշ խօսքեր ուղղելով. «Ձէ, զաւակս, վաղը կ'անցնի.
բան մը չէ. ամենքս հոս կեցեր ենք. ի՞նչ կ'ուզես ըսէ,
բերենք:» Հիմա բառ մը չէին ըսեր անոնք. լեզուին
կապուեր էր. ակուններնին իրարու փակած, արցունքի
աղբիւրը ցածքած, սոսկումէն գիւհար, անգամ մունքէ
մոխրագոյն կանաչ: Յետոյ աղանցումը բուրբովին մերկ
կիներու, չկրնալով քաշել, անօթի ծարաւ, գոնչող
խարազանին խածատումներուն տակ սրսփալով, կըռ-
նակներուն վրայ կարմիր կապոյտ գիծերով, հարուած-
ներուն հետքերը: Յետոյ մեկուսացումները՝ հրացանի
բռնուելու կամ ջուրը նետուելու համար. և վայնա-
սունները, վայնասունները, վայնասունները:

Ասոնք և սասնց նման աղեճմիկ պատկերներ կ'անց-
նէին հապշտապ ծերունիին մտքին առջեւէն: Եւ յիշեց
իր պատանեկութիւնը, երկար երկար տարիներ ա-
ռաջ, այն ժամանակը որուն մէջ ապրող իր ազգական-
ներէն և ազգակիցներէն գրեթէ ընաւ մարդ չէր մնա-
ցած: Յիշեց Չատկի և Մնունգի աւտուները, իր ըն-
տանիքի անդամներուն լուսերես գուարթութիւնը, հագ-
ուած շքուած, անուշահոտ, մաքրափայլ, որ եկեղեցի
կ'երթային, ամենքն ալ, նոյնիսկ ծերերն ու պառաւ-
ները, սուրբ խորհուրդներու յաճախումէն խնկարոյր
պառաւները. պատարագի արարողութիւնները, բարձ-
րաստիճան եկեղեցականները, պատրիարքները, փառա-
ւոր նահապետական մօրուքով, սակեթել աթիւնեալ,
ոսկի արծաթ գանձակներով մարգրտայեռ գմբխտակու
չուրջաներով, եմփորոններով, սաղաւարաներով. և
քարոզները որ կը լացնէին, և հոգեւոր երգերը որ ար-
ցունքներ կը խլէին աչքերէն. և բուրուսաներու ճօ-
ճումները որ կնգրկարոյր ամպիկներ կը վերառաքէին:

և գոյնգգայն վառ պատուհանները սուրբ տաճարին, որոնց մէջէն կ'երկնային շամանդաղով և խունկի ծուխով գերյագեցած լուսափաղփ փողեր, և քշոցներուն ու ծնծղաներուն խլացուցիչ և ընդարմացուցիչ զիւ շփնդը, որ սահայն հոգիներուն թեւեր կը կապէին գէպի վեր, գէպի վեր, գէպի Անմահը բարձրանալու համար:

Եւ Պ. Միքայէլ մտածեց որ, Թուրքիոյ ոստանէն դուրս ալ, ամէն ուր որ Հայը կ'ապրէր, նմանօրինակ երանութիւն մը կը թեւածէր, յոյսը կը պտտէր մ'Թնուրտին մէջ. տաճարները տօնի օրերը հաւատացեալներով կը լեցուէին. տուները բարիքներով կ'առատանային. աղքատներուն դուռները ափ կ'առնէին մխիթարութիւն և օգորմութիւն, և անոնք ալ երջանիկ էին. գթած Աստուած մը կը թուէր սաւառնիլ կապոյտին մէջ՝ ամբապինդ պաշտպան բազուկները ամենուն վրայ տարածած:

Հիմա այս ամենը չքացած էր, մեռած: Աղօթքը մեռած էր աղօթատեղիին մէջ, ուր գերեզմանատունի մը լուսթիւնը կը թագաւորէր. տուները այրած կործանած, անբնակ դարձած կամ օտարակրօն խուժադուժ արարածներու բոյն դարձած. պարտէզները կոխոտուած, մոխիր հագած՝ կարծես սուգի համար. շտեմարանները գետնաքարշ, փտած բորբոսած. սրսկապանը վայրի երէններու սրջերու փոխարկուած. խաղաղի հոյզի թակոյկները աղբիւսով լեցուած խեղզուած. համբարները կըրած կամ այրեացուեր, և օճախը մարած:

Ո՞ւր գացեր էին բնակիչները. այդ վայրերուն կեանքը ո՞ւր էր գացեր. ե՞րբ, ո՞ւր մեկներ էին ծերերը, հուժկու այրերը, զաւակները, թոռները, սրտաշարժ կերպով վարդուշուշան հարմներն ու աղջիկները:

Եւ Պ. Միքայէլին ցաւատանջ ու մարգարէական բերանը գոռաց սասանեցնող աղաղակ մը, որ կը թարգմանուէր.

«Չէ՛, աս ուրիշ բան է. չէ՛, ասկէ առաջ եղածներուն չի նմանիր աս: Դժոխքն է երկրի վրայ փոխադրուած՝ մեր ցեղը լափելու համար: Կարապետ, եկուր սա կոնակիս բարձը շտկէ: Չէ՛, այս սոսկումը բովանդակ պատմութեան մէջ չըսուած չտեսնուած բան է:

Աստուած անգամ, եթէ ժամանակ ունենար տեսնալու, պիտի զզջար թող տալուն համար որ այս ամէն բաները ըլլային: Ինչո՞ւ համար կոնակէս վար կարծես կրակ կը թափեն կօր: Կարապետ, գաւաթ մը ջուր բեր: Ամենքը իրար անցնելու են. ողջ մնացողները փողոցները ճամբաները իյնալու են, հեռուօր տեղեր վազելու են՝ ամէն ուր որ մեր թշնամիները կ'ապրին, և տասը մատուրներովին խղզելու են զանոնք. կիներն ու աղջիկները իրենց մագերթով չուան հիւսելու են՝ խեղդամահ ընելու համար: Հարուստները իրենց ունեցածին կէսը տալու են. միւսները օրը անգամ մը, երեք օրը անգամ մը միայն հաց ուտելու և իրենց սովատանջ եղբայրներուն հաց ղրկելու են: Սուգ ընելու ենք. երկար ծամեր պահելու ենք. տախտակներուն, հոգերուն վրայ պոսակելու ենք: Ծովերէն անդին երթալու և մեր հեռուօր ազգակիցները, որ կը քնանան, արթնցնելու ենք: Հին աշխարհը նոր աշխարհին, նոր աշխարհը հին աշխարհին պատգամաւորութիւններ զրկելու են՝ իրար անցնելու համար: Կարապետ, վերարկուս բեր, կը մտիմ կօր: Մեր քոյրերը, մեր աղջիկները անապատներուն, դարուփոս ամայութիւններուն մէջ մերկ կը քալեն կօր եղեր. կը հասկնա՞ք, մերկ. աշխարհի գատախաղներուն մէջ Հիպերիոյ մը չպիտի յառնէ՞ այդ Փոլինէներուն ամօթահար գեղեցկութեան տեսարանովը երկրիս իրաւարար վրիժառու գատաւորներուն ապշած գթութիւնը և աղատութեան հրամանը կորզելու համար: Չըլլալէք բաներ են ասոնք. մարդուս ուղեղը կը սառի, և կը ջերանայ: Սոգամի և չորս քաղաքներուն վրայ կրակ տեղացնող Աստուածը երբէ՞ ի վեր է որ կը քնանայ կօր: Կրակով այրեցին, ջուրով խեղդեցին, անօթութենէ ծարաւէ մեռցուցին, յոգնութենէ զրաւեցին, լլկանքներով սպաննեցին. ո՞ւր, ե՞րբ տեսնուած է որ այսչափ անլուր ոճիրներ անպատիժ մնան: Ե՞րբ պիտի գայ դատաստանին ահագին օրը:»

Այս աղաղակը պոռալէն յետոյ, լուց. մարած էր: Կարապետ և տանը մէջ եղողները պատշգամը վազեցին եկան, ու ներս տարին Պ. Միքայէլը՝ շալկելով:

Յ. ՍԵԹԵԱՆ

ԱՆՃԵՏԱՑՈՂ ԴԵՄՔԵՐ

ԳԱՌՆՈՒԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Եգիպտահայ Գաղութը արձանագրուելիք ու շագրուելու անհրաժեշտներ չունեցաւ, բարեբաղդարար, այս տարի: Անհետացող գրեթէ միակ տիտնաւոր դէմքն եղաւ Տիար Գառնուկ Յովակիմեանը, որ արդէն բաւական առնէ ի վեր հրապարակէն քաջաւած, խոր ծերութեան հրաժարական անդորրութիւնը կ'ապրէր, Ֆակիրալայի իր բնակարանին մէջ, և ամառը՝ քանի մը ամիս՝ Գանատը-Սէզարի ծովափին վրայ, հազիւ անգրադառնալով զինք շրջապատող ընտանի գուրգուրանքներուն:

Հանգուցեալը եգիպտահայ գաղթային ուսման անհրաժեշտ վերջին նմայը կարելի էր նկատել: Խախտելով իր փառայի օրերէն եգիպտոս գաղթած, նախ իբրև սկիւրիչ, պորահայ այդ պատուական արհեստակցութեան արժանաւոր ներկայացուցիչը հանդիսացած էր խախտական ուստանին մէջ, և հետզհետէ բարգաւաճելով՝ յաջողած էր այս երկրին հարստութեան ընական գաղտէն, Ֆէսսանէն քաղել նիւթական պատկանելի հունձք մը, զոր չի փորձուեցաւ երբէք բնայրին ծովերը նետել կամ զեղիսութեան հովերուն տալ:

Գանչէլէր Գրիգորին պէս, ժողովրդականութիւն չէր վայելեր, և համայնքին զոհաբերական ձեռնարկները առիթ կ'ըլլային իր վրայ հրաւիրելու մեղադրական ուշադրութիւններ: Բայց ժողովուրդը, որ իրենց կենդանութեանը չի ծափողջունեց զանոնք, երկուքին ալ յիշատակը կ'օրհնէ այսօր: Վասն զի առաջինը կարեւոր կտակ մը ձգեց ազգին, իսկ երկրորդը կը թողու զաւակ մը որ կենդանի կտակ մըն է ինքնին, իբրև բարիքի անսպառ ու անպատիր աղբիւր՝ իր պատկանած հասարակութեան և իր բազմակարօտ ցեղին համար:

Տիար Հապիպ Յովակիմեան, հանգուցեալ Գառնուկ Յովակիմեանի միակ ժառանգորդը, որուն համակրելի դիմոտուները կուտայինք անցեալ տարի այս էջերուն մէջ, արդէն իսկ մեծ ժողովրդականութիւն

կը վայելէ եգիպտահայ ընկերական բոլոր շրջաններուն մէջ անխտիր, ամէն հանրագուտ գործի սատարելու իր պարզուկ ու սիրայօժար արամադրութեամբը: Գահիրէի Ազգ. Վարչութեան անգամ, Նպաստամատուցի զանձապետ, անիկա շատ մօտիկ է հիմա ազգային ցաւերուն ու կարիքներուն: Նպաստամատուցին անցեալ տարի ընծայած 600 ոսկիէն յետոյ, այս անգամ 400 մըն ալ կը նշուի իր Բարեգործականին, առանց հաշուելու հրապարակի վրայ գործող միւս բոլոր մարմիններուն ըրած իր վերջին նուիրատուութիւնները:



Տիար Հապիպ Յովակիմեան

Կենդանի կտակ մը կ'ըսէի, բայց Տիար Հապիպ Յովակիմեան, դեռ առայգ երիտասարդ, գահնձ մըն է՝ եգիպտահայ ներկայ ու ապագայ բոլոր ազգագուտ ու հայրենանուէր օժանդակութեանց տեսակէտէն:

Եւ թո՛ղ զարմանալի չի թուի, եթէ զաւակին վեհանձն ժէսթերէն բարոյական հատուցումի բաժին մը հաննը հօրը յիշատակին:

Տիար Գառնուկ Յովակիմեանի վերջին տարիներու մրավին ընդմիջելով երբ իրենները կ'իմացնէին իրեն թէ իր զաւակը այսքան գումար մը նուիրել է բարեկատուակ այսինչ գործին, ձերանին կը սթափէր իր թմբիւրէն և աչքերը քթթեղն կը յարէր.

— Իրա՛ւ... Ազգի՛ն տուեր է... Օ՛խ, օ՛խ... Աճեքի՛մ Հապիպ, աճեքի՛մ.

Այս վախճանական հաւանութիւնը իր օրդուոյն այլաօրական առատաձեռնութիւններուն՝ թեւազրական ու յանկուցիչ չէ՞ հանգուցեալին հոգեբանական հուսկ կերպարանքին տեսակէտով...:

ՅՈՐԴԱՆԻ ԿԱՄԱՐՆԵՐ

(ՆՈՐԱՎԷՊ)

Յիսնապետ Վարդան, Հեռեւակազօրաց III^o Գունդին մէջ կամաւոր, ծանրապէս վիրաւորուած, կը դարմանուէր Վ...ի զինուորական հիւանդանոցին մէջ:

Իր զինագծերուն տփզուէթիւնը ստուեր մը կը դնէր բարձին վրայ: Վրդովուած քուն մը փոխն ի փոխ կը պրկէր ու կը թուլցնէր իր մարմնոյն անդամները: Շրաքնէլէ մը փշրուած իր աջ սրունքին անդամատուէթենէն տասը ժամ յետոյ, ծայր տուած էր վիրական տենդը, որ կը հիւժէր իր շնչերակները: Զինուորական բժիշկին վճիռը անստոյգ էր: Ծայրատուածին ծայրայեղ վատումը, իր ջերմութեան աստիճանին տագնապիչ բարձրացումը հետզհետէ աւելլի ու ժգին հարուածներ կուտային այն վատահութեան զոր իրեն կը ներշնչէր այլապէս վարպետի ձեռքով իր վրայ կատարուած զործողութիւնը:

Գիշերը կոխած էր: Պատերու լամբարներուն պղզտոր գունտերը կը հոսեցնէին իրենց չքաւոր պայծառութիւնը, որ վերմակներուն վրայ գեղին սկաւառակներ կը յօրինէր և չորչարուած դէմքերու հարւամաշ դիծերը կը շեշտէր: Վիրաւորները խիստ բազմաթիւ էին: Առջի շարթուն սասաիկ կռիւներ մղուեր էին: Ամենէն թեթեւ զարնուածները կը գառանցէին, մատուընին ճիրանաձև պրկած և մարմիննին աղեղած: Ուրիշներ, տանջանքէ զգետնած, խուպոտ ճիշեր կ'արձակէին, գլուհարներու պէս գալարուելով: Անսահման սրահին անկիւնները, գեղերու պահարանները կը ցցուէին, և հիւանդապահուհիներու ամոյն զիմատուէրները կ'անցնէին ու կը վերանցնէին անաղմուկ:

Մեծ մասամբ երիտասարդուհիներ էին, և իրենց մօրթին թարմութիւնը, իրենց շնորհալի կեցումքները, վայելչութիւնը զոր կը պահէին իրենց միօրինակ չըջազգեստներուն մէջ, իրենց անձնուրացութեան յարգը կը կրկնապատկէին: Անոնք քրտնաթոր ճակատներու

վրայ կը պտտցնէին իրենց սպիտակ ձեռքերը, դեղաչուրերու դգաները կը շարժէին իրենց նրբին մասներով, կը ծռէին ու կը ծառանային ամէն վայրկեան: Ճերմակ գլխադիրներ կը սեղմէին անոնց յորդաւատ վարսերը: Մերթ ընդ մերթ ճիգի մը հեւասպառուժը բարախել կուտար իրենց լանջքերուն: Անոնց ժպիտին, անոնց սիրտարար ու կազգուրիչ խօսքին թովչութիւնը պատրել չէր գիտեր, և էրբ անոնք անկողիններուն շուրջը կը յաճէին, ամենազոյգն տրտունջին ու չաղիր, անխոնջօրէն անձնուէր, հիւանդներուն բիբերը անհուն երախտագիտութիւն մը միայն կը ցոլացնէին:

Եւ մինչ ժամերը կը հնչէին անտեսանելի պահացոյցէ մը, այդ հիւանդապահուհիներէն մին կը գտուէր իր ընկերուհիներէն, և՛ սրուակ մը ու ջերմաչափ մը բռնած՝ կը մօտենար այն քիչ մը հեռաւոր ու կղզիացած մահճակալին որուն վրայ յիսնապետ Վարդան թըմրած կը մնար: Մանկամարդուհիին հծծած խորհրդապահ կոչը նոյնհետայն կ'արթնցնէր հիւանդը:

— Պարոն յիսնապետ... Դեղերնիդ առնելու ժամն է...

Վիրաւորին ներս քաշուած կոպերն ու խոռոչացած այտերը կորսնցուցին իրենց սառած արապայտութիւնը... Պայծառութիւն մը բարեփոխեց այրացաւեր զիմակը: Հառաչանք մը մնչեց:

— Դուք էք, Օրիորդ Ֆանի...

Հիւանդապահուհիին ձեռքը կը դպէր իր ծնօտին, մինչ ժպիտ մը կը մեծցնէր անոր կապոյտ աչքերը: Վարդան բերանը բացու, ջերմաչափը ներս առնելու համար:

— Կ'աղաչեմ...

Մանրիկ գործիքը բռնած՝ յիսնապետին կը նայէր, յանկարծ խորունկցած նայուածքով մը... Յուզում մը կը ծփար իր կայտառ չրթներուն վրայ:

— Պահանջիտ էք, Պարոն Հայ... Բայց ես յարմարո՞ղ եմ...

Հիւանդապահուհին բացու իր չրթները, սպիտակ առկաններուն մէջ առաւ ջերմաչափը, ապա զայն՝ դեռ

տամուկ՝ դրաւ մաղձապատ լեզուին տակ վիրաւորին, որ հեւաց .

— Օ՛հ, մեռալի՛ . . .

Եւ մինչ այս տարօրինակ համբոյրը կը փոխանակուէր, Ֆանի արագ նայուածքով մը սրահը կը խուզարկէր, և վերմակներուն վրայ հանգչող կմախացած ու տենդավտա ձեռքը վերցնելով՝ անոր կը կաթնցնէր երկարօրէն իր ճակատը, խելայեղ գգուանքի ժէսթի մը մէջ :

* * *

Ի՛նչպէս այս սէրը մարմին առեր էր : Ոչ ոք անդրադարձեր էր ատոր, ա՛յնքան փափուկ ու զգուշաւոր էր ան : Ֆանին փարիզուհի մըն էր, համբաւաւոր գլխարկայարգար, երազուածին չափ նրբաճաշակ : Գերազանցապէս տաքբլուխ ու զգայուն, անիկա հրաժարեր էր իր սիրուն պաշտօնէն, և ինքզինքը նուիրեր էր զսոսորութեան ու պատուոյ գործին : Եւ յիսնապետին ազգութիւնը, անոր քաջասրտութիւնը, սրուն մանրամասնութիւնները լսուեր էին, անոր վիճակին ծանրութիւնը զինք անմիջապէս նուաճած էին : Եւ այս խոշոր, վիհերտ ու ամեհի տղուն համար — որուն անդամատուած հայրենիքն ու տարագրուած ցեղը ամբողջ Ֆրանսան կը շահագրգռէին — բուն ըզմանք մը համագրաւեր էր զինք խոտվագին : Գիտնա՛լ թէ ան զուակն էր ժողովուրդի մը զոր աղէտքն ու դժբաղդութիւնը չէին խորտակած, գիտնա՛լ, մանաւանդ, թէ ան, Ֆրանսայի կամաւոր, իր իսկ սեփական հայրենիքը ա՛յնքան կաթողին կը պաշտէր սրբան Ֆրանսացիներուն լաւագոյնը, ասիկա երազել տուած էր Ֆրանսուհիին իր կեանքը շղթայել անորին, ըլլա՛լ անոր համար կինը որմէ չեն զատուիր երբէք . . .

Յիսնապետ վարդանի կրած անդամատուութիւնը աւելի անդառնալի դարձուցած էր հիւանդապահուհիին վճռորոշումը : Անոր խեղութիւնը ա՛լ անհրաժեշտ կ՛ընծայէր իր գորովանքը : Անոր նեցուկը պիտի ըլլար : Պիտի աշխատէր, պիտի յոգնէր, որպէս զի բան մը չի պակսէր անոր : Եւ՛ փոխարէն՝ պիտի ունենար անոր բոլոր մտածումներն ու բոլոր մտահոգութիւնները : Ու-

րիչ ոչ մէկ կին պիտի դոյութիւն ունենար անոր աչքին, և Ֆանի պիտի ճանչնար երջանկութիւնը :

Բայց անակնկալ կնճիտին առջև՝ որ նենգօրէն կը սաստկանար, և որուն սպառնալիքը հետզհետէ աւելի կը շեշտուէր, 39 աստիճան տաքութեանը առջև՝ որ կը տեսէր 48 ժամէ ի վեր, դժնդակ երկիւղ մը խածած էր հիւանդապահուհիին սիրտը, և խեղճ աղջիկը բազմապատիկ անփութութիւններ կ՛ունենար՝ երբեմն անստգիւտ իր սպասարկութեանը մէջ :

* * *

Առաւօտ է, բայց յիսնապետին համար գիշերը կը թուի շարունակուիլ : Իր կողերը կը զարնեն, գաւրատանջօրէն : Կարծես թէ լոյսը չի հասնիր բիբերուն . . . Ձեռքերը կը շարժին իր գլխուն վրայ որ հետզհետէ աւելի կը մխրձուի բարձին մէջ, և կ'երերայ անընդհատ :

Գլուխը ձեռքերուն մէջ, Ֆանի կը ձգէ որ իր վիշտը պոսթկայ : Արեւի ճառագայթ մը, պատուհաններէն մէկէն ներս մտնելով, կը փողփողի դեղի սըրուակներուն վրայ որ անկողնին կից փոքրիկ սեղանը կը բռնեն : Հիւանդապահուհիին բռնկած ուզեղին մէջ, զինուորական բժիշկին ֆոսքը կը կատայ անդադրուած . . . «Ամէն յոյս կորսուած է . . . Փախաւոր յայտնուած է» :

Մահամերձին լանջքին վրայ խաչ մը կ'երեւայ, եռագոյն փոքրիկ ժապաւէնով մը կապուած : Նախընթօրին իսկ, իմանալով իր օրհասական վիճակը, զօրավարը այդ շքանշանը ընծայած է յիսնապետին, սպաներու ներկայութեան, կարճ ճառէ մը ետքը՝ ուր խօսքն ըրած է հայկական կտրձութեան ու անձնուիրութեան, և կանխաւեակով անընկճելի Հայաստանին վերականգնումը՝ համբուրած է հերոսական Հայրդիին երկու այտերէն . . .

Վարդան փռուած է կունակին վրայ, բիբերը խոլոր : Ընդհատ շնչառութիւն մը երբեմն վեր կը վերցնէ իր կուրծքը : Յանկարծ, կը դառնայ, և կը տեսնէ հիւանդապահուհիին որ կը հեծկտայ խելայեղօրէն :

— Օ՛հ, մի՛ լար, Ֆանի . . .

Ձերմը կ'այրէ զայն . . . Կօկորդը գոցուած է . . .

Ձայնը կը սուլէ ու կը մարի յաճախ... ձիգ մը կ'ընէ, ցաւի հոնդիւնով մը ասդին կը գառնայ, և իր աջ ձեռքը, կմախակերպ ու դողահար, երեսին կը հպի մանկամարդու հինն որ բոլորովին կը նուազի:

— Քեզի կ'ըսեմ որ չի բա... Ա՛լ յոյս չունիմ ապրելու, բայց կը զգամ թէ ամուլ պիտի չըլլայ իմ մահս, ինչպէս այն հազարաւոր էակներունը որ կ'ելնան իրենց հայրենիքին ապագայ փառքին համար... Ես միշտ սիրած եմ Ֆրանսան, այնքան որքան իմ ընտանիքս, որուն նսենն անձանթ է ինձի, և որ գուցէ այս բոլորիս գոյութիւն չունի այլեւս...

Հռեց: Քրտինքը կը վազէր ձակտէն: Վարդան կը հեւար: Աւելի տկար ձայնով, շարունակեց.

— Սրախ մէջ, Հայաստանն ու Ֆրանսան զիրար կը գրկեն երկու քայրերու պէս զորս ոչինչ պիտի կրնայ բաժնել... Մէկուն համար մեռնիլը միւսին համար մեռնիլ է... Տեսայ թէ ինչպէս կը պատերազմիք դուք... Կրցածս ըրի արժանանալու համար այն վտահոթեան և համարումին զոր ինձի ցոյց տուին... Այս խաչը լայնօրէն կը վարձատրէ զիս...

Համբուրեց գայն փղձկուժով:

— Եւ հիմա, վիշտի խօսք մ'ընե՛ր, զպէ՛ ինքզինքդ... Իրա՛ւ, մենք պիտի պաշտէինք զիրար, կեանքը մեզի համար լուսաւոր ու շրջուցիչ պիտի ըլլար... Ոչինչի առջև պիտի վարանէի քեզ երջանիկ ընելու համար... Մօտեցի՛ր որ շնչեմ քեզի, ինչպէս ծաղիկ մը, և յագենա՛մ քու տեսքէդ... Ահա՛ աւելի ազատ կը զգամ զլուխս... Տառապանքը կը հեռանայ ինձ, և տարօրինակ խաղաղութիւն մը, անդորրութիւն մը կը պարուրեն զիս...

Փանի սօքի երու, մոմխայի մը պէս պիրկ, ծոնցաւ մեռնողին վրայ, և իր շրթները, հեծեծանքով սարսուռն, անոր շրթներուն կառչեցան ինքնամատոյց...

Գանիբէ

Ե. ՇԻԼԵԱՆ(*)

(*) Տիար Ե. Շիլեանի այս սիրուն նորավեպը, մասնաւորապէս «Յիսուսի Տարեցոյց»ին համար գրուած, իր Ֆրանսերէն բնագրէն բարգմանելով է որ կ'ընծայենք մեր ընթերցողներուն: (Մ. Հ.)

ԱՆՏՐԷ ՌԻՎՈՒԱՐ(*)

ՀՈՎՈՒՈՒՅԻ ՄԸ ԿԱՐ ԱՏԵՆՕՔ...

(Թատերական պատմութիւն, մէկ արար, ոտանաւոր)

Առաջին անգամ ներկայացուած ի Փարիզ, Théâtre Français բեմին վրայ, 1905 Ապրիլ 7ին

Թարգմ. ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՏԵՍԲՐԱՆԸ

Պարակամէջ մը: — Ամենուրեք մացառուսք, ծառեր, քիլիկներ: — Չայս կողմը, առաջին գծի վրայ, ծառի մը ստորք, խոտ ու մամուռէ տեսակ մը անկողին՝ բուսներու մէջ ծածկուած: Աջ կողմը, առաջին գծի վրայ, գետին փուռած ծառի բուն մը, որ նստաւան մը կը ձեւացրնէ: — Փլիլած հին պատ մը, աջ կողմէն, առաջին գիծէն կ'երկնայ մինչեւ խորք դէպի ձախ: Այս պատին մէջ փոքրիկ դուռ մը կայ: Պատին վրայէն կը նշմարուի գարեգի մը բարեձու ծառեր:

ՏԵՍԻԼ Ա.

ՀՈՎԻԻԸ, ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Վարագոյր բացուելուն՝ Հովիւր եւ Հովուուհին նստած են իրարու հովիկ: Երկար լուսիլի մը:

ՀՈՎԻԻԸ

Եւ այսպէս ահա՛:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ուրիշ ոչինչ:

(*) Սոյն հեղինակին «Իոյզն Զօն»ը (L'Humble Offrande), Միհրան Տախտեանի գեղեցիկ բարգմանութեամբ, մեր նախորդ հասարակ գրական անտեսուած գոհարներէն մին կազմեց: Այս անգամ կուսանք Անտրէ Ռիվուարի գլուխ-գործոցին՝ Il était une bergère...ի բարգմանութիւնը: Պանվիլի «Համբոյր»էն ի վեր, այս սեռին մէջ, ոչինչ արժարուած է աւելի գողտրիկ: «Հովուուհի մը կար տեսե՞՞ք...»ը Գօմէի-Ֆրանսէզի խաղացուցակին ամենէն անյապօրէն սիրուած փոքրիկ հրաշակերտներէն մին է, եւ անոր հայացումը մեր ազգային բանաստեղծութեան համար ալ բանկազին ստացում մը կրնայ համարուիլ: (Մ. Հ.)

ՀՈՎԻԻԸ

Այո՛, այսչափ . . . Գոհ եմ ես . . .

Օղն աղուոր է, այս իրիկուն . . . Իրար ա՛յնքան կը սիրենք
Մենք երկուքս: Միասին ենք . լա՛ւ ենք այսպէս .

(Հովուունիին ձեռք կը բռնէ)

Կ'երազենք, սրտերնիս, բերաննիս ըսելքնեքով աւելցուն .
Մինչ բան մը չենք զրուցել, և կը մտածենք այս բոլորին,
Եւ ուրիշ ոչինչի կը զգանք պէտքը . . .

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Ձուարթէն)

Եւ պրծա՛ւ:

ՀՈՎԻԻԸ

Ի՞նչ պիտի կրճայինք ըսել իրարու . — թէ կը պաշտենք
Իրար .

Ես ատի գիտեմ, դուն գիտես ատիկա:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Գիտեմ, բայց նորէն ըսէ՛, — Կ'ուզեմ տակաւին:

ՀՈՎԻԻԸ

Դո՛ւն ըսէ:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Չէ՛, ըսէ՛, դո՛ւն . . . Սկսէ՛ . . . Մէկ . . . Երկու . . . Երեք . . . Այո՛ . . .

Առաջ դո՛ւն:

ՀՈՎԻԻԸ

Դո՛ւն:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Չէ՛, դո՛ւն . . . Ես պիտի ըսեմ . «Մեռա՛ի»:

ՀՈՎԻԻԸ (Գորովալիորէն)

Այո՛, կը սիրեմ, կը սիրեմ քեզի . . .

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Կեցի՛ր որ պատրաստ ըլլամ . . .

Կեցի՛ր . . . Ճակատդ դի՛ր ընծիկիս վրայ . . .

Աւելի վար . . . Հո՛գ . . . Ականջդ սրտիս սարսաղով . . .

ՀՈՎԻԻԸ

Այսպէ՛ս:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Աւելի ուժգին . . . Այո՛ . . . Լա՛է՛, հիմա . . .

Պէտք ունի՛մ բռնելու՝ որպէս զի տամ պատասխանդ:

ՀՈՎԻԻԸ (Գորովալիորէն)

Հոգի՛ս, իմ մէկ հատիկ սիրակա՛նս, իմ բաժի՛նս աչ-
խարհքէն:

(Կ'ուզէ ծուկի գալ անոր առջեւ)

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Ձայն բռնել արգիլելով)

Ո՛չ, քովիկս կեցի՛ր:

ՀՈՎԻԻԸ (Կամացակ մը անը ձեռքէն փառելով)

Քեզ տեսնելու համար աւելի լաւ եմ, ծունդի եկած . . .
Այսպէս . . . Ազէկ եմ, շա՛տ ազէկ . . .

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Անստոր ցոյց տալով)

Ի՞նչ աղուոր է մեր տեղը:

Ոտքերնուս տակ, սաղարթքէն հովահրուած ճակատնուս
վերև,

Անտառի այս անկիւնը կենդանի սենեակ մըն է կարծես,

Ուր արըշիտ սիրան աւելի լայն կը բացուի:

Հո՛ս, աւելի եւս քեզ սիրահարս կը զգամ.

Քեզի հետ միանդամայն ամէն ինչ ինձ կը խօսի . կ'ուս-
կընդրեմ

Տերև առ տերև փչող հովին, և, անդին, շիթ առ շիթ
Հոսող ազրիւրին լալակարկաջ,

Ա՛յնքան զովային որ գայն լսելով իսկ ծարաւդ կ'անցնի . . .

Հոս, ինչպէս քու ձայնդ, բոլոր ձայները քաղցր են:

Ապա, ելակի հոտ մը կայ ամէն կողմ, մամուռներուն մէջ
Որով թաթաւուն են մեր համբոյրները բերան բերնի . . .

Ո՛րքան լաւ ենք հոս, հանդարտ, հեռացած ամէն բանէ
Որ մեր սէրը չէ, ոչ ալ կապ ունի մեզի հետ.

Միայն երկուքս ենք հոս, ե՛ս որ կը սիրեմ քեզի և դո՛ւն
որ կը սիրես ինձի:

ՀՈՎԻԻԸ

Օ՛հ, այո՛, կը սիրեմ քեզի . . .

LONDON PHOTO STUDIO

10, Sisters Street - ALEXANDRIA

Սեփականստե՛ր՝ Մ. Ե. Ե. ԿԱԼՕԵԱՆ ԵՂՔԱՐՔ

Եթէ կը փափաքիք ձեր լաւագոյն լուսանկարն ու-
նենալ, լուսանկարուեցէ՛ք մեր մօտ օրուան ս'ևէ ժամուն:

Լուսանկարներու յանձնում 24 ժամէն:

Մտանագիտութիւն լուսանկարներու ֆօթի, ակ-
ուանսիսիսիսի և անպէտքի գործերու:

ԳԻՆԵՐԸ՝ ԽԻՍ ՊԻՐԱՄԱՏՉԵԼԻ

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Օր մը չէ օր մը, հարկաւ,
— Ամիսէ մը, վեց ամիսէն չեմ գիտեր քանիէ՛ն,
Թերեւս երեւցածին չափ հեռու չէ այդ օրը —
Պիտի սրջում տան մեզ ամուսնացնելու...

ՀՈՎԻԻԸ

Միասին...
Քու հայրդ պիտի չուզէ երբէք:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Անհո՛գ եղիք, հոգի՛ս,
Սիրուհին ու սիրահարը պիտի ըլլան կին ու այրիկ:
Մի՛ սիրող հասցներ, ես չեմ աճապարեր.
Չեն տեսնար, իրիկունը, թէ ճմրթկած է չըջազկեստս...
Մեր ի՛նչ փոյթն է իմ՝ ծնողքս և քուկի՛ններդ:
Ես կրնամ սպասել, դե՛հ, քանի որ քեզ կը պատկանիմ:

ՀՈՎԻԻԸ

Բայց եթէ բռնե՛ն մեզի, եթէ մէկը մեզ մատնէ՞:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Ոսփի ելլելով)

Մեզ բռնել, հո՛ս: Ո՛չ... Մացառուտքն ու փուշերը,
Մեր գաղտուկ ճամբաներն անգիտողին համար,
Հուսատարիմ պահապաններու պէս կը հսկին չուրջանակի:
Մենք մեր առնն ենք հոս... Վախկո՛տ... Ոչ ոք կը կասկածի՝
Անտառի սեմին՝ ամէն ինչ որ հոն կը սարսռայ...

Սիրող պինդ բռնէ՛:

ՀՈՎԻԻԸ

Եթէ կը վախնամ քեզի համար է միայն:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Գիտեմ:

ՀՈՎԻԻԸ (Մտախոհութեամբ)

Սա հինաւուրց պատը, հո՛գ...

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Չուսրթեմ)

Այդ հինաւուրց պատն է սիրուն
Իր կանաչ մամուռով և իր անկափունջերով
Չոր թռչուններն են ցաներ քարերուն մէջ փուզուուն:

ՀՈՎԻԻԸ

Այո՛, բայց պարտէզ մը կայ այդ հին պատին ետին:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Պարտէզ մը չքե՛ղ ուրիշ բոյրը կ'ելլէ հասուն շահաքրամի:
Արքային պարտէզը... Տե՛ս, ամբափակ են գուներն անոր:

Ոչ ոք կուգայ հոն շնչել շահաքրամներն ու վարդերը:
Արքաներու պարտէզներն այս բոլոր չունին այցելու,
Եւ մենք երկուքս, բարեբաղդարար, եկած ենք
Հոս ապաստան փնտռել մեր արգիլուած սիրոյն:
Առանց մեզի, ծաղիկներուն բուրումը պիտի կորսուէր:

ՀՈՎԻԻԸ (Պնդելով)

Սակայն այս գունն ու այս հեռքերը, կը տեսնես...

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՞ւր:

ՀՈՎԻԻԸ

Հո՛ն:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Բայց մենք էինք, մոռցա՞ր, առջի իրկուն... Սա՛ հեղուն
Որ ետեւէս ինկար և բէշս պատուեցիր:

(Ուտեր կը քորուէ)

Ի՛նչ մարդ ես, դո՛ւն: Ոչի՛նչ բան մը քեզ մտահոգ կ'ընէ
միշտ:

Ամէն կողմէն մեզի հետեւողներ կ'երեւան աչքիդ, քայ-
լեր կը տեսնես,

Եւ բոլոր այդ միջոցին չես համբուրեր զիս...

Նայէ՛, դրան նիգերը դրուած են...

ՀՈՎԻԻԸ

Ատիկա բաւական չէ:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Եւ յետոյ, ո՞վ պիտի ուզէիր որ բանար այդ դուռը.

Ի՛նչ ընելու համար... Նախ և առաջ լաւ գիտես որ
արքաները

Պուրակներն ելլող մարդերէն չեն:

Անոնք օրն ի բուն կը կարգան գրութիւններ,

կուտան, առանց ինչուն գիտնալու, սասրագրու թիւններ...

ՆՈՒՊԱՐ Յ. ՍԵՐՈՎԲԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մասնագէտ Ամերիկեան Աստմալիամուրչներու

Սէլիմ Գաբբան փողոց, թիւ 14

ԱՂԵՔՍԱՆԻՐԻԱ

Արքաները ծեր կ'ըլլան, շատ ծեր: Ա՛լ խենդութիւն
չեն ըններ,
Ա՛լ տարիքնին անցած է ըլլալու մեզի պէս տարփաւոր.
Անոնք միայն կառքով դուրս կուգան գաշտին մէջէն,
Օր ցորեկով և երբէք առանց ուղեկցի:

ՀՈՎԻԻԸ

Արքաները... Բայց Իշխանուհին:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Օ՛հ, Իշխանուհին, բարէ,
Ան կրնայ գալ, վախ չազգեր ատ ինծի:
Հեզանուշ աչքեր ունի, ես կը վստահիմ անոր.
Մեր երկուքին սէրը ո՞ճիր մը չէ՛ վերջապէս...
Այն ատեն, կամայ մը կ'ըսեմ անոր, ամենախոնարհօրէն.
«Հովիւը որ անա՛, տիկին, սիրահարս է իմին:
«Հայրս չուզեր հովիւ մ'ունենալ իբրև փեսայ.
«Իսկ ես կ'ուզեմ... Եւ սէրը ոչինչ կը կորսնցնէ սպասելով:»

ՀՈՎԻԻԸ

Այո՛, եթէ Իշխանուհին գայ, դարպաս կ'ընենք անոր:
Ան պաշտելու է պատմութիւնները սիրոյ.
Մերինը կը զրուցենք իրեն այնքան գողտրօրէն,
Որ թերեւս ան կը կարգէ մեզ իբրաւ հետ:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Իր շրթներէն բա՛ն մը պիտի բաւէր մեզ միացնելու:

ՀՈՎԻԻԸ

Պարզապէս եթէ ըսէր որ սպազայ ունեցող հովիւ մ'եմ ես...
Պիտի հաւատային իրեն:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Արգէն կըւտ ճշմարտութիւնն է ատիկա...
Դուն հարուստ պիտի ըլլաս, օր մը:

ՀՈՎԻԻԸ

Կը յուսամ՝

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

վստահ եմ ատոր...

ՀՈՎԻԻԸ

Հարկա՛ւ:

ՀՈՎՈՒՈՒՐԻՆ

Բայց եկո՛ւր հասկցուր մեր իններուն:

ՀՈՎԻԻԸ

Իրա՛ւ որ անուշ աչքեր ունի Իշխանուհին, ներողամիտ
աչքեր:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Չէի՛ ըսեր քեզի... Պէտք է հաւատալ միշտ ինծի...

ՀՈՎԻԻԸ

Այդքան կապոյտ աչքերով անկարելի՛ է սեհօզի ըլլալ:

ՀՈՎՈՒՈՒՐԻՆ

Կապո՛յտ են, կը կարծե՞ս, իր աչքերը:

ՀՈՎԻԻԸ

Ինչպէս վշենիի ծաղիկներ:

ՀՈՎՈՒՈՒՐԻՆ

Կը ճանչնա՞ս զինքը:

ՀՈՎԻԻԸ

Շատ լաւ:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Կը ճանչնա՞ս զինքը, անպիտան:

ՀՈՎԻԻԸ

Օ՛հ, շատ քիչ... Կիրակի մը տեսայ զինք կառքով ան-
ցած ատեն:

Շնիկ մը կը քնանար՝ դունչը անոր թեզանիքին յեց,
ձեփ-ձերմակ շնիկ մը վզին շուրջ ժապաւէնով մը վար-
գագոյն:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Պատմէ՛:

ՀՈՎԻԻԸ

Ձայճրոյթով խիստ համակուած կը թուէր:
Անցողակի, տեսաւ աչքերս իր վրայ յառած.
Բարեւեց զիս հովանոցին ծայրովը:

ԱԹԹԱՐԻՆ ԿՕՇԿԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մուսքի Աքքարին քիւ 18

Սեփականատէր՝ ԳԷՈՐԳ ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ

Ընտիր կօշիկներ պատրաստ եւ չափու վրայ:
Գիները անմրցելի են: Միակ փորձ մը պիտի
համոզէ ամենէն սկեպտիկը:

Միակ փոքրիկ մաղթանք մը պիտի բաւէր մեզի...
Ըսել թէ...

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Չգէ՛, դո՛ւն ալ, անբա՛ն, որպէս զի քեզ սիրեմ
Դուն պարիկի պէտք չունեցար քու կնուրքիդ...
Օ՛ն, ա՛տ ըլլար վիշտդ... Համբոյր մը եւս տո՛ւր...
Մենք պէտք չունինք պարիկի, ո՛չ ալ ամուսնութեան,
Պիտի սիրե՞ս զիս յաւիտեան:

ՀՈՎԻԻԸ

Յաւիտեան:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Սի՛րտս:

ՀՈՎԻԻԸ

Կեանքս:

(Հիմա նստած եմ եւ ցած ձայնով կը խօսակցիմ, հետուէ հետու միայն լսուելով: — Մինչ այդ, խորի դուռը բացուած է: Իշխանուհին կը մտնէ, առանց տեսնելու զանոնք, որ չեն տեսած զինքը:)

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

(Ամէն կողմ նայելով)

Ո՛չ ոք կայ... Դուռը կը գոցե՛մ... Չեն եկած ետեւէս...
Ժամուան մը համար իշխանուհի եմ ազատ ձգուած...
Ո՛րքան աւելի լաւ չունէ կ'առնուի հոս քան միւս կողմը:
(Գեպի խորք կը քալէ ձախ ուղղութեամբ)

ՀՈՎԻԻԸ (Գորովալիք)

Իմ տիրուհիս:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Քնանանք, կ'ուզե՞ս:

ՀՈՎԻԻԸ

Քնանանք:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Անգամ մը եւս:

Վերջինն է... Աչքերուս վրայ, այժմ, փակելու համար
զանոնք,

Պահիկ մը ինքզինքնիս նուազած կարծենք...

Գիշեր-բարի:

ՀՈՎԻԻԸ

Գիշեր-բարի:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Կը քնանա՞ս կոր:

ՀՈՎԻԻԸ

Գրեթէ... Հապա դո՛ւն, կը քնանա՞ս կոր:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Այո՛:

(Կը բնական մեղմիւ իրարու գրկին մէջ)

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

(Գեպի այ վերադառնալով, առանց տեսնելու զանոնք)

Ո՛չ ոք կայ... Ի՛նչ երանութիւն քեզ գտնել,

Քանալի՛ գաշտերու, բանալի՛ պուրակներու: Ամբողջ
անտառը կանաչ

Ինձի կը պատկանի, և կը զգամ որ բանտս կ'ընդլայնի
Մինչև բլրակներու որմը որ հորիզոնը կը փակէ:

(Լուսիւն մը)

Գիտեմ որ պէտք պիտի ըլլայ վերագտնալ գէպի ետ...
Քայց պարտէզէ մը ո՛րքան աւելի ազուր է բացաստան մը

Ուր կը քալես աննպատակ սազարթներու տակ ցածուկ
(Քալելով)

Կընամ երթալ, գալ, ուզածին պէս քայլերուս...

Ժամ մը... Շատ հեռուն կ'երթցուի ժամուան մը մէջ:

Կը զգամ որ աւելի սիրուն կը դառնամ ու լուազոյն
Յորմէ հեռէ գէմքս կը համարձակի ըլլալ ինչ որ է,

Ուրախ՝ եթէ ժպտիլ ուզեմ, տրտում՝ այդպէս եթէ
հաճիմ...

Քանի որ այս ժամն իմն է ամբողջ, ինչո՞վ պիտի զայն
անցընեմ.

Պուրակներուն մէջ վազելով: Քայց, մինակ, ի՛նչ օգուտ:
(Կը նստի)

ԱՆՎՈ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿՈՇՎԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

12, Պուլվար Բամիկի

Սեփականատէր՝ **Ն. ՊԱՍՏԱՃԵԱՆ**

Առաջնակարգ ապրանք — Չափաւոր գիներ
մասնաւորապէս մեր հայ յանախորդներուն հա-
մար:

Կը նախընտրեմ

Տեսնել, հոն, վերը, կապոյտ երկնից թօշնիւն տակաւ :
Ազա՛տ եմ, վերջապէս, ազա՛տ :

(hhus srsnագին)

Եւ մինա՛կ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Քուրնի մէջ, Հովիւին)

Սիրակա՛նս . . .

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Շատ լաւ է չի զգալ այլեւս կեանքդ որմափակ,
Բայց ատով չի լմննար, պէտք է բան մը ժպտի անոր,
Եւ ես չեմ տեսներ թէ այս վայրին մէջ ամայի
Ինչ կրնայ անակնկալ պատահիլ ինձ, այս իրիկուն :
Եթէ ոչինչ՝ չէր արժեր դալ հոս ապաքէն :

(Պահ մը կսնց կ'առնէ)

Ոգեկոչե՛մ արդեօք օղակն իմ կնքամօրս բարի . . .
Խենթութիւն է : Երեք մաղթանք միայն սեն իմ յայտնեկք,
Երեք մաղթանք զոր նոյնինքն խոստացած է կատարել :
Երե՛ք, շա՛տ քիչ է : Պէտք է խնայող ըլլամ առ այդ,
Եւ մէկ հատիկն իսկ անոնց վասնելու չե՛մ,
Ո՛չ, անշու՛շա :

(Քիչ մը խորհելով)

Իրաւ է որ երկու հատ պիտ' մնար ինձ տակաւին :

(Յանկարձ Հովիւն ու Հովուուհին կեմարելով)

Հովիւնե՛ր որ քուն են եղեր :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ [Միտք փնտրած]

Սիրուհի՛ս . . .

ԻՇԽԱՆՈՒ ԻՆ

Տարփաւորնե՛ր : Նինչն անոնց զգուանք մը կ'երկարածգէ . . .
Ի՛նչ քաղցրութիւն կուգայ վրասս և ի՛նչ թափանք է ասի :
Երբէք սիրահար ու սիրուհի տեսած չէի :
Մարմիններն իրենց դիւթուած կ'ընդխառնուին, ճապուկ
ա՛յնքան :

(Կը դիտէ զանոնք ընդ երկար)

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Սուանց աչքեր բացարձ)

Գիտես որ շատ ուշ է :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Նայպէս)

Կ'արթնցնես կոր զիս . . . Չգէ՛ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Մրափնուն մէջ իսկ մին կը խօսի և պատասխան կուտայ
միւսն անոր ,

Եւ միշտ, ինչպէս կամուրջի մը վրայ անտեսանելի,
Բառերն իրենց միջև, հոգիէ հոգի կ'երթան ու կուգան . . .
Կ'երեւակայեմ, կը լսեմ բառերն զոր իրարու պիտի ըսեն,
Եւ զոր համարյւր մը երբեմն չրթներնուն վրայ կ'ընդմիջէ . . .
Ահա՛ ամբողջ երջանկութիւնն որմէ օ՛րբ էի մնացեր :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Ես փառելով)

Իրա՛ւ որ շատ ուշ է . . . Օրը կը տարածամի :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Քիչ մը վե՛րջը :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Քնացի՛ր, եթէ կ'ուզես . . . Ես կ'երթամ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Միտք փնտրած)

Չա՛ր . . . Չէ՛, մ'երթար դեռ . . . Լսէ՛, կ'երագէի
Որ շատ ձերացեր էինք, ձեռու ընիս փոթփոթած . . .
Օ՛հ, շա՛տ, շա՛տ, շա՛տ տարիներ ետքն էր,
Միշտ կը սիրէինք զիրար, սքանչելի՛ էր :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Այդ բոլորը դեռ չի բանալու համար է աչքերդ . . .
Կը յուսամ, երազիդ մէջ, ամուսնացած էինք, այնպէս չէ՞ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Անտարակո՛յս : Ք'անի որ ես հանի էի, և դուն ալ պապիկ .
Եւ քանի որ մեր շուրջ ընտանի և շողփաղփուն
Մեր թռուիկները բոլոր կը վխտային հազարներով . . .

Վ. Թ. ՊԱՐԾԱՆՔԵԱՆ

ՄԵՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՄԱՆԻՖԵՍՏՈՒՐԱՅԻ

Գահիրէ, Սկիէ և Կեսիսա (քղբավանառ Հիմնիի դիմաց)

Մեր վաճառատան մէջ կը ծախուին՝ ձերմակեղէն-
ներ, կտաւներ, կամանց զգեստի համար կերպասեղէն-
ներ, տպածոներ, ֆանէլաներ և ըն . . . — Ի վիճակի ենք
պատուարժան յաճախորդները գոհացնելու թէ՛ մեր տե-
սակներուն զերազանցութեամբը և թէ՛ մեր գիներուն
անմրցելի չափաւորութեամբը :

Մինչև հեռուն անվերջ շարքեր կողմերով .
Բոլոր մանչերն աղուոր էին , բոլոր աղջիկները գեղանի...

ՀՈՎԻԻԸ

Այո՛ , բայց , միւս կողմէն , շուտ քրէ... Օրը կը մթնէ ,
Աստղերն արգէն կը պլպլան տեղ , տեղ .
Ուշ մնաս պիտի...

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Պահ , համակերպած եմ ես...

Ահաւասիկ :

(Մացառի մը վրայէն գլխարկն առնելով)

Գլխարկս դրուած է աղէկ :

ՀՈՎԻԻԸ

Այո՛ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Մաղերս շատ թափթփած չե՞ն :

ՀՈՎԻԻԸ

Ո՛չ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Շատ կարմրած եմ :

ՀՈՎԻԻԸ

Ո՛չ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Առ վաղի՛ւ :

ՀՈՎԻԻԸ

Առ վաղի՛ւ :

(Երկարօրէն կը համբուռուին)

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (ԵՏ զարով)

Միակ հատ մը , հուսկ համբոյրը որ սիրտս կը տաքցնէ
ճամբան...

Կը սիրե՞ս ինձի :

ՀՈՎԻԻԸ

Այո՛ , կը սիրեմ քեզի... Ա՛հ , անուշի՛կս , անուշի՛կս ,
Ի՛նչպէս թէ կը սիրեմ քեզի... Երբ դուն կ'երթաս սիրտս
կը փրթի ,

Եւ սակայն աչքերս այնքան լեցուն կը մնան քեզմով

Որ քեզ կը տեսնեմ միշտ աշխարհի և իմ միջև...

Եւ հոգ կը կենամ ժամերով , առանց բան մը ըսելու ,

Առանց երերալու , իրիկուան մէջ որ կ'իջնէ... Կը հառաչեմ

Եւ կը մտածեմ բառեր՝ քեզի մըմնջելու համար դանոնք ,
Որոնք երկուքնիրս կը խնդացնեն , և մինակ զիս կը
լացնեն...

Բառեր , շատ չեմ գիտեր անոնցմէ , բայց կը հարեմ
Լաւ եւս խորհելու համար քեզի... Մեր կենդանի սենեակը
Կը մեռնի , երբ դուն կ'երթաս , քու հեռացումէդ ,
Ծաղիկները նուազ անուշ կը բուրեն , ջուրը արամօրէն
կը հոսի ,

Սաղարթը կը մարի , ի՛նչ փոյթ , ես կը մնամ ,
Մտածելու թէ վաղը , միշտ , միեւնոյն ժամուն ,
Որքան ատեն որ արգելին մեզ պատկանիլ իրարու ,
Պիտի տեսնեմ քեզ հեռուէն , ծառերուն տակ , երբ
որ դաս

Տերեւաթափով կակուղ փոքրիկ արահետէն
Ա՛յնքան թեթեւօտն , հակառակ կրած երջանկութեանդ...
Դուն չե՞ս կրնար գիտնալ , չե՞ս կրնալ դուն :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Բայց կրնամ ,
Գիտեմ , — շատ լաւ գիտեմ , քանի որ ես ալ քեզ կը
սիրեմ...

Գիտե՛մ , գիտե՛մ , գիտե՛մ :

ՀՈՎԻԻԸ

Գնա՛ , փախչէ՛ շուտով :
Քանի որ պէտք է :

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՐԵՋՐԱՏՈՒՆ ԵՒ ՃԱՇԱՐԱՆ

Շարա Էլֆի Պէյ - Գահիրէ

Սեփականատէր՝ Կ. ՃՈՒՃՈՒՅՄԱՆ ԵՒ Բ. ԹԷՐԷՆՅԱՆ

Իր օգուէտ գիրքով , ծայրայեղ մաքրութեամբ և
խղճամիտ սպասարկութեամբ՝ միակ հայկական իտէալ
ընտանեկան Գարեջրատունն է :

Ճաշարանը իր ճօխ արեւելեան և եւրոպական ճաշ-
ապուսակով և խնամուած կազմակերպութեամբ բաց-
արձակ գո՛ացում կուտայ ամենէն նուրբ ճաշակներուն :

Համեզ Բեպապը՝ մասնագիտութիւն , սրուն համ-
բաւը տարածուած է ամբողջ Եգիպտոսի մէջ :

ՀՈՎՈՒՈՒ ՀԻՆ

Հոգի՛ս . . .

ՀՈՎԻԻԸ

Ա՛հ, անուշի՛կ պղտիկս :

ՀՈՎՈՒՈՒ ՀԻՆ

Ա.յո՛ւ, կ'երթամ կոր :

ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ (Մեկուսի)

Կ'ուզեմ՝ անսնալ զայն, հարցուփորձել :

ՀՈՎՈՒՈՒ ՀԻՆ (Մեկնելով)

Ա.յս անգամ, կը փախչիմ՝ ահա՛ :

ՀՈՎԻԻԸ (Երկարօրէն)

Օ՛հ, կը սիրե՛մ զինքը . . .

(Հովուուհին մեկնած է : Իսխանուհին դուրս կուգայ իր բախտոցէն :)

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՀՈՎԻԻԸ, ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ

ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ (Կանչելով)

Հովի՛ւ :

ՀՈՎԻԻԸ (Յանկարծակիի եկած եւ երկոս)

Ո՛վ է ան :

ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ

Ա.յո՛ւ, ես հո՛ւզ էի, անբեւեռուն տակ պահուրտած :

Մտիկ կ'ընէի . . Բայց պէտք չէ՛ ինէ ցաւիս ատոր համար :

ՀՈՎԻԻԸ (Շուտրած)

Իշխանուհի՛ն :

(Աւելի ապահովուած, մտածելով)

Իր մասին ո՛չ ոք գէշ կը խօսի :

ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ

Ասկէ կ'անցնէի գիպուածով . ո՛չ մէկը գիտէր :

Մինակ ելէր էի պտոյտի և կարծեցի թէ ամայի էր անտառը :

ՀՈՎԻԻԸ

Մե՛նք ալ :

ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ

Կխաստուերին մէջ կանաչ

Գուր երկուքդ կը քնանայիք . . Գիտե՛մ, պէտք չէր

Որ ձեզի նայէի . . Աղէկ բան չէր ըրածս . . Արդիւուած է ինչ որ ըրի . . .

ՀՈՎԻԻԸ

Գոնէ չըլլայ՝ որ ըսէք ուրիշին :

ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ

Տեսայ ձեզի, և ապա ժպտալ ձեր տեսայ, Ձեր հրճուանքն հանդարտ ձեր քունին մէջէն .

Ա.յրպիսի ժպտա տեսած չէի ես երբէք . . .

Նշմարեցնու՛ն պէս ինձի ամէն ժպտա կ'անհետի :

Իշխանուհի՛ չեն ժտիր ինձի նայիլ շիփ-շիտակ .

Ամենուրեք քայլերուս առջև, ետև լուսթի՛ւն .

Ես կը անսնեմ՝ աչքեր միայն որոնք ինձի չեն նայիր :

Տխուր բան է ասիկա . . Մանկաւրիկներն իսկ փոքրիկ,

Որոնց հեռուէն կը լսեմ հանած աղմուկը խոշոր,

Յանկարծ խոհուն կը դառնան անոնեցնուն պէս զիս անդէն,

Կ'անշարժանան, յարգանքէ ու երկիւղէ համրացած :

Ժպտալ զոր կ'ընծային ինձի տուրք մ'է ստրուկի,

Տեսակ մը հարկ զոր կանխիկ կը վճարեն ամենքն ալ,

— Իզուր կ'ընեմ հարցուփորձ և մերթ կուտամ քաջալերի,—

Գիտեմ կանխաւ ըսելիք բոլոր բառերը անոնց . . .

Տխուր վիճակ է ասի, կը հասկնաք, այնպէս չէ՞ :

ՀՈՎԻԻԸ

Մէկ խօսքով,

Ձեր պալատին մարդոց ա՛լ քծինքին չէք դիմանար :

ԻՇԽԱՆՈՒ ՀԻՆ

Օ՛հ, այո՛ . . .

3. ԱՔՐԱՏԱՄԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ

3. Աքրահամեան եւ Որդիք Տունը կը հայրայքէ Աղեփանդրիոյ եւ Ռամլէի մէջ ՄԱՆԹԱՇԵԱՆՅ ԲԷԹՐՈՒԸ : Կը ծախէ ու կը նորոգէ խոհանոցի réchaud-ներ եւ հեծելանիւններ :

Հասցէ՝ Սիսի Մէրուալի փողոց, քիւ 40 :

— Թէլէֆօն՝ քիւ 33-45 :

ՀՈՎԻԻԸ

Նախընտրէիք պիտի գուք, իբրև ամբողջ արքունիք,
Ազուսր սպասիկ մ'անառակ որ ձեզ սիրոյ ընէր խօսք...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Օ՛, այո՛...

[Ինքզինքն ժողովելով]

Այսինքն...

[Անկեղծօրէն ու գուարբազին]

Այո՛... Այնքան ուզէի պիտի որ զիս սիրէին:

ՀՈՎԻԻԸ

Օ՛հ, որ մը չէ որ մը գուք պիտի գտնէք ուզածնիդ...
Յուսացէ՛ք, զի, վերջապէս, արքաներուն մէջ անգամ
Գեղեցիկ մտրդ մը գտնել անկարելի չէ երբեմն:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Այո՛... Թերեւս...

ՀՈՎԻԻԸ

Անտարակոյս... Ինչո՞ւ չէ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Կը ձանձրանամ:

Իմ կեանքս ապուշ է ինչպէս շատրուան մ'անձրեւ ին տակ...
Ըսէ՛լ թէ նոյնիսկ զարմիկ մը ես չունիմ քովս ի վեր:
Զարմիկ մ'եղբայր մըն է և սիրահար մը գրեթէ:
Կը զրուցես հետն անոր, կը քէննաս, կը հաշտուիս:
Զարմիկ մը՝ գոյգ մ'աչք է ուր գեղեցկութիւնդ կը
տեսնես...

Մինչև անգամ չեմ գիտեր, ի՞նչպէս կրնամ ես գիտնալ,
Թէ իսկապէս, ճշմարտիւ, հաճելի է տեսքս իմին:

ՀՈՎԻԻԸ [Անոր նայելով, խիստ բնական]

Այո՛, շիտա՛կը:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Պատուո՞յդ վրայ... Իրա՞ւ, իրա՞ւ, սիրուն եմ ես, ըսէ՛ ինձ:

ՀՈՎԻԻԸ

Սիրունն ալ խօսք է:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ազուսրիկ աղջիկ մ'եմ ես:

ՀՈՎԻԻԸ

Կա՛ւ գիտէք գուք տաիկա:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ո՛չ, կ'երգնում քեզ որ ահա՛
Քեզմէ կը լսեմ առաջին անգամ ըլլալով տաիկա,
Այսպէս, աչքիս մէջ ըսուած... Առանց կասկած ինձ տալու
Թէ ձօխութեանս կը գմայլիս այնքան որքան իմ անձիս...
Նորէ՛ն ըսէ՛, սիրտս համակ կը բացուի՛ քու այդ խօսքէդ:
Կը կարծես թէ սիրուէի պիտի ես, իբր հովուուհի:

ՀՈՎԻԻԸ

Անշո՛ւտ, այո՛:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Պիտ' սիրուէին, օ՛հ ըսէ, աչքերս, բերանքս իմին...
[խիստ պարս]

Ըստ իս, ես գէշ չեմ գտներ բերանքս ու ժպտքս...
Գրեթէ միշտ ես արտում եմ երբոր կը ժպտիմ,
Սակայն նայէ՛. բերանս ու աչքերս ահա՛ ծաղկեր են...
Հո՛գ ըլլալէս, քո՛ւ քովիկդ պայծառացեր է երեսս:
Գեղեցիկ է ան միայն որ վստահ է գիւթելուն.
Ըսէ՛ թէ քեզ հաճելի եմ, գեղեցիկ ըրէ՛ զիս...
Անուսնդ ի՞նչ է:

ՀՈՎԻԻԸ

Սիւլլէն:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ի՛նչ սիրուն անուն:

Ա. Ն. ՕՏԱՊԱՇԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ Վ.Ա.ՃԱՌԱՏՈՒՆ ՄԱՆԻՅԱԹՈՒՐԱՅԻ

Շարա Սիֆի-եյ-Կեսիքս, Գանիքի

Մեծաքանակ և փոքրաքանակ վաճառում մանիֆա-
թուրայի վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներու,
ինչպէս՝ կերպասեղէն, բրդեղէն, բամպակեղէն, տպա-
ծոյ, պաթիսթա, գէֆիր, մատարօլամ և այլն:

Մասնաւոր մթերք ղերձակներու պիտոյքի:

Ապրանքներու երաշխանորուած ազնուութիւնը և
տոկունութիւնը, ինչպէս նաև գիներու անմրցելիութիւնը
յանձնարարելի կ'ընեն այս հայ վաճառատունը:

ՀՈՎԻԻԸ [Համես]

Անուն մըն է հովիւի... Սիրվէնները կը վխտան :
Մենք ամենքս ալ կը կոչուինք մեր ընտանեաց մէջ Սիրվէն
Որգւոց որդի...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ի՞նչ քաղցր կ'արատասնուի . «Սիրվէն» :
Եւ յետոյ ան կը բուրէ կարծես պուրակ , հեղեղատ . .
[Խիստ կրգուից]

Մի՛ ծուր գրուխըդ այգպէս . . . Բան մը ըսէ՛ գուն ինծի ,
Սիրվէն :

ՀՈՎԻԻԸ

Ի՞նչ կ'ուզէք որ ըսեմ ես :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ենթադրէ՛ թէ
Խօսեցեալըդ ըլլայի :

ՀՈՎԻԻԸ

Իմի՛ն , գո՛ւք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ինչո՞ւ չէ :
Սիրվէն . . . Իրա՛ւ որ ես շատ կը սիրեմ քու անունդ :

ՀՈՎԻԻԸ

Կը ծաղրէ՞ք զիս :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ըսէ՛ ինծի այն թեթեւ բաներէն
Ինչպէս բոլոր հովիւները կ'ըսեն հովուուհիներուն ,
Իրենց հօտերն յուրամորթ փարախելու ժամանակ ,
Ըսէ՛ ինծի անուշիկ ու լուրջ բառեր , անոնցմէ՛
Ձոր , պահ մ'առաջ , ստուերին մէջ , երկուքնիդ կ'ըսէիք...
Սիրաս նուազ մինակ էր , հոգիս նուազ մթամած :
Դուն չես կրնար հասկնալ , բայց ինձ այնպէս կը թուէր
Թէ սէրդ անոր ըսելով քիչ մ'ալ ինծի կ'ըսէիր :
Ինծի կուզար թէ մարմինս անորին պէս կը խրաչէր ,
Երբ բերանդ գողահար անոր բերնին կը յենուր ,
Եւ ինչպէս ան , կարծեցի վրաս զգալ ձեռքերուդ
Տաքութեան անցքն միեւնոյն ճամբաներէն սարսուռի :
Սիրաս բաժինն իր կ'առնէր գորովներէն ձեր բոլոր ,
Գգուանքներովն ալ ձերին կը գգուէի ես ինքզինքս :

ՀՈՎԻԻԸ

Չէինք քաշուիր սիրուելէ , պիտ' կարգուինք քանի որ ,
Եւ երբ մինակ կ'ըլլանք մենք , յանդգնելէ վախ չունինք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Մենք ալ մինակ ենք ահա՛... Չայնդ ա՛յնքան գողտր է որ ,
Սիրվէն , գո՛ւն , չա՛ր իմ Սիրվէն , որ բան մը չես հասկնար :
Քանի որ մարդ չի կայ հաս , և ինծի ալ կը հաւնիս ,
Խօսէ՛ ինծի քաղցրօրէն , ինչպէս անոր կ'ընէիր .
Բայց նախ երեսո նայէ՛ . . . Մօտենալուս պէս քեզի
Աչքերդ գէշ ձե մը կ'առնեն , մեղադրական ու վախկոտ...
Քիչ մ'առաջ գուն գոհունակ աչքերով կը խօսէիր :
Ի՞նչու բան մը չես ըսեր :

ՀՈՎԻԻԸ

Դուք ինծի խօ՞սք կը ձգէք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Հո՞ս եկուր , մօտս աւելի , եկուր քովիկս . . .

ՀՈՎԻԻԸ

Պէ՛տք է որ ա՛լ ես երթամ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Պէ՛տք է . . . Վստա՞հ ես գուն որ անպատճառ պէտք ըլ-
լայ ատ :

ՀՈՎԻԻԸ

Այո՛ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Աստուածային ժա՛մն է ուր աւելի զով է անտան :
Քիչ մ'ալ կեցիր , մի՛ երթար :

ԱՐԹԻՆ ՄՈՒՂԱԼԵԱՆ

Մեծաքանակ կաշիներ և մորթեր , կոշիկագործնե-
րու յատուկ ամէն տեսակ աւարանաց հայթայթում ,
առաջնակարգ մարխայով կոշիկներու ներածում : Ար-
թին Մուզալեան Տունը կը գրադի նաև յանձնակատա-
րութեան ու ներկայացուցչութեան զանազան գործերով :

Հասցե՛ Boite Postale 692, Alexandrie
Թեխեօն՝ 899 — վանառատուն՝ Souk-el-Khed.

ՀՈՎԻԻԸ

Ո՛հ... Տունս մօտ չէ՛ ասկէ .
Անդին, հեռուն է խապառ, գիւղին միւս ծայրը ճիշտ,
Եւ կը սպասեն հօն ինձի :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Կարծես աղջիկ մ'ըլլայիր : Բաւական մեծ չե՞ս միթէ ,
Ըստ կամս տուն դառնալու համար... Կեցի՛ր... Թոյլ
կուտա՛մ

Որ սիրոյ խօսք ընես ինձ, որպէս թէ քեզ սիրէի :
Քմահածոյք մ'է ասի... Պէտք է :
(Գրեթէ բուռն)

Կ'ուզե՛մ...
(Շատ անուշ)

Կը պաղատի՛մ քեզի...
(Iohannes srsunaghin)

Քիչ առաջ ես կը զգայի վստահ սիրուն ըլլալուս ,
Եւ վայրկեանէ մը ի վեր , ա՛լ չեմ գիտեր... Ո՛հ, ի՞նչու
Ձեռ ուզեր դուն հասկնալ և սիրել զիս ալ, ի՞նչու :

ՀՈՎԻԻԸ

Հովիւ մըն եմ ես միայն...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Հարո՛ւստ ընեմ պիտի քեզ :

ՀՈՎԻԻԸ

Երկու կին չեմ կրնար ես սիրել : Հատ մը կը սիրեմ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Այն ատեն զի՛ս սիրէ լոկ... Պէտք է որ զիս ընտրես դուն ,
Իշխանուհի եմ քանի որ և փափաքս է ասի .

Կ'ուզե՛մ :

ՀՈՎԻԻԸ

Պէտք չէ ըսել . «Կ'ուզե՛մ որ սիրեն ինձի» :
Սիրան անձնատուր ըլլալու համար կ'ուզէ ինք ընտրել...
Սիրաբանել թէ կ'ուզէք, հաւտացէք ինձ, մանկաւրիկ
Մը առէք դուք, սպայ մը, մէկը ձերին պալատէն,
Մէկը կանխաւ քաջովարժ կնահածոյ կերպերուն,
Որ պիտ' գիտնայ փայփայել ձեր երկու ձեռքը բանտուած
Համբոյրներով մեղմագոյն, յարգալից ու յամբային...

Սիրտս, բերանս իմ շատ կոշտ թափեր պիտի առնէին :
Ձեզի պէտք է խելօքիկ սիրտ մը, բերան մը հրու...
Յետոյ, առէք դո՛ւք մէկը, որ չունենայ խօսեցեալ :
Եւ հիմա, մտաք-բարո՛վ... Ըսածի՛ս պէս... Նոյուած
եմ խիտ...
Ես ձեր ծառան եմ խոնարհ... Դառնա՛նք անձնիւրս իր
կողմէն,
Դուք ձեր պալատն հոյակապ, ես ալ փարախս նսեմ...
Գիշի՛ր-բարի :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Կ'աղաչե՛մ քեզ, մ'երթա՛ր դեռ :

ՀՈՎԻԻԸ

Գիշերը լոյս պիտ'ընէինք առանց ո՛չ մէկ արգիւնքի...
Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ես : Ներսէս չի գար ձեզ սիրել,
Եւ շիտակն ալ ըսելու համար ձեզի վերջապէս,
Ձանձրացուցի՛ք զիս, տիկին՛ն իշխանուհի : Աւա՛տիկ...
Ըրէ՛ք ինչ որ կ'ուզէք ա՛լ... Գիշի՛ր-բարի... Երթա՛նք տուն :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ի՞նչ :

ՀՈՎԻԻԸ

Կ'ուզէք մնացէք, թէ կ'ուզէք գացէք, ահա՛ ես կ'երթամ...
(Կ'երթայ)

MME H. MARANGOZ

Փարիզէն վկայեալ Գերձակուհի կանանց

22, Պուլվար քը Բամբէն, Աղեփանդրիա

Ամենէն նրբաճաշակ տիկի՛ններն ու օրիորդները
կրնան վստահաբար դիմել Տիկին Մարանկօզեանին, որ
իր անագիւտ ձեւագիտութեամբ Իզմիրի գեղեցիկ սե-
ռին պէս վոյելչասէր ու զժուարահած տարր մը հմա-
յած է Փարիզէն վերագարձին, և որ ասանեակ տարի-
ներէ ի վեր՝ կանացի արդուզարդի արուեստին մէջ կը
գերազանցէ Աղեքսանդրիոյ հրապարակին վրայ :

ՏԵՍԻԼ Դ.

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ (Միճակ)

Գիւզացի՛ . . .

Օ՛հ, վրէժըս պիտ' լուծեմ... Անձոռնի՛ր . . . Ի՛նչ խիզախում...
Կը խեղդուի՛մ . . . Լի՛րք զքեզ . . . Յանդգնի՛ր ըսել երեոխ
Թ' իրեն ձանձրոյթ կ'առթեմ ես . . . Երա՞զ մ'արդեօք կը
տեսնեմ . . .

Ի՛նչ մարդիկ են սըւտնք ալ, ո՛րքան անկիրթ են ու կոշտ :
Իր բերնին չափը տարու համար գիտնալ կ'ուզէի
Ես այն բառերն անգրագէտ գեղջուկներու անուայ :
Անպիտան այդ հովիւը կ'ուզէր դաս մը պատուակա՛ն . . .
Վերջապէս զայն վանեցի ես փառաւոր տեսակէն :
Ես, կին, զանի վանեցի, մէկ նայուածքով, մարդն
այդ բիրտ :

Պատասխան տալ չի կրցաւ . . .

(Մտածելով)

Այսինքն թէ մէկ խօսքով

Վանեցի զայն... մանաւանդ երբ ան մեկնած էր արդէն...
Մեր երկուքէն ան է որ, նորէն, ուզածն իր ըրաւ :

(Կասկած, ոտքի գետնի վրայ «կ'ուզեմ» ներուց վրայ)

Ո՛հ, ո՛չ, ես չեմ հանդուրժեր որ ան ինձի դիմադրէ
Եւ հեռանայ ցնծալից մինչդեռ տրտում եմ ես հոս :
Ո՛հ, ընդունիլ չեմ կրնար որ բաղձանքէս խուսափին :
Եթէ չուզեր ան սիրել զիս, ի՛նչ փոյթ... Ես կը տեսնեմ . . .
Կրնամ ուզել . . . Պէ՛տք է որ վայրկենապէս ետ գայ ան,
Մոռնալու իր հովուուհին և իր սէրն ինձ յայտնելու .
Կ'ուզեմ, կ'ուզեմ, կ'ուզեմ ես . . . Առջի անգամ թո՛ղ ըլլայ
Խորհրդաւոր օգովիդ իմ, ինչ որ պէտք է ըրէ՛ դուն :
(Հեռուէն խիստ անուշ երաժեշտի մը : Գազանկար կը պայծա-
րանայ դիւրական կապոյտ լոյսով մը, որ մինչեւ վերջը պէտք է մնայ :)
Օ՛հ, ի՛նչ կ'ըսեմ... Շնորհակալ եմ, ո՛վ բարի կնքամայր...
Այս նուագը, հեռուէն, զգուսկան ու պողպաղուն,
Տժգոյն այս լոյսն որով լի են պուրակներն համօրէն . . .
Ո՛րքան խռովեալ ես կը զգամ, և ո՛րքան չքեղ է ասի . . .
Ի՛ստուածային այս գարունն օդին մէջ զոր կը շնչեմ . . .
Ուրեմն սիրէ՛ պիտի զիս . . . Ի՛նչ պիտ' ըսէ ինձ արդեօք :

Կը զգամ որ սիրտս կը դողայ արդէն նուազ վճռական,
Եւ կը վախնամ ես հիմա անկէ ինչ որ ուզեցի :

(Երաժեշտի մը կը դադրի : Հովիւր կը նստարուի)

ՏԵՍԻԼ Ե.

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ, ՀՈՎԻԻԸ

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Կուզայ անա՛ . . . Ձե չառնեմ սպասելու ես իրեն . . .
Նախ և առաջ սիրուողին կ'իյնայ ըլլալ սիրազեղ .
Պէ՛տք է անոր «Ձէ՛» ըսել սկիզբները, պէ՛տք է :
Այսպէս կ'ըլլայ միշտ բոլոր վէպերուն մէջ սիրային .
Նոյն իսկ եթէ սիրալիր ըլլալ ուզես, ետ կեցի՛ր . . .
Ծաղիկ քաղել ձեւանամ . . .

ՀՈՎԻԻԸ

Ինչ որ գլխուս կուզայ շատ
Տարօրէն է ու անլո՛ւր :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Դո՛ւն ես նորէն, եկա՞ր դուն,
Սիրվէ՛ն :

ՀՈՎԻԻԸ

Այո՛, ես ինքս եմ անա՛, ես եմ նորէն :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Կը տեսնես, ես ալ, մինակ, ձանձրոյթի հոս մատնուած,
Ծաղիկներ կը քաղէի . . . Գիտե՞ս, քեզի կը ներեմ :
Բա՞ն մը արդեօք կը փնտռես :

PHOTO-NADIR

Rue Averoff, Windsor Hotel-ի դիմաց

Սեփականատէր՝ ՕՆՆԻԿ ՔԱՇՃԵԱՆ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ

ՀՈՎԻԻԸ

Օ՛հ, ոչ... այսինքն, այո՛...
Վերջապէս, ինչ որ կը զգամ տարօրէն է ու անլուր:
Կարծես թէ ձեռք մը անտես կը քաշէր զիս ետևէս:
Ե՛ս եմ... Հին պատն այս ծանօթ է ինձ, ինչպէս բացաստանն,
Ինձի կուգայ սակայն թէ դարձած եմ ես յանկարծուտ
Նոր մարդ մը որ ինքն իրեն անգամ ըլլար անծանօթ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Անհամարձակ է... Հարկա՛ւ, երես չունի ան հիմակ.
Քաջալերել պէտք եմ զայն... Խօսէ՛, պատմէ՛, օ՛ն ինձի:

ՀՈՎԻԻԸ

Կը սիրեմ ձեզի...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Իրա՛ւ է, կը սիրե՛ս զիս:

ՀՈՎԻԻԸ

Այո՛, ի՛նչպէս,
Ի՛նչու, խեղճ չի հասնիր. բայց մագնիս մըն է կարծես
Որ դէպի ձեզ կը բերէ զիս. և ուժ մը շատ անուշ՝
Մինչ ես լսել կ'ուզէի՝ մէջս է և զիս կը մղէ,
Կը յանդգնիմ ձեզ խօսիլ, և կը հպիմ ձեր ձեռքին...
Պահ մ'առաջ այս փորձանքը ճամբուն վրայ բռնեց զիս,
Մինչ դէպի տուն կ'երթայի ես հանդարտիկ, միամիտ,
Մէկէն ի մէկ զգացի գրգռնք մը զերդ յեղակարծ,
Պահ մը աչքերս գոցուեցան հեշտանուազ խուզքէ:
Վերաբացի երբ զանոնք, ձեզ սրտիս մէջ ես դտայ...
Եւ ա՛լ ձեզ կը պատկանիմ, կը սիրեմ ձեզ բովանդակ,
Կը յանդգնիմ նաև ձեզ ըսել տալի:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Եւ ես մտիկ կ'ընեմ քեզ,
Եւ անա՛ դուն ճշմարտիւ ուզածիս պէս ես հիմա...
Այս իրիկուն միասին պիտի պալտա դառնանք մենք,
Եւ, վաղուընէ, փոխանակ քու խեղճ անշուք տարազիդ,
Քեզ հազցնել պիտի տամ մանկլաւիկի աղուսը լսթ:

ՀՈՎԻԻԸ

Ոսկեճամուկ հագուստնե՛ր որ ընաւ ծալը չեն բռնիր...
Իրա՛ւ...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Այո՛, և է՛ն շքեղներն:

ՀՈՎԻԻԸ

Ո՛րքան սիրուն պիտ' ըլլամ:
Ուրա՛խ եմ ես, գոհունա՛կ: Այս ի՛նչ արկած հրաշալի:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Օրն ի բուն մենք պտըտինք պիտի կառքով միասին:

ՀՈՎԻԻԸ

Փոքրիկ չնիկն ալ նստա՛ծ մեր երկուքին ձի՛չք մէջտեղ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ո՞ր շունք:

ՀՈՎԻԻԸ

Փոքրիկ չնիկն սպիտա՛կ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Օ՛հ, ո՛չ, տխեղձ է անի...
Փորձիս կուգար ատենօք, քեզ ճանչնալէս դեռ առաջ:

ՀՈՎԻԻԸ

Ուրեմն ալ չէ՞ք սիրեր զայն:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Կը սիրէի զայն թերեւս.
Ձուարթութեամբն իր անի կ'առթէր հաճոյք մերթ ինձի...
Բայց չեմ սիրեր զայն այլեւս, հիմա որ ես ունիմ քեզ:

ՀՈՎԻԻԸ

Բնական է, այո՛, որ առաջուան պէս չըլլաք դուք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՓԵՄՊԵՃԻԱՆ

Օխանոց ծխախոտի, ինչպէս նաև 7նոց և 8նոց սի-
կարէթներու ֆապրիք, և մթերանոց եգիպտական ամէն
մարգայի սիկարէթներու:

Հասցէ՛ JEAN PEMBEDJIAN
LE CAIRE — Faggala
ALEXANDRIE — 6, Rue de France

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ինծի կուգայ թէ քունի մէջ էի, թէ կ'արթնամ.
Սրտիս մէջ բան մը կարծես, մէկն ի մէկ կը բացուի,
Ինչպէս մթին դուռ մ'ընդ մէջ բուրանտանի մը շքեղ
Ուր թռչուններ անհամար, այգուէն, կ'երգեն հեշտալուր...
Կը սիրե՞ս զիս:

ՀՈՎԻԻԸ

Կը սիրեմ ձեզ... Բայց, խնդրեմ, ըսէ՛ք ինծի տակաւին,
Ի՞նչ պիտ'ընենք, մենք երկուքս, պալատին մէջ, օրն ի բուն,
Երբ ունենամ պիտի ես ազուօր լաթերս ոսկեզօծ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ի՞նչ պիտ'ընենք:

ՀՈՎԻԻԸ

Այո՛, ըսէ՛ք:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Շա՛տ մը բաներ.

Ի՞նչ որ ուզես... Ըսէ՛ ինձ, վարդի կերած ես անուշ:

ՀՈՎԻԻԸ

Ո՛չ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Պիտի տեսնես, ի՞նչ քաղցր է:

ՀՈՎԻԻԸ

Այն հագուստը մարքիզի՛ պիտի տայ ձե մը ինծի...
Թեւերուս ալ քիչ մ'երիզ պիտ'ունենամ հարկաւ ես:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Անշո՛ւշտ:

ՀՈՎԻԻԸ

Առանց մէկուն ըսելու, կիրակի մը պէտք է որ
Մենք երկուքս այս կողմերն շրջան մ'ելլենք ընելու,
Որպէս զի ըսէ մը ցոյց տամ ամենուն բազդս իմին:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Եթէ կ'ուզես:

ՀՈՎԻԻԸ

Այո՛... Ի՞նչու պահուրտուք պիտի խողանք եղեր մերք...
Գուտգութիւն չի կարծես, բայց պէտք է որ հասկնան.
Ամենուն չէ՛ տրուած թեւն իշխանուհի՛ մ'ունենալ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ամէն ուղածդ պիտ'ընե՛մ:
Կը սիրե՞ս զիս:

ՀՈՎԻԻԸ

Այո՛, անշո՛ւշտ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Հազիւ կ'ըսես ինձ առի,
Արագ, աչքերդ թարթափուն, ձայնդ համակ հեռաօր
Դուն պատասխան կուտաս լոկ եթէ հարցում ընեմ ե՛ս:
Երբոր մէկը կը սիրեն՝ կ'ըսեն ի՞նչպէս և ի՞նչու,
Այնքան անուշ բառերով որ կը զգուեն քեզ կարծես,
Այն բառերով ինչպէս քիչ առաջ այտեղն ըսուեցան.
Ինծի՛ ալ պէտք է զրուցես այդ բառերը փայփայող,
Փորձէ՛, նայի՛մ, ջանք ըրէ՛:

ՀՈՎԻԻԸ

Կ'ըսեմ ինչպէս որ կը զգամ...
Կը սիրեմ ձեզ, աւասի՛կ... Սիրտս ամբողջ ձերն է ա՛լ:
Ի՞նչ կ'ուզէք որ տակաւին ջրեմ ձեզի այլապէս:
Ուրիշ սէր մը ունէի, այդ սէրն հիմա հեռացաւ.
Չէի սիրեր ես ձեզի, ես կը սիրեմ ձեզ ահա՛...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ (Srsuforkin)

Այդչա՛փ:

ՀՈՎԻԻԸ

Այսչա՛փ... Ես գո՛հ եմ ասով, ձեզ կը գիտեմ, աւասի՛կ:
(Անխօս կը մնան)

NAZARET-NERSÈS YESSAÏAN FRÈRES

Rue Moharrem Bey No. 22, Alexandrie

Ն. Ե. Ն. Եսայեան Եղբարք անառաւ կաթի
մեծ հայրայրիչներ են Աղեփանդրիոյ հրապա-
րակին վրայ:

Չուրք՝ Աղբիւրէն - Կաթը՝ Սփնգէն:

Տ Ե Ս Ի Լ Զ .

ՀՈՎԻԻԸ , ԻՇԽԱՆՈՒՀԻՆ , ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Հեռուէն դեռ անհետանելի)

ՍԻՐԿԷՆ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Հովուուհի՛ն է :

ՀՈՎԻԻԸ

Այո՛ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Մի՛ ըսեր բան մը իրեն :

ՀՈՎԻԻԸ

Ատե՛ն չունիմ . . .

Զուր է ինչ որ պիտ' կրնայի ըսել իրեն :

Երթա՛նք ասկէ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Այո՛ , այո՛ , մեկնի՛նք . . . Շո՛ւտ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Աւելի մօտէն , միտ անհետանելի)

ՍԻՐԿԷՆ :

ՀՈՎԻԻԸ

Աճապարե՛նք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ներս չի մտնե՛ր բանալին . . . Շա՛տ ալ մութ է :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Խորէն երեւցալով)

ՍԻՐԿԷՆ , ՍԻՐԿԷՆ , կը վախնա՛մ . . . Գա՛յլ մը , տեսա՛յ իր ստուերն . . .

Բայց դուն ո՛ւր տեղ ես , ՍԻՐԿԷՆ . . .

ՀՈՎԻԻԸ (Իշխանուհիից)

Պահու՛րտեցէ՛ք :

⸘ (Հովուուհիից)

Նա՛ , հո՛ս եմ ես :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Վազելով ու անոր գիրկն ապաստանելով)

Վերջապէս , դո՛ւն , դո՛ւն . . . Դո՛ւն ես . . . Մինչեւ հոս ես վազեցի՛ . . .

Թեւերուդ մէջ ա՛ն ինծի . . . Մեծ գա՛յլ մը . . . Տե՛ս , կը դողա՛մ :

Տո՛ւրտ է . . . Ըսե՛լ թէ առանց միասնութեան մեռնի՛լ կայ .

Եւ թէ կրնար ըլլալ որ ես մեռնէի . . . առ յաւէտ . . .
Գիրկդ ա՛ն ինծի ու ժգնօրէն . . . Ձե՛ս սեղմեր զիս կուրծ-
քիդ վրայ :

ՀՈՎԻԻԸ

Կը սեղմեմ կոր :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ի՞նչու բան մը չես զրուցե՛ր :
Ի՞նչ ունիս դուն . . . Կարծես թէ նայուածքդ ինէ կու-
տայ խոյս :

ՀՈՎԻԻԸ

Բայց ոչ . . .

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Նայէ՛ ինծի : Ըսէ՛ հիմա , ըսէ՛ շուտ ,
Ի՞նչու մուսյլ ու լռին դուն կը մնաս իմ առջեւ . . .
Օ՛հ , դուն փոխուեր ես այլեւս , ո՛ւր են աչքերդ տարփազառ ,
Դէմքդ գոցուեր է կարծես , և ա՛լ ժպիտ չունիս դուն . . .
Խօսէ՛ , տո՛ւր ինձ պատասխան . . . Հիւա՞նդ ես , չո՛ւտ ,
ըսէ՛ ինձ . . .

Պա՞ղ առած ես արդեօք հոս . . . Ձեռքդ ստու է , և ճակատդ . . .
Եկո՛ւր , երթա՛նք մենք ասկէ : Թո՛ղ ըսեն ինչ որ կ'ուզեն . . .
Սիրտս անդգայ կը մնայ ամէն բանի քեզմէ՛ զատ :
Եկո՛ւր , եկո՛ւր :

ՀՈՎԻԻԸ

Ձեմ կրնար :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ի՛նչպէս թէ չես կրնար :

ՀՈՎԻԻԸ

Անկարելի է . . . Կը սպասեն ինծի :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ի՞նչ կ'ըսես :

ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԿԵՐՊԱՍԵՂԻՆԱՅ Վ.Ա.ՃԱՌԱՍՏՈՒՆԵՐ

Սուբ-էլ-Բանբօ եւ Սուբ-էլ-Խէս , Ալեքսանդրիա

Գիւնեռու դիւրամասչելիութեան եւ սեսակ-
ներու ազնուութեան կողմէ անմրցելի :

ՀՈՎԻԻԸ

Կ'ըսեմ թէ ինձ կը սպասեն :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՞վ է քեզի սպասողն :

ՀՈՎԻԻԸ

Մեծափարթամ մէկն է ան և չափազանց կարեւոր :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՞վ :

ՀՈՎԻԻԸ

Իշխանուհին :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Դո՛ւն : Իշխանուհի՞ն :

ՀՈՎԻԻԸ

Այո՛ , ես ի՛նքս :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Իշխանուհին քեզ կը սպասէ՞ :

ՀՈՎԻԻԸ

Անշո՛ւշտ , քանի որ զիս կը սիրէ :

Հովիւ չեմ ես այսուհետեւ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Զիշխանոյ)

Այո՛ , հոգիս , կը տեսնեմ . . .

ՀՈՎԻԻԸ

Մանկլաւիկ եմ ես հիմա :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Խենդեցե՛ր է : Վհուկ մը անտառներու

Կամ գէշ երազ մը գուցէ խանդարե՛ր է իր ուղեղն :

Ո՛րքան դժբաղդ պատահար : Ա՛յդ տարիքին մէջ մատաղ :

ՀՈՎԻԻԸ

Ի՞նչ , լո՛ւր մ'ունիս ինձ տալիք :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Եկո՛ւր , պիտի խնամեմ քեզի : Երթա՛նք տունը մեր . . .

Սիրակա՛նս : Ի՛նչ ահուելի դժբաղդութիւն :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ (Երեսն գալով)

Իրաւ է ան :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Իշխանուհի՛ն :

ՀՈՎԻԻԸ

Կը տեսնե՛ս . . .

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Իշխանուհի՛ն :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Նոյն ի՛նքն :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Կ'երազեմ . . . Ճի՛շդ է ուրեմն , ճի՛շդ է թէ զիս կը լքէ ,
Եւ թէ զիս ա՛լ չի սիրեր , և ձե՛զ է որ կը սիրէ ,
Իշխանուհի դուք Տիկի՛ն , ո՛հ , գթացէ՛ք մեր վրայ . . .
Բայց ո՛չ , այս չէ՛ կարելի , կը սիրէր զիս քիչ առաջ .
Ա՛լ չի սիրեր ձեզ արդէն , քանի որ ես կ'արտասուեմ . . .
Բայց պատասխան չէք տար դուք . . . Իրա՛ւ է որ , այն
ատեն ,

Պիտ'ըլլայիք զայն գիւթած ձեր մատնիո՛վն հրաշագործ . . .
Բայց չէք ըրած , այնպէս չէ՞ , այդ բանն անարգ , չա-
բանենց ,
Իշխանուհի , դո՛ւք , ագնիւ . . . Կը յանդգնիմ ես հազիւ
Ձեզ ըսելու ասիկա . . . Լո՛ւր էք սակայն երկուքդ ալ . . .
Ձայն խիցիք ինձմէ որ կը սիրէի զինքն ա՛յնքան :

(Կր սկսի լալ)

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Բայց մի՛ լար :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Օ՛հ , այնպէս չէ՞ , տիկինդ իմ ,
Կը հասկնա՛ք : Սիրահա՛րս է ան , ես կի՛նն եմ իրեն . . .
Ո՛չ , դուք բնա՛ւ չէք ուզած մեզի բաժնել իրարմէ . . .

ԳՈՂԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԵՂԲԱՐՔ

15, Մօսկէ Արքարիկ փողոց, Աղեխանգրիա

Ամէն տեսակ գոհարեղէններու և ոսկերչական ա-
պրասպանքի գոհացում կուտանք , դիւրամտաչելի գի-
ներով : — Օտարներէն առաջ՝ դիմեցէք մեզի , և պիտի
չի գղջաք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Մի՛ ըստ :

ՀՈՎԻԻԸ

Անշուշտ, պէտք է՛ լալ այդպէս...
Կը տեսնանս որ երկուքնուս ալ ցաւ կ'առթէ ատիկա :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ես արցունքներս ունիմ լոկ, չունիմ ես ո՛չ կնքամայր,
Ո՛չ ալ, ձեզի պէս, մտանի մ'իմ վիշտերս բուժելու :
Եթէ սիրան իր կորուսի, ինձ կը մնայ սոսկ մեռնի՛լ :

ՀՈՎԻԻԸ

Մեռնի՛լ, մ'ըսեր ատի : Ո՛չ...

ՀՈՎՈՒՈՒ ԻՆ

Կը նախընտրե՛մ ես... Այո՛...
Ձեմ առաւպիթը գէթ այլեւս...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ի՞նչ ընենք հիմա :

ՀՈՎԻԻԸ

Ի՞նչ գիտնամ ես... Ձեր գո՛րծն է... Յանցանքը ձերն է, ձե՛րը,
Փնտռեցէ՛ք ու գտէ՛ք :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ (Հովուուհիին)

Շրջագգեստներ կ'ուզե՛ս դուն, կամ գոհարներ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՛չ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Կ'ուզե՛ս տիտղոս մը, որ քեզ մատուցանեն մեծարանք .
Կոմսուհի՛ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՛չ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Մարգիդուհի՛, ի՞նչ կ'ըսես :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՛չ, ո՛չ :

ՀՈՎԻԻԸ

Մե՛զք որ զինք չեմ սիրեր ա՛լ, քանզի ան զիս կը սիրէ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ուզէ՛ ինչ որ կը բաղձաս, խօսէ՛ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՛չ, ո՛չ, ո՛չինչ կ'ուզեմ ես,
Կրնա՛ք բոլորն ալ պահել, ա՛ն պէտք է ետ տալ ինձի,
Ա՛ն միայն, ինչպէս ճանչցած եմ, հաւատարի՛մ, սիրազե՛ղ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Քեզ ե՛տ տալ զայն, բաժնու՛ր լանկէ : Օ՛հ, ոչ, ի՛նչ սարսափ
Եթէ կրկին միս մինակ գտնէի զիս սրտիս խորն...
Լաէ՛ : Կեանքըս դեռ հազիւ սգեւորուել ըսկսաւ
Սիրելու և սիրուելու երջանկութեամբ նորստաց :
Մի՛ պահանջեր դուն ինձմէ հրաժարում չափազանց :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ձէ՛, չէ՛, զայն ե՛տ տուէք ինձ :

ՀՈՎԻԻԸ (Իշխանուհիին մօտեցալով)

Միայն թէ դուք կարող էք,
Քանի որ ան տարաբաղդ է և ձեզ կը պաղատի,
Առանց ինձմէ անցնելու, ընել որ ան զիս մոռնայ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Այո՛, սակայն...

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ի՞նչ կ'ըսեն :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Սրտին ցաւէն հովուուհիին պիտի մեռնէր, կը կարծե՛ս :

ՀՈՎԻԻԸ

Անտարակո՛յս :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ահաբի՛ բան... Բայց երկո՛ւ մաղթանք մէջէն երեքի...
ՀՈՎԻԻԸ

ՀՈՎԻԻԸ

Երբորզը դեռ պիտ' մնայ :

AMERICAN SHOE STORE

22, Պուլվար քը Բաղիէն, Աղեփանդրիա
Սեփականաւեր՝ Մ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

Ամերիկեան ճաշակով այրերու և տղայոց յատուկ
ամէն տեսակ ընտիր կօշիկներ : — Գիներու մասին՝
անմրցելի :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Բան մը չէ ատ :

ՀՈՎԻԻԸ

Վա՛յ, սակարկել կ'ելլէք, գո՛ւք, իշխանուհի՛, ի՛նչ ամօթ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Չէ՞ք փոքրիկ... Օ՛ն, վե՛րջապէս : Երկրորդ անգամ
թո՛ղ ըլլայ :

Խորհրդաւոր մատանի, ինչ որ պէտք է ըրէ՛ գուն :
(Նոյն մեղմ նուագը, հեռուէն, ինչ որ առաջին անգամ եղաւ :)

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ի՞նչ ունիմ ես, ի՛նչ կ'ըլլամ : Կը թեթեւայ սիրտս անա՛ :
Սա քաղցր նուագն հեռաւոր... Ի՛նչ թովջութիւն է մէկէն
Որ՛ հակառակ ինձ՝ հոգւոյս մէջ կ'անդորրէ տուայտանքս...
Ո՛չ, ո՛չ, կ'ուզեմ զեռ սիրել քեզի, ո՛վ իմ սիրականս,
Կը նախընտրեմ տառապիլ և սիրել քեզ... Կը մարիմ...
Ո՛չ, ո՛չ, ես չեմ ուզեր որ վիշտըս ինձմէ հեռանայ,
Ո՛չ, ես կ'ուզեմ առ յաւէտ սրտիս խորը պահել զայն :
Ես տառապիլ զեռ կ'ուզեմ, սիրել, յիշել տակաւին...
Ա՛լ չեմ յիշեր ես արդէն... Բոլորովին հեռակայ,
Ինքզինքս իմ մէջս կը գտնեմ նորէն, անսէր... և անցաւ...

(Նուագը քիչ քիչ կը դադարի)

ՀՈՎԻԻԸ

Ահաւասիկ... Մտայուած եմ ես այլեւս... Լմեցա՛ւ :
Ամբողջ երեսն իր արդէն առուզացած է կարծես,
Զի տառապիր ա՛լ անի :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ (Կարծես բացակայ, ինկղիմֆին ըսելով)

Ա՛լ մէկը չեմ սիրեր ես :

ՀՈՎԻԻԸ

Կը ծպտի կոր, նայեցէ՛ք...

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Այո՛, լա՛ւ է ըլլալ բարի...

ՀՈՎԻԻԸ

Այսպէս անա՛, երեքս ալ, գոհունակ ենք մենք հիմա...
Ա՛լ ինձի չե՞ս սիրեր գուն :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՛չ :

ՀՈՎԻԻԸ

Շատ ժամանակ չի գրիր...
Իրրեւ մատնի պարիկի, հրաշալի է, իրա՛ւ :
«Ինչ որ պէտք է ըրէ՛ գուն» : Աքանչեւի՛, բա՛ն մը լսի
ժէսթ մ'և անա՛ սիրողներն ա՛լ չեն սիրեր մէկգմէկ,
Յանկարծակի... Իսկապէս, հիանալի բան է աս...
Ուրեմն ա՛լ կ'երթամ գուն :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Այո՛ :

ՀՈՎԻԻԸ

Միս մինա՞կ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Անշուշտ :

ՀՈՎԻԻԸ

Իսկ եթէ գուն հանդիպի՞ս ճամբուն վրայ մեծ գայլին,
Ինչպէս պահիկ մը առաջ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Օ՛ն, ա՛լ գայլէն չեմ վախնար
Ես հիմա :

ՀՈՎԻԻԸ

Կամ, ի՛նչ գիտնամ, առագա՛կ մը, գո՛ղ մ'եթէ զէմը ելլէ...
Պէտք է ուժգին գիս կանչե՛ս որպէս զի քեզ պաշտպանեմ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Սիրտս միայն ունէի, անա՛ առին զայն ինձմէ...
Օ՛ն, ա՛լ ես սև անտառին մէջէն կ'երթամ աներկիւզ :

ԱՐՇԱԿ ՇԱՀԻՆԵԱՆ

Ապու-Տարսար փողոց թիւ 20, Աղեխանդրիա

Զուլարան ամէն տեսակ մեքայներու : Մեքենական
կտրներու վերանորոգութիւն : — Երկար կամուրջնե-
րու եւ պատասպարաններու շինութիւն : — Անձայն ել-
լող-իջնող դուռներ (portes roulantes) :

ՀՈՎԻԻԸ

Առտուընէ իրիկուն, ի՞նչ պիտ' ընես դուն հիմակ,
Միս մինակ...

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ի՞նչ փոյթ:

ՀՈՎԻԻԸ

Օր մ'աւելի՛ երկար է քան մէկ տարի, երբոր դուն
Բանի մը չես մտածեր, երազագին թէ արթուն:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Այո՛, ճիշդ է, արգարև:

ՀՈՎԻԻԸ

Վերջ ի վերջոյ նո՛ր սիրող մ'առնես պիտի անկասկած...
Աւելի՛ ուշ:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ձեմ կարծեր:

ՀՈՎԻԻԸ

Ապահո՛վ եմ ես ատոր:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ի՞նչ ընելու համար: Նախ, չունիմ փափաքն այդ անձկոտ:

ՀՈՎԻԻԸ

Ձե՛ս կրնար դուն կեանքն ի բուն մէկ կողմ մնալ առանձին:
Իշխանուհին սենեկում պիտի ես. պէտք է որ դուն
Ալ, քու կողմէդ...

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ես ոչխարներս ունենամ պիտի և շունս...

ՀՈՎԻԻԸ

Դժբաղդ չե՞ս այժմ:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Օ՛հ, ոչ, գոհ եմ...

Ինչպէս կ'ըլլաս երբ ոչինչ քեզ կը փորձէ, վերջապէս...

ՀՈՎԻԻԸ

Այո՛:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Բայց դուն դժբաղդ չե՞ս միթէ:

ՀՈՎԻԻԸ

Ո՛չ... Ես պիտի

Առտուընէ իրիկուն հագնիմ լաթեր սկեզոծ,
Ես օրն ի բուն պտըտիմ պիտի կառքի մէջ բազմած,
Յետոյ սւտեմ պիտի ես անուշ եփուած ծաղիկներ,
Վարդեր. կ'ըսեն թէ ասի անմահական սենի համ:
Ա՛լ ի՞նչ կ'ուզեմ:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Կուլա՛ս կոր:

ՀՈՎԻԻԸ

Ո՛չ, բայց աչքերս
Կը կսկծան... Դուն ի՞նչ ունիս որ կուլաս:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՛չ, ես մտիկ կ'ընեմ կոր
Ինչ որ կ'ըսես:

ՀՈՎԻԻԸ

Սակայն, հո՛գ, այդ շի՛թը մեծ,
Նայէ՛, ձեռքիդ ճի՛շդ վրան, արցո՛ւնք մըն է...

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Վա՛յ...

Այն ատեն քու աչքերէ է որ արցունքն այդ լնկաւ.
Տրտում կ'ըլլան երբ կուլան, մինչ ես ուրախ եմ ա՛յնքան:

ՀՈՎԻԻԸ

Այո՛, գոհ եմք մենք, իրա՛ւ:

ՍՏԵՓԱՆ ԿՈՒՏՍՈՒՉԵԱՆ

Քեզի՛ք Փաշա փողոց, Բաւած Շալոյ, Աղեհասնդրիա

Կաշիի և կօշկագործութեան վերաբերեալ եւրոպա-
կան լաւագոյն ապրանքներ: — Յանձնարարութիւններ
և ապսպրանքներ կ'ընդունինք եղիպտացաւառի բոլոր
կեդրոններէն: — Գիներու մասին ամէն մրցում կը դի-
մագրուենք:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ (Որ քիչ քիչ մտեցած է)

Հէգ փոքրիկներ, կը դաւեմ
Երջանկութեան գէմ իրենց: Ոճիր մ'է աս: Ես կը զգամ
Թէ գերեցի իմ կամքիս սրտերն իրենց հնազանդ,
Բայց բան մ'իրենց ներսիդին, ամէն հմայքէ գերազօր,
Կը վերապրի սէրէն վերջ ու կը խառնէ արցունքնին
Մատնին անգամ չի կրցաւ զանոնք բաժնել իսկապէս:
(Շիսակ Սիլվէնից կ'երբայ)

Սիւլվէն... Մի՛ լար, չեմ ուզեր որ իմ առջևս արտասուեն:
ՀՈՎԻԻԸ

Բայց չեմ ի լար... Պատրաստ եմ հետեւելու ես ձեզի...
Կը սիրեմ ձեզ:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ո՛չ, ո՛չ, լուէ՛, կ'ազատեմ քեզի ահա՛
Սիրոյ այդ սուտ խօսքերէն զոր ե՛ս միայն ուզեցի:
Լուէ՛, լուէ՛, չե՛մ ուզեր... Ա՛լ չե՛մ ուզեր ես իսպառ...
ՀՈՎԻԻԸ

Ոչինչ ունիմ ձեռնէ գատ խորհուրդներուս մէջ իմին:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ձեռքերդ սառած են երբոր ինձի կ'ընես սիրոյ խօսք:
ՀՈՎԻԻԸ

Պատճառն է հոյն իրիկուան որ զայնս ըրաւ ցրտահար:
ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ո՛չ, պատճառն ա՛յն է որ սէրդ շինուած է սոսկ իմ իղձէս:
Ես եմ միայն որ, աւա՛ղ, քեզ կը սիրեմ: Ամէն խօսք
Որ կը բղխի քու սրտէդ, ես կը գողնամ զայն քեզմէ:
Իմ յուսութեքէս երբ ազատ էիր՝ դո՛ւն զիս չընտրեցիր:
Եւ ինձի չէ՛ որ բերաւ քեզ քմայքը քայլերուդ:
Պագատեցայ երբ քեզի՝ դուն կուտայիր խոյս ինձմէ:
Հըրպայրը որ քեզ այժմ ինձ կը բերէ զինաթափ,
Ես լաւ գիտեմ որ քու սիրտդ չի տենչաց զայն բնաւին,
Եւ թէ աչքերդ ինքն իրենց գեղս սիրել չանձկացին:
Դուն սիրոյ խօսք կ'ընես ինձ, պիտ'ուզէի քեզ հաւատլ,
Բայց յաղթանակս ե՛ս եմ որ հիմա տխուր կ'ընծայեմ.
Բաւերը զոր ինձ կ'ուզես՝ ես զանոնք լաւ կը ճանչնամ.
Անոնք սրտէդ քու կ'անցնին, բայց իմինէս դուրս կ'ելլեն...

Ո՛չ, ա՛լ լուէ: Ու դարձի՛ր հաւատարիմ ինքզինքիդ,
Ազատ սենայն հմայքէն որ կը բաժնէր քեզ անկէ,
Վերադարձի՛ր քու սիրտդ... Վերջին անգամ թո՛ղ ըլլայ,
Խորհրդաւոր մատանի, ինչ որ պէտք է ըրէ՛ դուն:

(Միեւնոյն մեղմ նուագը, հետուէն)

ՀՈՎԻԻԸ

Դո՛ւն ես, դո՛ւն:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Սիւլվէն:

ՀՈՎԻԻԸ

Դո՛ւն:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Հովի՛ւս:

ՀՈՎԻԻԸ

Հովուուհի՛ս:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ի՛նչպէս կապոյտ է երկինքն:

ՀՈՎԻԻԸ

Ո՛րքան թեթեւ է ստուերն:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ի՛նչ գեղեցիկ են աչքերդ:

ՀՈՎԻԻԸ

Օ՛հ, քաղցրութիւնն աչքերուդ:

THE SMART SET

HAIRDRESSER

NICOLAS ATHANASSIOU

29, Boulevard de Ramleh, Alexandrie

Առաջնակարգ սափրչատուն, որուն սեփականա-
տէրը՝ Պ. Նիքօլա Աթանասիու Փարիզէն վկայեալ ճշ-
մարիտ վարպետ մըն է վարսավիրայութեան արուես-
տին մէջ: — Մասնաւորապէս կը յանձնարարենք զինք
իրբե թատերական կախմներու հիանալի յարգարիչ,
ինչպէս նաև կանանց բօսքիներու և մազի ամէն տե-
ակ խնամքներու մասնագէտ:

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Լռէ՛ . . . Մեր սիրտն է հիմա որ կ'երգէ շուրջը մերին . . .

ՀՈՎԻԻԸ

Կը սիրե՛մ քեզ :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Քեզ կը պաշտե՛մ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Երջանի՛կ են :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Զգուշացի՛ր :

Լռէ՛ : Հո՛ն, խորն ստուերին, ան կ'ունկնդրէ ակնդէտ :

Հէ՛զ փոքրիկ, ինքն ալ հիմա վշտահար է իր կարգին .

Պէտք է աղնիւ ըլլանք մենք, հոգիս, անոր նկատմամբ :

Եկո՛ւր, Տիկին . . . Կ'արտասուէ . . . Կը պաղատարի, օ՛հ, ձեզի,

Արցունք պէտք չէ՛ որ թափէք . . . Նազելի՛ էք այնքան դուք :

Պիտի սիրեն ձեզի՛ ալ, կը խոստանա՛մ զայդ ձեզի,

Տիկին : Նախ մենք, որ երբէք պիտ' չի մոռնանք ձեր

բարիքն . . .

Ուրի՛շ մ'ապա, իշխան մը :

ՀՈՎԻԻԸ

Կա՛յսր մը, թերեւս :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Որ ձեզ տեսած պիտ' ըլլայ, իրիկուն մը, պատուհանն :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Կը կարծես :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Եւ որպէս զի ան ձեզի սիրէ, գիտէ՞ք,

Պէտք չունենաք պիտի դուք՝ այսօրուան պէս՝ մասնիկ :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Իմ խեղճ մասնիկ . . . Աւասիկ, առէ՛ք, ձեզի կուտամ զայն :

Բազդ շինեցէք դո՛ւք անով :

ՀՈՎՈՒՈՒՀԻՆ

Ո՛րքան բարի էք, Տիկին :

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Ներեցէ՛ք ինձ, դուք երկուքդ . . . Եւ դուն ալ, ո՛վ կնքամայր . . .

Բանի՛ մ'համար չեմ զղջար, կ'անդիտէի մինչև այժմ
ինչ որ չէր իմ քմայքըս կամ օտար էր հրճուանքիս .

Երջանկութիւնն կարծեցի թէ որսի մըն էր հանգոյն . . .
Աւա՛ղ . . . Զեզմով ճանչնայի պիտի, խեղճուկ մաղ-

թանքներ,

Թէ սիրտերը տարփածուայ խաղալիկներ չէին փուճ

Զոր մանուկ մը ժպտագին վայրկենաբար կը կորցէ,

Բայց թէ սէրը կ'երկնուի լռելիայն ու յամբօրէն .

Պէտք է որ ան հասուննայ ծիրանեգոյն զերթ պտուղ

Զոր արեւով ոսկեզօծ ըրին օրեր և օրեր . . .

Ամենագօր էք, այո՛, կնքամայրդ իմ : Ուժը ձեր

Բնութիւնն ամբողջ իր լուծին դարձուցած է հպատակ,

Ժամանակն իսկ հլու է կախարդանքին ձեր առջև,

Բայց դուք կարող չէ՛ք երկու սիրող բաժնել իրարմէ . . .

Կը հասկնա՛մ : Քիչ առաջ, անմիտ տղայ մ'էի լոկ .

(Հովիւից եւ Հովուուհիից)

Բայց ձեր վրայ ես լացի, և ինքզինքս կը զգամ լաւագոյն .

Գիշեր-բարի, պզտիկներս . . . Բա՛ւ է այսքան խօսուռտուք :

Անձնիւրս իր տուն ա՛լ դառնանք . . . Զեզ կը թողո՛ւմ

առանձին :

ՀՈՎԻԻԸ

Եւ պրծա՛ւ :

Վ Ե Ր Զ

ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՄԵԾ ՎՅՅԹՎՅՅԻՉ ՇԻՆՈՒԱԾԱՆԻԻԹԵՐՈՒ

29, Թէպ փողոց, Քան սր Սէզար, Աղեփանդրիա

Թ Է Լ Է Յ Օ Ն 10 . 89

Հայրայրիչ Աղեփանդրիայ Քաղաքապետութեան

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ԵԳԻՊՏՈՍԿԱՆ ԿԱՃԱՌ (Institut Egyptien). — Եգիպտական Կաճառը հիմնուած է 1859ին Պ. Ժօմարի նախաձեռնութեամբ, որ Եգիպտոսի Կանառին (Institut d'Egypte) վերջին կենդանի անդամն էր, խումբ մը գիտուններու և գրագէտներու կողմէ որոնց մէջ էին Քէօնինի պէյ՝ փոխարքայ Մօհամմէտ Սախա փաշայի քարտուղարը, Օկիւսդ Մառիէթ որ այն ատեն նոր հիմնած էր Եգիպտական Հնութեանց Պատճառները (Service des Antiquités Egyptiennes), Մր. Թըրնպրին՝ անգլիացի վաճառական և անտեսագէտ, և Տարզ. Շէր՝ Աղեքսանդրիոյ ֆրանսական առողջապահական պատուիրակը:

Կաճառը իր առաջին նիստը գումարեց 1859 Մայիս 6ին, և վերջնականապէս կազմուեցաւ՝ 47 անդամով՝ նոյն ամսուան 20ին:

Մինչև 1880 Յունուար 9՝ Կաճառը իր նիստերը կը գումարէր Աղեքսանդրիոյ մէջ: Այդ թուականին Գահրէ փոխադրուեցաւ:

Կանառին գլխաւոր նպատակն է գրական, արուեստագիտական և գիտական տեսակէտէն ուսումնասիրել Եգիպտոսի և շրջակայ երկիրներուն վերաբերեալ ամէն խնդիր:

Ունի եգիպտոսեան յիսուն անդամ որոնք կ'ընտրուին զոյսութիւն ունեցող անդամներուն զազանի քուէարկութեամբը և ձայներու մեծամասնութեամբ, ինչպէս նաև պատուակալ անդամներ՝ որոնց թիւը սահմանափակ չէ:

Կաճառը կանոնաւորաբար նիստ կը գումարէ իւրաքանչիւր ամսոյ առաջին երկուշաբթի օրը, Նոյեմբերի սկիզբէն մինչև Մայիսի վերջը: Նիստերը հանրային են, և ո՛ր և է մէկը կրնայ Կաճառին մէջ հազոր-

գագրութիւն մը կարգալ, եթէ անդամներէն մէկը զինք ներկայացնէ:

Կաճառը ամէն տարի երկպրակ տեղեկագիր մը կը հրատարակէ որ կը պարունակէ կարգացուած հաղորդագրութիւնները և վիճարանութեանց ամփոփոյքը: Կը հրատարակէ նաև մասնաւոր յուշագրութիւններ կարեւոր խնդիրներու մասին: Պաշտօնական լեզուն ֆրանսերէնն է, բայց հաղորդագրութիւնները կրնան պատրաստուիլ լատին տառերով ապագրելի ուրիշ ո՛ր և է լեզուով ալ, պայմանաւ որ ֆրանսերէն ամփոփում մըն ալ միասին տրուի:

Կաճառին մատենադարանը կը պարունակէ 22,000 հատորէ աւելի գիրք, և ամէն օր բաց է ժամը 8էն 1, բացի կիրակի և տօնական օրերէ:

Եգիպտական կառավարութիւնը տարեկան նպատակը կուտայ Կաճառին ընդհանուր ծախքերուն և տեղեկագիրներուն ու յուշագրութեանց հրատարակութեան համար:

Եգիպտական Կանառին Քարտուղարին հասցէն է՝ 1 Շարա Էյիս Ռիհան, Գահրէ:

ՍՈՒԼՔԱՆՈՍԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (Société Sultanienne de Géographie). — Հիմնուած 1875ին խալեական հրամանագրով, Հասցէն է՝ 45, Շարա Շէյխ Եուսէֆ, Գահրէ:

Աշխարհագրական Ընկերութիւնը պարբերաբար կը հրատարակէ տեղեկագրեր և յուշագրութիւններ:

Աշխարհագրական թանգարանը այցելուներու համար բաց է ամէն օր ժամը 9էն մինչև կէսօր, բացի տօնական օրերէ և ամառնային արձակուրդէն:

S. D. MALKHASSIAN FRÈRES

1, Rue Cheikh Ibrahim Pacha, Alexandrie

Ամէն տեսակ պատուական կարգի պատրաստութեան ու հայթայթման համար Մալխասեան եղբարց Տունը ամենէն յանձնարարելին է Աղեքսանդրիոյ մէջ: Թէլէֆօն՝ 42-86 Փոսթարկը՝ 463

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԱՃԱՌ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ (Institut Français d'Archéologie Orientale du Caire).

Հիմնուած է 1880ին: Տնօրէնն է Պ. Ժօսփ Ֆուքսան: Ունի հինգ անդամ և բազմաթիւ ընկերակիցներ (associés):

Կը հրատարակէ յուշագրութիւններ, տեղեկագիրներ և «Bibliothèque d'Études»:

Կեդրոնատեղին է Մուսնեբա Բալէյս, Շարա Մուսնեբա, թիւ 37, Գահիրէ:

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ (Cairo Scientific Society). — Հիմնուած է 1898ին: Հասցէն է՝ The Secretary, Cairo Scientific Society, Survey Department, Giza (Mudiria).

Ունի հարիւրի չափ անդամներ:

Իր նիստերուն տեղեկագրութիւնները կը հրատարակէ Cairo Scientific Journalին մէջ:

Նիստ կը գումարէ ամիսը երկու անգամ, ձմեռը, հինգշաբթի օրերը Քասր էլ Այնիի Բժշկական Վարժարանին մէջ:

ԱԿՆԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ (Ophthalmological Society of Egypt). — Հիմնուած է 1902ին: Հասցէն է՝ c/o Department of Public Health, Cairo.

Կը հրատարակէ տարեկան տեղեկագիրներ:

ՄԻՋՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ (Société Entomologique d'Égypte). — Հիմնուած է 1907ին: Ընկերութեան ընդհանուր քարտուղարին հասցէն է՝ P. O. Box 430, Գահիրէ:

Կը հրատարակէ յուշագրութիւններ և տեղեկագիրներ:

Նիստ կը գումարէ իւրաքանչիւր ամսոյ առաջին չորեքշաբթին, ժամը 6ին [յ. մ.] (բացի Յուլիս, Օգոստոս և Սեպտեմբեր ամիսներէն) Եգիպտական Կանաւոն սրահին մէջ:

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ (Société d'Histoire Naturelle d'Alexandrie. —

Հիմնուած է 1908ին: Ունի ութսուն անդամ: Պարբերաբար կը հրատարակէ յուշագրութիւններ:

Նիստ կը գումարէ իւրաքանչիւր ամսոյ առաջին շաբաթ օրը, Նոյեմբերէն մինչև Յունիս, Աղեքսանդրիոյ Առողջապահական Վարչութեան սրահին մէջ:

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԸՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ, ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԵԱՆ (Société Sultanienne d'Economie Politique, de Statistique et de Législation. — Հիմնուած է 1909ին: Շարա Կամի Շարքաս, թիւ 24:

Ունի չորս հարիւր եօթը անդամ:

Կը հրատարակէ L'Égypte Contemporaine անուն հանդէսը:

Նիստ կը գումարէ ընդհանրապէս Ուրբաթ օրերը Նոյեմբերէն մինչև Մայիս:

Հասցէն է՝ P. O. Box 732, Գահիրէ:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ (Société Archéologique d'Alexandrie). — Ընկերութեան անդամակցութեան, հրատարակութեանց փոխանակութեան և թղթակցութեան համար գիմել Տոքդ. E. Brerecciaի, Տնօրէն Աղեքսանդրիոյ Թանգարանին:

Ընկերութեան հրատարակութեանց ցանկը ուզողներուն ձրի կը զրկուի:

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ. — Երկրաբանական Թանգարանը կը պարունակէ գլխաւորաբար Եգիպտոսի վերաբերեալ երկրաբանական հաւաքածոներ: Կը գըտնուի Գահիրէ, Հանրօգուտ Գործոց նախարարութեան



Վ. Ա. ՃԱՌ. Ա. ԿԱՆ. ԴԵՐՉԱԿ

17, Պուլվար Բամլէ, Աղեքսանդրիա

Անստգիւտ ձաշակ, ամենաընտիր ապրանքներ և չափաւոր գիներ: — Փորձ մը կը բաւէ մեզի ընդ միշտ կապուելու համար:

պարտէզին մէջ: Մուտքը ազատ է: Ուրբաթ և կառավարական տօնական օրերը փակ է:

Վերի յարկին մէջ ցուցադրուած առարկաներուն մէջ ամենէն հետաքրքրականներն են մեծ սանաւորներու բրածոները՝ Ֆայումէն բերուած (և մասնաւորապէս միակ Արսինթէրիոմի գանկը), օդաքարերու հաւաքածոյ մը որ կը պարունակէ 1911ին Աղեքսանդրիոյ մօտ ինկած օդաքար մը, և Եգիպտոսի հանքային հարստութիւններու, ժայռերու և փոքրագոյն բրածոներու յատկանշական հաւաքածոներ:

Գեանայարկին մէջ ցուցադրուած են շինութեան քարեր, հրերու պեղման գործօղութեանց նմոյշներ և ուրիշ անտեսական արտադրութեանց օրինակներ, ինչպէս կապարի և պղինձի հանածոներ, աղ, բուռ (gypse), և շն: Կեդրոնական սրահին մէջ կը գտնուի բրածոյ փայտ, պաղպղղէ սիւներ՝ Ապու Հապէլէ բերուած, և Եգիպտոսի հանքային հարստութեանց նմոյշները պարունակող ցուցափեղկեր, ինչպէս նաև եգիպտական յատկանշական բրածոներու հաւաքածոյ մը:

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՄՍՏԵՆՍԻԱՐՍԱՆ (Միտան Պապ էլ Խալգ, Գահիրէ). — Սուլթանական Մատենադարանը հիմնուած է 1869ին և արդի շէնքին մէջ փոխադրուած՝ 1904ի սկիզբները:

Մատենադարանը կը պարունակէ 85,000 ձեռագիր և տպագիր, սրոնց 38,000ը արաբերէն են, 4000ը՝ թուրքերէն, պարսկերէն և հնդկերէն: Եւրոպական գիրքերուն թիւը 43,000 է: Մատենադարանին ամենէն հին ձեռագիրն է Բիսալիք էլ Շամիլ՝ գրուած էլ Շաֆիի աշակերտներէն էլ Բապի իպն Սօլիման էլ Մօրատիի կողմէ, Հիճրէթի 265 թուականին (878 Ք. Ե.):

Մատենադարանը հանրութեան համար բաց է երկուշաբթիէ զատ ամէն օր: Ընթերցասրահին և ցուցադրութեան սրահին մուտքը ազատ է: Ուսումնասիրութեան համար կարելի է գիրք փոխ առնել առնուազն ամսական 35 ոսկի ստացող կառավարական պաշտօնեայի մը կամ անօրէնին ծանօթ և Գահիրէ բնակող ուրիշ պատասխանատու անձի մը յանձնարարութեամբ:

Ասկէ զատ, անօրէնը եթէ հարկ տեսնէ, իբր երաշխաւորութիւն՝ աւանդ գումար մը կրնայ պահանջել:

Մատենադարանին հասոյթի ազդիւրներն են (1) 1600 ֆէտտան վագֆ հող և (2) Էվզաֆի նախարարութեան կողմէ վճարուած տարեկան 500 Ե. Ոսկույ գումար մը:

Մատենադարանին վարչութիւնը յանձնուած է ժողովի մը օրուն նախագահն է Հանրային Կրթութեան նախարարը:

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՕԲԵՐՍԱՆ. — Օբէրան հիմնուած է Խտիվ Իամայիլ փաշայի կողմէ 1869ին Սուէզի Ջրանցքին բացման առթիւ, և շինուած է հինգ ամսուան շատ կարճ ժամանակամիջոցի մը մէջ, ճարտարապետ Պ. Ավոսքանիի հսկողութեան տակ: Բացումը կատարուած է 1869 Նոյեմբեր 1ին, «Ռիկօլէթթօ» օրերայով:

Սէզօնը ընդհանրապէս կսկսի իւրաքանչիւր տարուայ Նոյեմբերի վերջերը և կը վերջանայ Ապրիլ 30ին:

Օբերային մէջ տրուած ներկայացումները կը բաղկանան (1) Եօթանասունըհինգ Փրանսական կամ իտալական օբերայէ, վարձակալին հետ կնքուած պայմանագրութեան համաձայն:

(2) Կառավարութեան կողմէ ձանջուած բարենպաստակ ընկերութիւններու կողմէ կազմակերպուած ներկայացումներէ:

(3) Արաբական ներկայացումներու շարք մը որոնք ընդհանրապէս Օբերային սէզօնը վերջանալէն յետոյ կը տրուին:

Հագուստները և բեմայարդարութեան համար պէտք

CORDONNERIE AU LION D'OR

Ա. ԲԱՐԹԸԵԱՆ

26, Ղպիմերու եկեղեցիին փողոցը - Աղեխանդիխ

Չափի վրայ կօշիկներ արանց և կանանց համար: Դիմացկութիւնը երաշխաւորուած է և զինները չափաւոր:

եղած առարկաները կը հայթայթէ Օրերային Վարչութիւնը :

Օրերային շէնքին մէջ կը գտնուի Երաժշտական Մատենադարան մը որ 700 հատոր օրերայի, օրերէթի և պալէթի partitions կը պարունակէ, ինչպէս նաև գրադարան մը թատրոնի պատմութեան և արուեստի վերաբերեալ երկերու :

Դիւանատունը կը պարունակէ բացի սովորական հաշիւներէ, վարչական թուղթերէ, և ինչ, Իսմայիլ փաշայի իշխանութեան շրջանի Օրերայի Վարչութեան կողմէ կատարուած ստուար թղթակցութեան մը կրկնակ օրինակները, թղթակցութիւն որ պատմական մեծ արժէք կը ներկայացնէ :

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԳՈՂԱՐԱՏՈՒՓՔ

Քու երազուն աչքերուդ մեղամաղձոս լիւնի մէջ,
Ուր մեղկանք կը նաւե հրմայններով անընդմեջ,
Կ'ուզեմ լուծուիմ գտնել առեղծուածից մե՛տակայ,
Ու լուսաւոզ բիբերուդ շառայից մէջ կը խոկայ :

Մի՛ փակեր դուն աչուրներդ, որպէս զի ես հոն կարդամ
Ամբողջ խրոսկեր արժիդ քու նայուածքիդ մէջ սարսամ,
Բա՛ց վարագոյրք հոգւոյդ, հոգւոյդ ամբիժ, բըրբըռուն,
Ու սահաւ վեր բարձրացո՛ւր շարք սեւ բարբիջներուն :

Աչքերդ բա՛ց. նայուածքս պիտի սուգի մեղմօրէն,
Մինչեւ հոն ուր անուրջներ քու գաղտնիքդ կ'օրօրեն,
Կ'ուզեմ գիտնալ այն ինչ որ շրթունքներդ չեն քսեր,
Ինչ որ պահել կը ջանայ եռթիւնդ մեղկասեր :

Կը վարանիս դուն սակայն : Արեւանուներդ միտս գոց,
Բառեր կ'ելլեն անորո՞ւս արժիդ խորէն ալեկո՛ծ,
Նւ կը խորհիմ քե՛ աչքերդ, քու սեւ աչքերդ, զոյգ ֆերբուած,
Կոյս սուփեր են գոհարի ուր գաղտնիք մը կայ պահուած :

1917 Գանիւրէ

ՅԱԿՈՒ ԱՂԱԶԱՐՍ

Ե Փ Ր Ա Տ

Բարեկամիս՝ Փիլիբ Վանեանից

Երբեմն աւել կենսայորդ
Եղեմական հոգերու՝
Դիակներու հեղեղ մըն է ան այսօր,
Որ գալարուն ինչպէս բողբոջ մը լուին
Օձապըտոյա կը թաւալի, կը սահի,
Ցաւի աշխարհն ահօսելով, ճեղքելով . . .
Նւ ուռիները լալկան,
Կողկողագին անոր վրայ կը հակին՝
Իրենց ճապուկ մանրատերեւ ստերէն,
Ձինջ ցօղի տեղ, կարմիր արիւն թորելով . . .
Կը թաւալի՛ : Գեան է վեհ,
Եղեմաբուզիս գետը յորդ,
Ճողփիւն չունի, սակայն, այսօր, անիկա,
Մահը գրկած կը փախի . . .
Ա՛լ չեն իջնար քովն կաքանները խայտիտ,
Առաւօտով ցողաթուրով,
Ո՛չ ալ արտոյտ մը գուարթ
Կուգայ այնտեղ՝ իր կոկիկ բոյնը դընել :
Ու գարունին, յակընթած իր թեւերով
Թիթեռնիկները թեթեւ,
Ա՛լ չեն թառիւր ծաղիկներու վրայ, հոն,
Ու թաւուտը ինձ օրին մէջ, և բլուրին կողն ի վեր
Փոքրիկ մասաղ ուլերու
Կճղակին հեաքն ի գո՛ւր, ի գո՛ւր կ'որոնես . . .
Հոն չէ հովիւն, ու սըրինգն իր մեղմաւո՛ւ,
Ձի թրթռար ա՛լ խորհուրդին մէջ անտառին՝
Կեանքի շունչով մը դեղուն :
Ձիւնհալէն վերջ մեր դաշտերէն ծաղկալի,
Գառնուկներու հօտերը ա՛լ չեն անցնիր՝
Մայիւններով անմեղուկ՝
Դէպի ափերդ, ո՛վ Եփրատ, դէպի գերկըզ վաղելով . . .

Միրահարներն ալիքներուդ սարսուռին
 Ու քու դիւթող ու վե՛ափառ սահանքիդ ,
 Որ կուգային ամերուդ մօտ , երազել ,
 Չի՛կան այսօր : — Եւ հագիներ հրեշտակի՛
 Անմեղօրէն սիրարբած ,
 Որ ժամագիր կ'ըլլային
 Քու հովանուտ ծառերուդ տակ գաղանապահ ,
 Լուսնակէն իսկ պահելով իրենց սէրերն ամէկտա ,
 Եւ իրենց լոյժ համբոյրին շոշափն աղու երկիւղած
 Քու մրմունջիդ խառնելով՝ կը քալէին թե թեւի՛
 Չի՛կան այսօր : — Ո՛չ ալ գոյգերը գեղջուկ .
 Որ ցորենի նոր հնձուած արտերու
 Լէք սակեվարս սրաներուն շուքին տակ՝
 Պինդ գրկուած՝ կը սողմէին կեանքն ամուր
 Իրենց ցեղին : Մինչ իրենցմէ քոյլ մ'անդին
 Մանկիկ մ'անուշ , գեւ նոր ծնած , կը ճըւտը .
 Մայրը անոր , ժիր գեղջուհի մը բամբիչ ,
 Մուցած ցուերն իր դաժան ,
 Հող կը ցանէր , ժպտագին ,
 Մանկան խոնսու մարմնոյն վրայ , ազի տեղ ,
 Ու կը շինէր յարգը փափուկ անկողին .
 Կուգար հայրն ալ , արտին մէջէն վազելով
 Գգուել գաւաին իր ձեռքերովը հողոտ ,
 Չի՛կան անտէր : — Խօսէ՛ , Եփրատ , ս՛ւր են ս՛ւր . . .
 Դո՛ւն չես խօսիր . անգոհ մ'հոգիդ կը խածնէ ,
 Մահէն տաղուած հով մը կուլայ՝ մինակուկ՝
 Ափերուդ վրայ , երբեմն շէնչող ու զուարթ .
 Ու կը չոքի խաւար մը հոն՝ սե ու հոժ ,
 Գերեզմանի կափարիչի մը պէս ծանր . . .
 Ո՛ւր են Եփրատ , ս՛ւր են այգերդ սակեցողք ,
 Ո՛ր ամպին մէջ սուզեցան .
 Ո՛ր հորիզոնն ահառեսիլ ու ցասկոտ
 Խեղդեց զանոնք՝ իր ծոցին մէջ մթամած .
 Ու շիրմային խոր լուսթիւն մը հիմա ,
 Իր մահասարս ծանրութիւնը կը հեղու
 Վազքիդ վըրայ գահավէժ .
 Ու հո՛ն գտող սպառաժներն իսկ՝ կարծես՝
 Զարհուրանքէ համբացած ,

Կը մնան լո՛ւռ , դողահա՛ր . . .
 Եփրատ , երբեմն հայլի երկնից սատղերուն
 Իւ ամպերու ու շանթերու դո՛ւն աղբիւր ,
 Ու ծովերու մա՛յր վսեմ ,
 Խօսէ՛ , ս՛ւր են , ս՛ւր՝ ալիքներդ նըշողուն
 Որոնց վրայ , օր մ'Արարիչն օրօրեց
 Իր մանկութիւնն հրաշափառ .
 Ուր դարերն ալ , նոր փրթած
 Ժամանակին արգանդէն ,
 Իրենց առջի արշալոյսներն քթթեցին .
 Ու նախամարդը եկաւ
 Ափիդ զարնել իր լայն վրանն սպիտակ ,
 Պայծառ ջուրիդ երգերուն տակ հեշտամբափ
 Արգելքի ծառն երազելով , տենջարով . —
 Խօսէ՛ , Եփրատ , ս՛ւր են հիմա այս ամենն . . .
 — Ժանտին հեղեղն անցաւ ասկէ մոնջմամբ ,
 Կեանքի հունձքով բեռնաւոր ,
 — Որոտաց ան — ու հալած
 Կապարն , — ըսաւ — հրացաններէն դուրս թափուող
 Ակօսեց իմ գաշտերս բերրի , կենսածիլ ,
 Որոնց մէջէն հոսեցաւ
 Արիւնը ուղիս զաւակներուս գեղահեր .
 Ու մխացին իմ անտառներս՝ ջարդուած ,
 Սոսկավիթխար սոււմբերէ . . .
 Մայրեր ինկան ցնորակոժ հերարձակ ,
 Իմ գոգիս մէջ՝ իրենց մանկիկը գրկած :
 Ու հայ կոյսեր՝ ուրուրներէ հալածուած ,
 Զահանդագին՝ ինչպէս անմեղ թռչնիկներ ,
 Հօյլ հոյլ եկան գրկիս մէջ
 Պահել իրենց անբիժ պատիւն ամենի .
 Ու թափեցան այնքան կեանքեր մարդկային
 Ալքերուս մէջ խաւոված ,
 Որ ես դարձայ գերեզմանոց մը շարժուն ,
 Մինչև չրթներս դիակներով աւլըցուն . . .
 Ո՛ղբ մըն եմ ես , սղբ մը հիմա , ու կուլամ ,
 Զայնս ձըգած՝ սատղերն ի վեր՝ առանձին ,
 Զի Արարա՛ն իսկ այեփառ ու հուժկու ,
 Այս մարդկային աննախընթաց սպանդին

Վրայ՝ երկար ծռելէն ա՛լ յուսահատ :
 Գլուխն ամպին մխրճեց ,
 Եւ հսկայի խռովքին մէջ մենաւոր ,
 Իր որբութիւնն հեծկտաց . . .
 Ու կ'անցնիմ ես , կ'անցնիմ անձայն անըջուկ ,
 Մահուան մըռայլ ճամբաներէն ամայի ,
 Գալարուելով կոյր խաւարին ծոցն ի վեր .
 Ոճիրը՝ սև օձի մը պէս թունաւոր ,
 Կը պըլլուի եղերքներուս ուժգնապիրկ՝
 Արիւն ու կրակ թքնելով . . .
 Զայներ կ'առնեմ անցքիս վրայ հեռուէն ,
 Տէր էլ Զօրէն , ու Թաքքաէն , Հաւրանէն ,
 Հռնդիւններ օրհասի ,
 Որ կը մարին , կը մեռնին ,
 Իրենց հուսկ շունչն իբրև անէծք մ'ոխերիմ ,
 Բռունցքնուն հետ՝ երկինքն ի վեր մխրճած . . .
 Զայներ . . . Կուլան . — Նօթիններն են ասնջարեկ ,
 Անբարեկամ աւազուտքին մէջ լքուած ,
 Որ դեռ մահէն առաջ՝ կեանքին կը կառչին
 Յամառութեամբ մ'յուսահատ . . .
 Ետիս ձգած , սակայն , ձայներն այդ կոծող ,
 Ես կշտապիմ մեծ ծովերու հեռաւոր
 Ափերուն վրայ ցիրուցան
 Հայորդիները գտնելու , և անոնց ,
 Անոնց գոնէ պատմելու
 Արիւնն ամեն և ոճիրներն անաւոր ,
 Որոնց եղայ ականատեսը դժբախտ ,
 Եւ Մարդկութեան խղճմտանքին բաղխելու
 Դիակնակոյտ իմ ալիքներս զերդ բողոք . . .
 Կերթամ , կ'երթամ , ես անդադրում ասհանքով ,
 Աղէտաշխարհն ակօսելէն , ձեզքելէն ,
 Եւ իմ պղտոր , արիւնյուտայ ջուրերովս
 Ուռգելէն ծիլերը սև վրէժին ,
 Գարանակալ ծոցն հայրենի հողերուն . . . :

Մ. ՈՍԿԵԱՆ



ԳԵԼԵՆԻՆ ՄԵՋԵՆ

ՀԱՅ ՄՕՐ ՄԸ ՇԵՐՈՍԱԿԱՆ ԿՈՐՈՎԸ

Հայրենի արհաւիրքին մէջէն Հայուհին անգամ մըն
 ալ մեզ ցուագինօրէն սքանչացուց ո՛չ միայն տառա-



Տիկին Եսթեր Թ. Մկրտչեան

պանքի իր գերմարտեկալից դիմաքառու մեծութիւնը , այլ

համատարած չարիքին դէմ իր գիւցաղնական խիզախումներովը :

Ուրֆայի, Գարահրսարի, Տիգրանակերտի մէջ և



Մայր ևւ իր վեց ձագուկները ; Արախի, Երուանդ, Չենոբ, Արսէն, Ալլա, Արմինէ :

այլուր, եթէ մեր քոյրերը՝ իրենց տղամարդերուն կողքին մինչև վերջը մաքառելով ինկան գէն ի ձեռին, ուրիշներ, նուազ եղերական շատափով մը, բայց նո՛յնքան

վսեմ անձնու իրութեամբ բարձրացուցին՝ ցեղին օրհասական հմայքը :

Այս վերջիններէն հզօր կերպարանք մը, մօր ու



Քիւրճի սարազով ծոցումս փոխոստիկան կարաւանը

Հայուհիի հագուազիւտ տիպար մը հանդիսացաւ Տիկին Եսթեր Թ. Մկրտիչեան, Տիգրանակերտի և Խարբերդի նախկին անգլիական դեր-հիւպատոս՝ Թովմաս Էֆէնտի Մկրտիչեանի կինը :

Իր վեց զաւակներով հայալինջ աղէտի փոթորիկին բռնուած, Տիկին Եսթեր Մկրտիչեան, առնական քա- շարտութեամբ մը, միս-մինակ կուրծք կուտայ ան- հնարին ալքեղքներու, և ոճիրի ու մասնութեան բոլոր դարաններուն մէջէն կը յաջողի իր վեց սիրասուն զաւ- կըններուն կարաւանն առաջնորդել Խարբերգէն դէպի Կովկաս:

Ամերիկեան միախօնարութիւնն ինքզինքը անկա- րող կը զգար այլեւս ապաստան տալու Մկրտիչեան ընտանիքին: Հիւպատոսը Տիկին Եսթերին փախուստի ծրագիրը «խենթութիւն» կ'որակէր: Գերման միախօնա- րութիւնը թուրք դահիճներուն կը մասնանշէր քաջարի մայրն ու իր վեց ձագուկները այնպիսի ատեն մը, ուր վճռուած էր տասը տարեկանէն վեր բոլոր Հայորդի- ները բնաջնջել: Երկու թուրքեր աւելի մարդկային կ'ըլլան քան քրիստոնէութեան գերման ներկայացու- ցիչները, և Տիկին Եսթերին կ'աջակցին՝ խորհուրդ տալով անոր Տէրսիմ անցնիլ ընտանեօք՝ Քիւրտէ տա- րազով ծպտուած:

Ճամբայ կ'իյնան հետիոտն, ու ահագին տաժանք- ներու մէջէն քաշկռտուելով՝ կը համնին փախուստի ա- ռալին հանգրուանը: Տէրսիմէն մինչև Երզնկա կը քա- լին նոյն վտանգներուն մէջէն, մինչ թուրք կառավա- րութիւնը տարբեր ուղղութեամբ կը հետապնդէր զի- րենք: Երզնկայէն Կարին և անկէ Տփղիս Մկրտիչեան ընտանիքը, թէև գերծ այլեւս թրքական մղձաւանջէն, զրկանքի ու տառապանքի բաժակը կը քամէ ստիպոյն, ցմբուր:

Տիկին Եսթեր Մկրտիչեան՝ իրեններուն հետ ապա- հովութեան գիրկը համնելէ յետոյ՝ իր գերը վերջացած չի նկատեր. իր մայրական պարտականութիւնը հերոսա- բար կատարելէ հօքը, իբրև Հայուհի պարտք կը զգայ ցեղին ծառայել իր ականատեսի վկայութիւններն ամ- փոփելով երկար տեղեկագրի մը մէջ, որ ի մօտոյ լոյս պիտի տեսնէ անգլիերէն և ֆրանսերէն լեզուներով:

Պատիւ կտրիճ մօր և ընտիր Հայուհիին...



“ՌՕՍԻԱ”

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Cie d'Assurances “ROSSIA”

ԱՐՏՕՆՈՒԱԾ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՈՎ՝ 20 ՄԱՐՏ 1881ԻԳ

Կեդրոն Ընկերութեան — Փեթրօհրաս, իր սեփական շէնք
Իրանագլուխ (ամբողջապէս վնարուած) Բուլղի 5,000,000
Երաւխաւորութեան գումար Ֆրանք 273,000,000
Ապահովագրեալներուն ցարդ վնարուած » 933,162,266
Բերիլ եւ սոկոս՝ usացուած 1912 արեւելքանին » 160,684,178

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ — Փոխադրութեան վստահու- րու դէմ ապահովագրութիւններ — Կեանքի ապահովագրու- րութիւններ շոգեկանով ու շոգեմաւով նախորդութեան ար- կածներու դէմ — Ապահովագրութիւններ ապակիներու կոս- րուելուն համար:

ԱՄԷՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԴՈՄԵՆ

ԳԱՀԻՐԷ՝ Ընկերութեան եգիպտոսի Մասնանիւղին, Բլաս սը լ'Օբերա, Ապսէլ Հակ-էլ-Սոմպարի փողոց, քիւ 2: Նամա- կասուփ 10-24: Թիլեթօն 13-13:

ԱՂԵՔՍՍՆԻՐԻՍ՝ Ընկերութեան Ընդհանուր Գործակալու- րեան, Էնիպօրն Պոնսրս Ուերհաուզ Լիմիթթըս ընկերութեան մօտ: Նամակասուփ՝ 482: Թիլեթօն՝ 10-87:

Իււառական բոլոր գլխաւոր քաղաքներուն մէջ՝ Ընկե- րութեան Գործակալութիւններուն:

Ընդհ. Գործակալութիւն Սուրիոյ եւ Պաղեստինի:
Պէյրուք, նամակասուփ քիւ 161:

Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ Ա.ՏԱՂ.ԶԱ.ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ՄԵՔԵՆԱԿԱՆ ԱՂԱՑԲ

Հարէր-էլ-Ֆարահէ փողոց, Աղեֆանդրիա

ԹԷԼԷՅՕՆ 12-10

Կը հայրապետն ամէն ճեսակ շինութեանց փայտեր

ԱՇՆԱՆԱՄՈՒՏ



Աշուն, տերեւաթափ, բանաստեղծութիւն... Տեղը չէ կարօտագին հառաչելու. ռՄԷր են հերուան ձիւները... Վայր մը կա՛յ, արդեօք, բոլոր հեռուներուն ու այլուրներուն մէջ, կա՛յ վայր մը, անկիւն. բարձունք կամ հովիտ, ուր հոգիներ դեռ անձնատուր ըլլային՝ անխառն հաճութեամբ՝ աշնանամուտի մերամտգծի քաղցրութիւններուն... Մարդիկ պատուեցին կեանքի ու բնութեան յաւերժական քերթուածը պայծառ, զայն արիւնով լրդճեցին, ու անէացումի իրենց երկնած համայնածախ տուամին մասլ արհաւիրքովը խափանեցին... Երկինքն ա՛լ չի ժպտիր մեզի, ու հորիզոններն աղէտողում՝ ծամածռութիւններ սենին հիմա, անսահման կմախացեալ կզակներու շարաշուք կափկափումները, կարծես...

Աշնանային առաջին ցրտաշունչ հովերը մեզ կը սարսռացնեն արդէն պակասցիչ անդոհովը մօտարւտ ձմեռին, որ՝ գաղջ ու հեշտին ինքնամիտփումներու, բեղմնաւոր խտացումներու և խորացումներու յոյսն արթնցնելէ հետի՝ փոթորիկին, բուք-բոբանին ու տարբերու այստհար շղթայալերծումին մէջտեղ շարունակուելիք մարդկային տիտանական գոյամարտին զարհուրանքովը կը սպառնայ...

Ֆրանսորէն մինչև Պաղտատ, Իրաւունքի ու Ազատութեան անընկճելի բանակները՝ խրամատներու տիղմին մէջ ու սառած սեպութիւններու վրայ՝ ձմեռ մըն ալ, անհունօրէն, պիտի մաքառին, անպատիր խաղաղութեան մը գարուններն ապահովելու համար ներկայ ու գալիք սերունդներուն:

Ու անվհեր ու անվարան վճռականութեան կեցուածքը սրով անոնք կը դիմադրաւեն անխուսափելի — թէև գերմարդկային — տաժանքը ձմեռնային չորբորդ մարտաշրջանի մը՝ խղճահար կը խռովէ քեզի, որ սենեակիդ հանգարտութեանը մէջ իսկ կը տկարանաս

Ղիզերդ պրկիլու՝ անոնց դիւցազնական յանձնառութիւնն քմբոնելու համար միայն:

Աշուն, տերեւաթափ, — հիւանդի զառանցանք... Սթափէ՛, մարդ, տերև չի մնաց որ յուշիկ թափի ու օրօրէ քու վատուժ երազանքդ... Նայէ՛ ամէն կողմ, Արկօնէն մինչև Տարօն, բոլոր ծառերն հնձուեցան Կալիււին անողօք երկաթակրակէն, և Աշունն իր անապատան մերկութիւնը կը փախցնէ անա՛ սուխններու յարաշարժ անտառներուն հտեւէն... Տանջուօղ մարդկութիւնն է որ հիմա կը թուի փոխարինել բնութեան աշնանային պատկերները... Տերաւաթափն է ցեղին հրակայական կազնիին որուն դլխուն մրրիկներուն ամենէն ահաւորն ու անազօրոյնը պայթեցաւ... Փօքր-Ասիոյ ու Միջագետքի ամայութիւնները լեցուեցան փոթորկավար տերեւներու եղերական սօսաւիւնովը, որ հեծութեան ու հանդիւններու խուլ ու խելայեղ ժխորի մը նմանեցաւ յաւէտ... Ու մինչև սա՛ երջանիկ ափերն եկան մեկուսի կուտակուել անոնցմէ հաղարաւորներ՝ ճակատ ու կուրծք տալով աղէտքի յանկարծահողմին, և անոր առջեւէն՝ բռնելով ծովուն կապոյտ ու ազատ ճամբան...

Տերեւաթափ... Բայց մարդկային այս կենսունակ տերեւներուն անկումն ու տարտղնումը ոչինչ ունեցաւ

ԺԻԻԼ ԲԱԲԱԶԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

7, Թուսում Փառա փողոց, Աղեխանդրիա
ԹԻՒԼԷՅՅՕՆ 17-80

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԿՏՈՐՆԵՐ
ԴԱՇՆԱԿՆԵՐ

Միակ ներկայացուցիչ ALLISON անգլ. հոշակաւոր
դաշնակներու Տան
Ամէն տեսակ նուագարաններ, նուագարաններու քելեր
ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Բաժանորդագրութիւն դաշնակներու հոգասարուրեան
էւ դաշնամայնութիւն
Վաճառում, Վարձում, Փոխանակութիւն

ընական ու աշնանային: Անոնք, բոլորն ալ բռնի բաժնըւեցան, փրցուեցան հայրենի կաղնիին ճիւղերէն, արժգունամ, գօսացած չէին, ինչպէս արտագաղթի սովորական կորուսանները կազմող հողիներն հայրենուրաց... Ու անոնք կը սարսուան, ու պիտի սարսուան մինչև վերջը, վերագարձին կարօտատանջ անձկանքովը:

Մեր հերոսական Սուէտեացիներուն շուրջը բնորոշ ու աղետարշ միջնագէտ մը կը պատմեն: — Երբ իրենց կտրիճներուն լանջքերովը պատնէշուած ճամբէն՝ մեր գեղջու կները ճիժ ու սիժերով ծովափ իջան մարտանաւ փոխադրուելու համար, կիները նախ մերժեցին մտնել զիրենք տանելու եկած նաւակները, ու սկսան լալ, կոծել, մագերնին փետթել ու հզերքի ժայռերուն կառչիլ իրենց եղունգներաջն ու ախաններովը... Հայրենի հողէն զատուելու վիճան էր որ զիրենք կը խենթեցնէր հող, թէ իրենց կտակածանքը ծովուն հանգէպ, ծովուն, նենգ ու անձանթ տարրին, զոր վարժուեր էին հեռուէն, բարձրէն, գիտել, րայց որուն երբէք չէին մտածեր օր մը օրանց յանձնուիլ... Երկու զգացումներն ալ հաւատարապէս կային Սուէտուէիներուն այս զանանդանքին մէջ... Ֆրանսացի նաւագները, մինչև ուսերնին ջուրը թաթխուած, չեն յաջողիր խօսք հասկըցնել փրկութեան սեմին վրայ ընկրկող իրենց այս եղկելի պաշտպանեալներուն... Հրամանատարը կը ջլագրգուուի, ու անհամբեր շեշտով մը կը գոչէ, յանկարծ, նաւագներուն. «Նախ երախաները կորզեցէք իրենց ծնողներուն գրկէն»... Հրամանը կը գործադրուի անմիջապէս, ու տեսարանը նոյնհետայն կը փոխուի... Իրենց ձագուկներէն զրկուած մայրերը, ամենքը մէկ ծովը թափուելու հերարձակ ծագացուածով մը, նաւակները նետուելու յօժարութիւն կը յայտնեն, այս ան-

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ

Աղեհամարիա, Մեվլայի Մօհամմէս փողոց թիւ 1

Կաշեղէն և կօշիկի վերաբերեալ ամէն տեսակ ընտիր ապրանքներ, փոքրաքանակ և մեծաքանակ: Գիներու զիւրամատչելութեան կողմէ անմրցելի:

գամ, թախանձագին, ու փոխադրութիւնը վայրկենաբար կը կատարուի:

Տերեւաթափ, քայքայում, վայրավանսում... Չէ, թաղմանական յաճումը չէ՛ ասիկա կորտուած ու մահացած ուժերու... Այս բեկորները կ'ապրին անպարտելի կենսունակութեամբ մը, և վերագտումներու, վերանորոգումներու, վերածնունդներու հաւատքովը ահաղձուն... Սրտապնդուէ՛, տարագիր, վասն զի մինչև քու մօտերդ հասած կիլիկեան սա՛ խլեակներն իսկ ցոյց կուտան որ ցեղին դարուօր կաղնին չի մեռնիր, անգին, քսամնելի թաթառին տակ, փոյթ չէ՛ թէ ջարդըւին, կոշկոճուին ու ցիր ու ցան քշուին իր սաղարդները: Բարբարոսութեան տապար: առաջին անգամը չէ՛ որ կ'իջնայ անոր կոճղին: Բայց ս'ըքան ալ լայնափետել ըլլան պատուածքները, ս'ըքան ալ զաժան ու վայրագ՝ հարուածները, պիտի չի՛ կրնան, հաւտա՛, պիտի չի՛ կրնան երբէ՛ք խլել հայրենի հողին մէջէն ցեղին արմատներուն խորհրդաւոր, անկորնչելի, հրաշագործ զօրութիւնը...:

M. AVATIS

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԳՐԱՎԱՃԱՌԸ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Գլխաւոր վաճառատուներն են՝
Դանիբէի մեջ՝ Մաղրապի փողոց (Թըրֆ Քըլպի դեմաց), Շէփըրտս Հօթելի առջև, Քասը-էլ-Նիլ փողոց:
Աղեհամարիոյ մեջ՝ Շէրիֆ Փաշա փողոց, թիւ 17,
Անսիէն Պուրս փողոց, թիւ 2:

Աղեքսանդրիոյ Շէրիֆ Փաշա փողոցի մեծ վաճառատան մէջ կը գտնէք՝ բացի անդլիական ամէն տեսակ հրատարակութիւններէ՝ ֆրանսերէն նորագոյն հատորները, պարբերականները, մօտի և այլ պատկերազարդ հանդէսները: Թէլէֆօն՝ 656:

Ներկայացուցիչ՝ ՀԱՅԿ ԱՌԻԿԵԱՆ:

ԵԳԻՊՏԱՀԱՅՐ

ԵՒ

ԼԱՅԿԱԿԱՆ ԼԱՐՅԸ

Ա.

Եգիպտոսը՝ մանաւանդ իր աշխարհագրական դիրքին բերմամբ՝ անյիշատակ ժամանակներէ ի վեր կարեւոր հայ գաղթավայր մը եղած ըլլալ կը թուի, որուն կապուած են մեր ազգային կեանքի տխուր դրուագներէն մէկ քանին, ինչպէս և բազմաթիւ պատմական յիշատակներ: Շահեկանութենէ զուրկ չպիտի ըլլար՝ հայ կեանքի այս ահաւոր ձգնաժամին՝ անդրադառնալ պահիկ մը այդ անցեալին վրայ: Եգիպտոս ամենահին թուականէ մը սկսեալ պէտք էր ուշադրութիւնը գրաւած ըլլար մեր նախնիքներուն, որոնք հնութեան մէջ երկար ատեն իբր վաճառական ժողովուրդ, ցամաքի վրայ խաղաղին այն դերը՝ ինչ որ Փիւնիկեցիները՝ ծովուն վրայ: Վարկած՝ զոր հիմնաւորելու համար բաւական պիտի ըլլար յիշատակել Գ. և Ն. դարերուն հայ ուսանողներու հասանքը Աղեքսանդրիոյ մէջ, որ Ոսկեգարու շարժումին ղեկավարը եղաւ և ազգակը՝ ազգային գիտակցութեան մը խմորումին: Քրիստոնէութեան ամենէն մեծ վառարաններէն մէկն էր Աղեքսանդրիան, որուն դպրոցին գերազօր ազդեցութիւնը կը կրէր անհրաժեշտօրէն Ոսկեգարու Հայ Գրականութիւնն ալ իր կարգին: Արդէն, Գրի Գիււաէն և Աստուածաշունչի Թարգմանութիւնէն ետքը, Հայ Թարգմանիչներու առաջին դործը եղած էր հայերէնի վերածել Աղեքսանդրիոյ դպրոցին պատկանող հեղինակաւոր եկեղեցական հայրերու կարեւորագոյն գործերը, որոնցմէ մէկ քանիները հասած են մեր ձեռքը:

Չորս հինգ դարեր հազիւ անցեր էին Մեծն Տիգրանի որդի՝ Արտաւազդ Գ.ի Աղեքսանդրիա տեղի ունեցած եզերական մահէն ի վեր: Մէկ կողմէն Հռովմէա-

կան Արծիւներու մուտքը Եփրատէն անդին, կը սպառնար Հայաստանի անկախութեան, միւս կողմէն պարսկական ոտնձգութիւններ՝ ուժասպառ ըրած էին զայն: Շատեր սկսած էին գաղթել, և եթէ հայրենի հողին վրայ հայ ազնուականութիւնը չէր կրցած սատարել անոր վերակազմութեանը, գէթ ի սպաս Բիւզանդական կայսրութեան կը ծառայէր զմայլելի յաջողութեամբ: Այսպէս, ան կուտար Բիւզանդիոնի գահուն իր լուսագոյն կայսրերն ու զօրավարները, կազմակերպելով և կառավարելով Եգիպտոսն ու Հիւսիսային Ափրիկէն, քրիստոնէական քաղաքակրթութիւնը ծառայելով կիսավայրենի ժողովուրդներու մէջ: Ու Ափրիկէի այս մասերուն մէջ Հայերն էին որ պատնէշին վրայ կը մնան էին՝ արարական արշաւանքին գէժ պաշտպանելու համար Հռովմէական կայսրութեան տասը դարերու ժառանգութիւնը: Հայեր էին կարքեդոնի և Աղեքսանդրիոյ վերջին պաշտպանները:

Բ.

Կրօնական վէճերը տարօրինակ մթնոլորտ մը ստեղծեր էին Եգիպտոսի մէջ: Արարական տիրապետութիւնը

ՄԻՄՈՆ ԹԵԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ-ԴԵՐՁԱԿ

Նեպի Տանիէլ փողոց թիւ 20, Ալեքսանդրիա

Ս.մ.էն անոնի որ վայելչօրէն հագուիլ կը սիրեն, պէ՛տ է դիմեն այս հասցէին:


Անգլիական ամենաընտիր ապրանքներ եւ ամենավերջին նորաձեւութեամբ ու անսգիւս նաւակով կտրուածք: Արանց թէ կանանց համար:

(64) վերջնապէս կը հաստատուի հոն: Մահիկն է որ կը սկսի ծածանիլ նոյնիսկ այն եկեղեցիներուն վրայ որոնք Քրիստոնէութեան տարածման նպատակը էին ամենէն աւելի: Այս շրջանին, կը թուի թէ վերապրող Հայերը քրիստոնեաներու մեծ մասին պէս, իսլամացած էին արդէն: Արար պատմիչներ կը յիշատակեն ծագմամբ հայ բազմաթիւ նահանգապետներ, վէզիրներ, մինչև իսկ թագուհի մը: Հայերը կ'ունենան ամենագործօն գեր մը Եգիպտոսի կառավարութեան մէջ մինչև անկումը Ֆաթիմեաններու, որոնց օրով կրօնական տեսակէտով առանձնաշարհումներ ալ վաշխած են: Բ. Թ. Ժ. ԺԱ. դարերուն մէջ Հայերը կը խաղան ամենէն կարեւոր գերը մահմէտական այս երկրին մէջ՝ վարելով առհասարակ ամենէն պատասխանատու պաշտօնները, և Եգիպտոսը հասցնելով անտեսական աննախընթաց բարգաւաճման: Փահիրէի լուսագոյն հաստատութիւնները, պարիսպը, հոյաշուք դուռները, դիտանոցը, հայ ճարտարապետներ և բանուորներ շինած են: Ու այն պահուն երբ Մեծ Հայքի թագաւորութիւնները մէկիկ մէկիկ անհետանալու վրայ էին, երբ Տօրոսի լեռնաշղթաներու վրայ Ռուբէններ անկախութեան դրօշը կը պարզէին, երբ բովանդակ Հայաստանը գրեթէ այսօրուան պատկերը կը ներկայացնէր, Եգիպտոսայ Փաղօթը ամենէն հարուստը ու երջանիկն էր՝ այսօրուան պէս՝ և Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը կուգար այցելել զայն՝ քեռորդին Ներսէս իշխանը Հայոց Պատրիարք ձեռնադրելու համար ու թերևս հաւանորէն՝ նեցուկ մը որոնելու և Կիլիկիոյ սարերուն վրայ հայկական անկախութեան կռուան մը ստեղծելու առաջադրութեամբ:

Գ.

Կիլիկիան լքուած էր Քրիստոնեայ Եւրոպայէն, որուն խաչակրութեանց այնքան օգնած էր նիւթապէս և բարոյապէս: Կրօնական ներքին վէճեր սպառելէն այն կորովը զոր Հայերը պէտք էր գործածէին թշնամի արտաքին յարձակումներուն գէմ: Կիլիկիան արդէն շրջապատուած էր Մահմետական փոքրիկ իշխանապետ-

տութիւններէ, Մամլուքներէ, Թաթարներէ և այլն, որոնք կը սպառնային իր գոյութեան: Հայութիւնը սխալմամբ իր հալածանքի ենթարկուած էր թէ՛ Եգիպտոսի և թէ՛ հայրենի երկրին մէջ: Եգիպտոսի Մամլուքները յաճախ յարձակած, աւերած էին հայկական շէն քաղաքները և աւարի տուած էին բարգաւաճ բնակչութիւնները: Կիլիկիան քրիստոնեայ վերջին պետութիւնն էր զոր կ'ուզէին ամէն գնով բնաջնջել: Ի զուր սպասելէն Հայերը՝ իրենց ձգնաժամին մէջ՝ եւրոպական օգնութեան, որ չի պիտի գար: Եգիպտական արշաւանք մը, 1375ին, արդէն իսկ քայքայուած ուրիշեան իշխանութեան վերջ կուտար, հակառակ հերոսական դիմադրութեան մը, գերելով Լեւոն Ե. ու իր բնտանիքը, որոնք տարիներով Փահիրէի Միջնաբերդը բանտուած մնացին: Կիլիկիան — հայ անկախութեան վերջին ապաւէնը — քարուքանդ եղած ու անաէր մնացած էր: Կային, սակայն, հոս ու հոն, պղտիկ հայ իշխանութիւններ — սերեպէյիները յիշեցնող — տաբուեան անմատչելի սարերուն վրայ, Սիւնեաց աշխարհն



Tossounian Frères

Ramleh, Moustafa Pacha, Alexandrie

Թօսունեան Եղբարք ամենապատուական կաթ կը հայթայթեն մեծ արանակ ու փոքրաքանակ, ինչպէս նաև ամենաընտիր եռեմ ու կարագ:

ու այլուր ապաստանած : Հայ ազգը, իր ամբողջութեան մէջ, դադարած էր այլեւս իր անկախութիւնն ունենալէ : Լեւրոն Երզ առաջինը եղաւ, որ, իր ազատումէն անմիջապէս ետքը, փորձեց եւրոպական միջամտութեամբ Հայ Գահը վերականգնել : Ան իր երազին խորտակումը տեսաւ, և աչքերը փակեց արդի քաղաքակրթութեան ամենէն մեծ ստանին՝ Փարիզի մէջ, ուր սարկութեան հինգ գարեբէ յետոյ՝ յեղափոխական սերունդ մը՝ իր կարգին՝ պիտի փորձէր մարմին տալ Հայ Գաղափարին : Հայութիւնը յաճախ իր տէրերը փոխեց : Մեծ զանգուածը, հակառակ տիրող անհանգուրժելի պայմաններուն, սիրայօժար կապուած մնաց իր օճախին և պապինական յիշատակներուն : Կարեւոր մաս մը, սակայն, որ իշխող տարրն էր և հարուստ, լքեց երկիրը և հաստատուեցաւ օտար ափերու վրայ, ուր հարստացաւ : Ան ունեցաւ իր եկեղեցիները, դպրոցները, տպարանները, բայց չէր կրցած մոռնալ Հայրենիքը, ուր կը հեծէին իր բոլոր արեւնակիցները : Երկրին մէջ դեռ կէս անկախ մելիքութիւններու ազատագրական խլրտումները — պարբերական ապստամբութիւնները — զսպում ու ջախջախուած էին : Ժողովուրդը չէր կրնար չունչ առնել : Արտասահմանեան գաղթավայրերու Հայութիւնն էր որ ազատօրէն պիտի կրնար նպաստել հայրենի անկախութիւնը ձեւք ձգելու, կամ բարւոքել իր եղերարագդ եղբայրներուն վիճակը : Իտալիա Օրի (1700—1715) ու Յովսէփ Էմին (1754—1792) ամենէն կարկառուն դէմքերը եղան իբր ռահվիրաները հայ ազատագրական շարժումին : Ամէն հայ գաղթավայր աւելի կամ նուազ չափով փայփայեց Մայր-Հայրենիքի փրկագործումին հոյակապ երազը : Եգիպտահայն ալ իր կարգին պիտի ոգեւորուէր անով, աւելի մօտ զգալով ինքզինքը այն երկրին ուրկէ մեր անցեալին ամբողջ փառքը կը խօսէր ցեղին վտարանդի զաւակներուն :

Պ.

ԺՊ. րդ դարուն սկիզբները խիստ սակաւաթիւ էին Հայերը՝ Եգիպտոսի մէջ : Բայց շահեկան դէմք մը

կը պայծառափայլի եգիպտական հորիզոնին վրայ մահմետականացած Հայ մը, Մուրատ պէկ, որ պիտի էր Մամլուքներու և ահագին հեղինակութիւն մը կը վայելէր : Ղարաբաղցի էր ան, Սիւնեաց Աշխարհէն, որ երկար ատեն օրբանն եղած է Հայաստանի ազատագրական շարժումին : Մուրատ պէկ ազգականական կապեր ունէր Կիպրոսի Լուսինեան Տան վերջին շառաւիղին՝ Ժողէֆ Ամորիի հետ : Երկուքին ալ երազն էր Կիլիկիոյ սահմաններուն մէջ վերահաստատել Հայկական Թագաւորութիւնը, երազ՝ զոր փայփայեց նաև Նաբոլէոն Պոնաբարդ՝ դէպի Իսկէնտէրուն (Միջին Դարու Հայոց ծոցը) ուստական ապագայ յառաջխաղացումին դէմ պատուար մը կանգնելու համար : Փոթորկալից կեանքի մը ընթացքին՝ Մուրատ պէկ կը մոռնէր յանկարծ Գահիրէի մէջ : Իսկ Ժողէֆ Ամորի Լուսինեան, իրիկուն մը, մոլեռանդ մահմետականի մը դաշնին հարուածներուն տակ կ'իյնար Էգպէքիչէի իր պալատը մտած միջոցին : Մեծն Նաբոլէոն, Սէնթ-Էլէնի մէջ, աւաղանքով կը յիշէր յաճախ Կիլիկիա վերահաստատուելիք հայկական թագաւորութեան մասին իր վրիպած մտադրութիւնը . . . Այսպէս գործնական արդիւնքի մը չի յանգեցան Հայաստանի ազատագրութեան այս ծրագիրները :

Մուհամմէտ Ալիի տիրապետութեան օրով Եգիպտոսի մէջ Հայերը տիրացան լաւագոյն գիրքերու : Անոնք նպաստեցին նաև այս երկրին անտեսական բարգաւաճման և արհեստներու զարգացման : Պետական վարչութեան մէջ ունեցան ամենէն աւելի պատասխանատու պաշտօնները, բայց մինչև որոշ թուական մը չի մտաբերեցին դարման մը տանելու Մայր-Հայրենիքին մէջ ապրող իրենց արեւնակիցներուն եղերական վիճակին : Եգիպտահայուն զուտ ազգային կեանքը, իր ամենափարթամ շրջանին, կայացած ըլլալ կը թուի թաղային դպրոցներ ունենալուն, եկեղեցին չէն ու պայծառ պահելուն և քիչ ու շատ ներկայանալի գերեզմանատուն մը և իւրումն ամենայնի . . . Աղքատախնամ մարմիններ ունենալուն մէջ : Յիշատակութեան արժանի դէմք մը Մեծ Նուպար փաշան է : Հայանպաստ շարժման մը սզղանշանը պէտք է նկատենք այն նիւթական

զոհողութիւնը զոր Եգիպտոսի նախարարապետն ըրաւ հայ պատմիչներու ֆրանսական թարգմանութեանց հրատարակութեան համար նպաստելով: 1878ի Պերլինի վեհաժողովին ներկայացուելու համար Նուպար փաշա Պուլսոյ մեր ազգային իշխանութեան կը զրկէր Հայաստանի բարենորոգմանց համար գործնական ծրագիր մը՝ որ սակայն միահաղօյն մերժուեցաւ, քաղաքական կեանքի փորձառութենէն զուրկ և տնաս ազգային գործիչներու կողմէ անբաւարար նկատուելով:

Եգիպտահայ ուրիշ առինքնող գէմքի մը կը հանդիպինք յանձին հայ-կաթոլիկ մտաւորականի մը, Ժան Պրուսալի (1885-1891), որ, Միհրան Սվասլի — վերակազմակերպու Գեղլիմէն գործիչին — հետ, հիմնած էր Հայասան (L'Arménie) կիսամեհայ թերթը, «Բերան Բարիզի և Լոնտոնի Հոյ Հայրենասիրաց Միութեան», Հայաստանի բարենորոգմանց պահանջները պաշտպանելու համար: Եւ այնպիսի առին մը, երբ դեռ հայ քաղաքական կուսակցութիւնները հրապարակ չէին եկած, Ժան Պրուսալի, Միհրան Սվասլի և ուրիշներ, վայելելով եւրոպահայ և հնդկահայ հարուստներու նիւթական աջակցութիւնը, Բարիզի, Լոնտոնի մէջ և ալլուր, միթիւններ կը կազմակերպէին, բանախօսութիւններ կ'ընէին Հայաստանի մէջ գործուած հարստահարութեանց մասին, իրենց ետին ունենալով Ճէյմս Պրայսներ ու պետական ամենազգի մեծ անձնաւորութիւններ: Այսօր իսկ հետաքրքրութեամբ կարելի է կարգալ Ժան Պրուսալիի շատ կուռ և հմտալից ուսումնասիրութիւնը՝ Հայաստանի և տնոր անցեալին մասին, հրատարակուած La Revue Françaiseի մէջ (1886ին): Տարիներ վերջը, միեւնոյն գործը, ընդարձակ սահմանի մը մէջ, Պ. Արշակ Զօպանեան պիտի ընէր հայ ժողովուրդն ու իր գրականութիւնը ծանօթացնելու համար եւրոպական հասարակութեան: Պրուսալի՝ 1888-1891 շրջանին՝ վարած է «Հայասան» կիսամեհային քաղաքական բաժնի տնօրէնութիւնը: Հայկական հարցի շարժման նախաքայլերը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է այդ թերթերու ամբողջական հաւաքածուն ուսումնասիրել: Դեռ չեմ կրցած ըմբռնել, թէ ի՞նչու

Ժան Պրուսալի իր այնքան լաւ սկսած ձեռնարկը լքած է ի վերջոյ, և ինքզինքը նուիրած իր փաստաբանի արհեստին: Այսօր մասի վրայ կարելի է համբել թիւը անոնց որոնք հաղիւ թէ գիտեն այդ երախտաւոր ոահ վերային գործունէութիւնը: Ինձի կը թուի թէ Ժան Պրուսալի կը ներկայացնէ բուն իսկ Եգիպտահայը, հոս ծնած ու մեծցած, որ զբաղած է հայրենի երկրին ցաւերով, բայց բիչ մը «տիւլէթանթի» շնչատ յարատեւութեամբ մը: Պատկառելի թիւ մը կը կազմէ արդէն եգիպտահայ այն երիտասարդութիւնը որ հոս ծնած ու մեծցած, օտար կրթական հաստատութեանց մէջ ուսում առած, ցեղին հետ աւանդական ամէն կապ խզած է:

Մեծ կատորածներէն առաջ, Եգիպտահայը Հայութիւնէն գրեթէ ուժացած գաղութ մըն էր, որ իր խղճմբտանքի վարթնութիւնը նշանները ցոյց տուաւ, երբ աղէտավար խեղայեղ ամբոխ մը կուգար պարբերաբար Պուսէն, Կիրիկիայէն և Հայաստանի գաւառներէն, վրդովելու համար ձօխութեան ու վայելքի մէջ յղժացած համայնք մը: Փաղթականական մեծ հոսանքը, սակայն, փոխեց եգիպտահայ մթնոլորտը: Եգիպտոսը տեսակ մը ապաստանավայր ու կուռան եղաւ նաև յեղափոխական գործիչներու: Հայ քաղաքական բոլոր կազմակերպութիւնները ունեցան հոս իրենց աւելի կամ նուազ նշանակելի գործունէութեան շրջանները: Պէտք է ի պատիւ այս գաղութին ըսել, թէ միշտ ձեռնառու եղաւ նիւթապէս, ազգային բոլոր աղէտներուն առթիւ: Եկուր Հայերն ալ արթնցուցին զինքը իր խորունկ թմբիւրէն, ազգային գիտակցութիւն մը ներշնչելով իրեն: Եւ հոս էր որ հրապարակ եկաւ հայ պահպանողականութեան առաջին հաւաքական գործունէութիւնը՝ «Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան» հիմնարկութեամբը (1906):

Նպատակէս բոլորովին դուրս է անդրադառնալ և ճշգեղ որոշակի այն դերը զոր փորձեցին խողալ ազգային բոլոր մարմինները Հայկական Հարցին հարաւոր լուծում մը տալու համար: Միայն պիտի շատանամ ըսելով, թէ Եգիպտոսը մանաւանդ՝ իր աշխարհագրական գիրքին բերմամբ և դէպքերու կործես ճակատա-

գրային դաստիարակութեամբ մը՝ ծանրութեան կեդրոն մը եղաւ քանիցս, և այսօր ալ Եգիպտահայուն վիճակուած է ամենագործօն զեր մը ստանձնել հայ ազատագրական շարժումին այս ամենավերջին փուլին մէջ։ Արդէն 1913էն ի վեր, Վեհ. Հայրապետը, Եւրոպայի առջև Հայ Ազգը ներկայացնող պատուիրակութեան նախագահ նշանակած էր Պօղոս փաշա Նուպարը, ի պաշտպանութիւն հայ դատին։ 1878ին Մեծ Նուպարին զրացուած վարկը՝ ազգը այս անգամ իր արժանաւոր զուկին սիրայօժար կ'ընծայէ։ Երէկի բոլորովին անհաշտ գաղափարական տարրերը հոս էր որ համերաշխեցան ամենէն առաջ, միասին գործակցելու համար։ Հայ համերաշխութիւնը, անցեալ տարուան պատմական ամենէն կարեւոր դէպքերէն մին եղաւ, որ ծնունդ առաջեղին ինքնապահպանման ընազգէն և մեր արիւննազանգ իրականութենէն։ Եւ հոսկէ էր որ գացին զայն աւետելու, փոխանցելու ովկիաններէն անդին ապրող Հայութեան...

Բոլոր հայ գաղթավայրերուն մէջ Եգիպտահայուն վրայ կը ծանրանայ այսօր ամենէն ահաւոր պատասխանատուութիւնը։ — Պիտի կրնայ մնալ ան վայրկանին պահանջած բարոյական բարձրութեան վրայ։ Այս հարցումին ես չէ՛ որ պիտի կարենայի պատասխանել պիւթեան հարցուկի մը պէս, այլ վաղուան դէպքերը։ Ինձի կը մնայ միայն հոգելին մաղթել որ Եգիպտահայը ճերմակերես դուրս գայ իր փառքի ու առաքելութեան ճամբէն՝ պատմութեան անողոք դատաստանին առջև...

ՀԱՅԿԱԶՆ ՀԱՊԵՇՅԱՆ

1917 Օգոս. 31 Ալեքսանդրիա



ԱՆՎԵՏԱՑՈՂ ԴԵՄՔԵՐ

ԴԱՆԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ստուերին մէջ կ'ապրէր, մեր մօտ, քսանեակ մը տարիներէ ի վեր, և ամէն անգամ որ Ս. Պօղոս-Պետրոսի շրջափակէն դուրս գար, անժառանգներու, զըրկեալներու, արկածեալներու համար մուրացողի խոնարհ, ողորմուկ կեցուածքովը կը մօտենար մեզի... Ազգատուծեան այս անվհատ պաշտպանը իր նախընտրած մէկ սուրբին տաճար մը կանգնելու երազովը չէր յափշտակուած՝ Միւսօրի Բէն Բանֆիլին պէս, բայց Բէն Բանֆիլին միամիտ ու լուսավառ հոգին ունէր՝ կեանքի պարտուածներուն հասնելու իր յամառ փութկոտութեանը մէջ... Բարի Սամարացին եղաւ հոս Դանիէլ Վարդապետ՝ անհամար ինկածներու և քաշկուտըւողներու համար, որոնց հետ բաժնեց իր չոր հացին պատառը, յաճախ իր կէս բաժինն ալ անոնց բերանը դնելով։

Հայ ազատագրական առաջին փութորիկներուն մէջէն եկեր, նետուեր էր այս օփը, խլեակի մը պէս, տանջաբեկ, քայքայուած... Տաճիկ բռնապետութիւնը անոր ակռաները քաշեր էր մէկիկ-մէկիկ, առանց կարենալ անոր հոգին խոռելու ամենագոյն զիջումով մը... Բայց Տէրէ-Վանքի ժողատ առիւծը անոնցմէ չէր հիմա որոնք իրենց երէկուան հերոսական մէկ ժէսթը ցկեանս վճարել տալ կը ճարտարւորին համայնքին, անոր գլխուն պալլա կը կախեն՝ իրենց զոհողութեան տոկոսը, տոկոսին տոկոսը պահանջելով և գանձելով անկէ, դատանօրէն։

Դանիէլ Վարդապետ ճգնաւորի ու հնվալիսի սըր տառուչ ու հազուադէպ տիպար մըն էր... Ան կը քաշուէր իրմով զբաղեցնելէ հասարակութիւնը. դարիպի իր խեղճուկ խուցին մենութեանը մէջ, իր հայրենատենջ ու միստիքական մտածումներուն ջերմեռանդութեամբը կ'ապրէր կզգիացեալ... Չի խառնուեցաւ երբէք մեր հասարակական գործերուն, չի փորձուեցաւ ձայն ունե-

նալ անոնց մէջ . իր լուռ նայուածքն ու համեստ ուշադրութիւնը միայն բերաւ մեր դժբաղդին համախմբումներուն . . . Բայց վեղարաւոր կեղծիքէն հիասթափ այս ժողովուրդը անոր կը հաւատար , անոր կը նայէր ինչպէս սուրբի մը , մարգարէի մը , որ չէր խօսեր , այլ օր մը կրնար սրտալ , շանթահարել . . . Իր բարոյական մաքրութիւնը ուժ մըն էր որ չէր կրնար անուշազբաւ մնալ եգիպտահայ երբեմնի հանրային ճահիճին մէջ , և պատահեցաւ որ՝ հանդիսաւոր վայրկեանի մը՝ Դոնիէլ Հայր Սուրբին մուծնջ այլ պատկառազգու ներկայութիւնը թիրախ դառնար զգայացունց դիմաւորութեան մը՝ օրուան նշանաւոր հռետորին կողմէ .

— Վարդապետ , դո՛ւն պիտի անիծես այն ապիւրատները որ պիտի ժպրհէին համերաշխութեան այս ուխտը քանդել . . .

Խղիմսանք մըն էր որ անհետացաւ մեր մէջէն Դոնիէլ Վարդապետին մահուամբ :

Զինքը թաղեցին անշուքօրէն : Պաշտօնական յուզարկաւորութեան մը պերճանքը կը պակսէր : Աճապարանք մը կար տանիլ հողին յանձնելու մարդուն դիակը : Ժամուն բակը , դէպի փողոց ճամբուն վրայ , արեւուն տակ , գետին գրին դազազը , և այս տողերը դրողը քանի մը բառ արտասանեց . . . Յետոյ թափօրը շարժեցաւ դէպի Մազարիթա , վերջին հանգրուանը հօս մեռնող բուրբ Հայազգիներուն . . . Բայց ժողովուրդի գուռակները կը հետեւէին Դոնիէլ Վարդապետին , որ հայրենի երկրին մէջ անձնուէր հովիւը , կորիճ , յանգուզն ֆեփոն էր եղեր , և որ հոս սուրբը եղաւ :

* * *

Եգիպտահայ մամուլին մէջ , Բարսեղ Օհանեան գուրգուրոտ խնամքն ունեցաւ հանգուցեալին կենսագրականն ընելու՝ ոգեկոչելով անոր փոթորկալից անցեալին հրօսական գրուագներէն մէկ բանին : Ինչպէս նաև անոր մեր մէջ անցուցած վերջալուստային շրջանին բնորոշ ու աղիխարշ գիծերը : — Կ'արժէր , սակայն , որ Դոնիէլ Վարդապետին յիշատակը յաւերժացուէր հատորիկի մը մէջ , եթէ յարմար չի դատուեցաւ ալ անոր աճիւնն ամփոփել Ս . Պօղոս-Պետրոսի բակը , վայելուչ շիրմի մը տակ . . . :

ՔԱՌԱԿՈՒՍԻ ԱՆԻՒՆԵՐ



Այս խորագրին տակ պարտք կը սեպենք շօշափել հայ կեանքին գլխաւորարար ա՛յն հիւանդոտ երեւոյթները՝ որոնց յաւերժացումը , մեր կարծիքով , աղէտալի հետեւանքներ կրնայ ունենալ գերափափուկ ժամանակներու մէջ , հայ ճակատագրին կերտումին նկատմամբ :

Այս տեսակ մը ախտազննութեան նպատակն է արթնցնել գիտակցութիւնը՝ ուր կը պակսի , ցոյց տալ մեր օտքերուն տակ փռուող անգունդին կլափը , մատնանշել պարագային պարտադրած դարմանը , որպէս զի ժողովուրդը , հեռի կրաւորական տարր մը ըլլալէ , դառնայ միացած , բիւրեղացած կամք մը , իր պարտականութիւններուն և իրաւունքներուն բարձրութեանը վրայ կանգուն , հաւատալից , վճռական :

Հարկ կ'ա՛յ արդեօք յիշեցնելու թէ՛ քննելի երեւոյթները ընդհանուր հոնգամանք ունենալով՝ մեր մտադրութենէն բացարձակապէս դուրս կը մնայ զբաղիլ ո՛ր և է անհատով կամ՝ անհատներու ո՛ր և է խումբով :

* * * Դանդաղ և ճակատագրապաշտ ժողովուրդներու հետ դարաւոր շփումը կը թուի մեծապէս բթացուցած ըլլալ մեր մէջ ժամանակիկ գաղափարք : Դէպի ծովեզերք , դէպի արտասահման երկարող հայ շառաւիղներուն ընթացքը՝ միջավայրին ազդեցութեամբ՝ եթէ սովորականէն աստիճան մը աւելի արագութիւն ցոյց կուտայ , հայօրէն խորհելու և հայօրէն գործելու կերպը , սակայն , նոյն համեմատութեամբ արագացած չերեւիր՝ մտնաւանդ ազգային գործերու մարզին մէջ :

Այս տեսակէտով զանազանութիւն մը Եգիպտոսի և Ամերիկայի հայ գաղութներուն միջև չի կրնար վրիպիլ նոյն իսկ հասարակ տեսութիւններէ , տրուած ըլլալով արեւելքի և արեւմուտքի միջև փռուող աշխարհագրական միջոցի և ընկերային-քաղաքական պայմաններու վիթխարի անջրպետները : Օրինակ ձեզի՛ քանի մը ամիս առաջ Փարաւոններու երկրէն Եանքիներու երկիրը թռչող կայծը , որ հոն չքեղ հրգեհներու համե-

մատուցիւնը առնելու կը ձգտի, մինչդեռ հո՞ս... կը պլպլայ միայն:

* * * Ձէ կարելի առարկել թէ Հայուն մէջ ձեռներէցութեան ոգին կը պակսի. ընդհակառակը. ան իր անհատական կեանքին ոգորումներուն մէջ նոյնիսկ ուշագրաւ խիզախումներ ցոյց տուած է միշտ, և այս՝ այն գերազանց պատճառով որ՝ ան իր ցեղին պատմական-քաղաքական նսեմ ճակատագրին իսկ բերումով՝ ստիպուած է եղեր իր սեպհական ուժերուն միայն կռթնիլ և իր կաթողութիւնները հասցնել տարասովոր վարգացումներու: Անհատին և ցեղին ինքնապաշտպանութեան բնագղը չէր կրնար սակէ տարբեր կերպով արտայայտուիլ:

Բայց իր հասարակային կեանքին մէջ Հայը հանդիպած ըլլալով միշտ զօրաւոր ու գիտումնաւոր արգելքներու՝ չէ կրցած նոյն համեմատութեամբ մշակել ազգային ձեռներէցութեան ոգի մը. անոր խոյանքը, վսեմ գաղափարականներու լայնածիր ոլորտներէն զուրկ, արգելափակուած է եղեր վարժարանի, եկեղեցիի, լսարանի, մամուլի, մէկ բառով՝ Խօսքի անձուկ ու հեղձուկ մթնոլորտին մէջ, և հո՞գ ալ, խօսքի մարզին մէջ, ունեցած է ան գրեթէ անմրցելի զարգացում մը՝ ի վնաս գործնական լայն ըմբռնումներու:

* * * Հանրային հանգամանք ունեցող մեր գրեթէ բոլոր գործերուն մէջ փուռած կը տեսնէք սրտածմլիկ դանդաղութիւն մը, գաղջ ծուլութիւն մը, որ ստէպ աղէտալի անտարբերութեան մը կը յանգի: Հարեւանցի ակնարկով մը կարծուի թերեւս թէ այս պարագան ծնունդն է միայն ստանձնուած պարտականութենէ մը անբաժան պատասխանատուութեան զգացումի պակասին: Այս ենթադրութիւնը ճիշդ ըլլայ կամ ո՞չ կան դեռ ուրիշ տխուր գործօններ՝ սրտնք, նոյն իսկ պատասխանատուութեան հզօր զգացումներու առընթեր, կը շարունակեն կերտել ողբալի կացութիւնը մեր հանրային գործերուն:

* * * Արժանիքի գաղափարին պակասը, խոշոր պակաս մը մեր բարքերուն մէջ, զօրաւոր կերպով կը ցայտեցնէ համեմատութեան, համաչափութեան մասին

մեր ըմբռնումին, ուրիշ խօսքով՝ ճաշակին ողորմելի ծանծաղութիւնը: Ուշագրաւ արժէքներ չներկայացնող անձերու կը վստահուին կտրեւոր, նոյն իսկ կենսական գիրքեր, դերեր, մինչդեռ արժանաւորներ կամ բացը կը թողուն և կամ երկրորդական, երրորդական գործերու կը հրաւիրուին: Գրեթէ ամէն կարգի ընտրութիւններու կամ նշանակումներու մէջ մեր գրգակներն եղած են մեր համակրանքներն ու հակակրանքները, կանխակալ կարծիքներ, թերեւս նաև յետին միտքեր եւն: Յաճախ, գործին պահանջած մարդը փնտռելու տեղ, մարդուն պահանջած գործը ձարելու կ'ելլենք, առաջին վայրկեանին իսկ, մեր սեպհական ձեռքով, մահացու հարուած մը տարով փայփայուած գործին:

* * * Իբրև բնական հետեւանքը յիշեալ թերի պայմաններուն՝ մեր գէմը կը ցցուի մեքոսի պակասը՝ մեր գրեթէ բոլոր գործերուն ու շարժումներուն մէջ: Մեթոտը, ճշմարտութիւնը գտնելու կամ որոշ նպատակի մը համնելու կարճ և ապահովագոյն ճամբան, կը պահանջէ անհրաժեշտ ծանօթութիւններու որոշ պաշար մը՝ կամքի պրկուած ճիգերով միայն գիզելի: Գիտութիւնը, իր խորագոյն խաւերուն մէջ, հազուագիւտ բան մըն է Հայերուս մօտ. անոր մէջ նաւարկութիւն կրողները կամ դասալիք եղողները, եթէ չյաջողին զգայական մարդին, օրինակ՝ բանաստեղծութեան գիրկը ապաստան մը գտնել, կը գեղերին կեանքի ծանծաղուտքին մէջ, անդեկ ու աննպատակ:

Գործին նկատմամբ սնուցուած սէրը պէտք չէ միամտօրէն շփոթել մեթոտին հետ. նպատակ մը արժեցնելու համար եթէ սէրը պիտանի է, մեթոտը անհրաժեշտ է: Յաջողութեան բոլոր միւս պայմանները միացած՝ չպիտի զօրէին մեծ բան մը կերտել՝ եթէ բացակայէր մեթոտը: Բաղդին թողուած ո՞ւր է ձեռնարկ առջի օրէն թոհ ու բոհի մատնուած է անլրէպ: Գործի մը յաջող կառօյցքը ոչինչով կը տարբերի չէնքի մը ճարտարապետական կերտուածքէն. փոքրիկ սխալ մը կամ զանցառութիւն մը դուռը կը բանայ ուրիշ շեղումներու և հուսկ՝ յառաջ կը բերէ սպտունացող աւերը:

Աւելի գծուար է գործ մը ո՞ւր է կերպով ընել քան

իր պահանջած բուն կերպովը. ո՛ր և է կերպ ոչ միայն յաջողութիւնը տարակուսելի կ'ընծայէ, այլ նաև իր հտեւէն կը բերէ ժամանակի անագին կորուստ, յուսա-վրիպում, բարոյաւընում եւ շն. Մեթոտի կիրարկումին մէջ գրուած գիտակցութիւնը յայտարար նշան է ենթակային կարգապահական ոգիին, հետեւաբար և՛ ա-նոր նկարագրին կարկառուն գիծերուն: Եւ արդէն անհատին ու հանրութեան նկարագիրը՝ եթէ կերտուած է՝ ինքնաբերաբար պիտի փնտռէ, պիտի գտնէ, ի հարկին պիտի յօրինէ պահանջուած մեթոտը, որ կը թե-լադրուի ձեռնարկին բնութենէն իսկ:

* * * Յարահեւութեան ոգիին պակասը, իր կարգին խորունկ վէրք մը մեր անհատական ու ազգային կեանքին մէջ, կը մատնէ բարձր գաղափարականներ հետապնդելու անընդունակութիւն, ստանձնուած գործը ի կատար ածելու անատակութիւն, ուրիշ խօսքով՝ ասպարէզի կամ զբաղումի սխալ ընտրութիւն, որոշ քանակով արեւելեան մեղկութիւն և քիչ մըն ալ բաղդախնդրութիւն: Հայերը առ հասարակ շատ ճարտար են գեղեցիկ ծրագիրներ յղանալու և յօրինելու մէջ. անոնց հաւատարիմ գործադրութիւնը, սակայն, որ սահմանուած պիտի ըլլար փառքի կոթող մը ապահովել ենթակային, քիչերու մօտ միայն կրցած է գտնել կամքի ու կորովի նո՛յն մշտաթարմ թափը՝ որ ի յայտ բերուած էր գործին սկզբնաւորութեան մէջ: Փրանսացիներու յատուկ խանդավառութեամբ մը կը ձեռնարկենք գործի մը, բայց չենք յաջողիր անգղիական յարատեւութեամբ հետապնդել զայն:

Կը խորհիմ թէ մեր քաղաքական յեղյեղուկ կացութիւնը չի կրնար ո՛ր և է չափով չքմեղանք մը գառնալ մեր կեանքին այս հիւանդագին երեւոյթին: Հալածական ու վայրափառին Հրէաները յարատեւութեան ոգին մարմնացնող նշանաւոր տիպեր եղած են ամէն ատեն և ամէն տեղ: Նոյնը կարելի է ըսել մեր նախնիքներուն մասին, որոնց հեռատես միտքին և տոկուն ու ճկուն նկարագրին կը պարտինք ամէն ինչ որ ունինք այսօր հայկական: Կը տարուինք, ուրեմն, մտածելու թէ՛ սխալ ջամբուած դաստիարակութիւնն է որ

սունկի պէս բուսցուցած է մեր շուրջը անողնայար ու յեղյեղուկ, յաւակնոտ ու պատեհապաշտ, և սոփեստ ու անճարակ տիպերու լէպէտներ, որոնք Հայութեան հետ իրենց կնուներն ու անունին նիհար թեկովը միայն կապուած են...

* * * Ուրիշ հիւանդութիւն մը՝ աններողութիւնը, փոքրագիններու մենաշնորհը, որ՝ մեր հասարակային կեանքին լայնագոյն խաւերուն մէջ փուռած՝ կը շարունակէ անխնայ կոտորել, ջարդել այն բոլոր անհատական ու հաւաքական արժէքները՝ որոնց խոհական համադրուածքն պիտի բղխէին ազգային փառքեր, սխրալի ստացումներ, Կուսակցական և դաւանական ո՛ր և է խըրտականութիւն, մանաւանդ մերինն պէս ջարդ ու փշուր եղած ժողովուրդի մը մէջ, քաղաքակրթութեան անունով բարբառող ո՛ր և է խումբի կամ անձի պատիւ չի բերեր: Կուսակցական և այլ դաւանանքներ պարտին անպայման ստորագասուել ազգային գերազոյն դաւանանքին: Այսօր բովանդակ Հայութիւնը ունի մեկ նպատակ և այդ նպատակին հասնելու համար կը ճանչնայ մեկ միջոց միայն: Ո՞րն է այն միամիտ Հայը որ չպիտի յօժարէր այդ միտ՛կ նպատակին ու միջոցին կառչած տեսնել ցեղին բոլոր դաւակնները անխտիր: Մեր ազգային կեանքին այս բաղդորոշ վայրկեանին մանաւանդ կուսակցական ու դաւանական ո՛ր և է խտիր անուցանել առնուազն ազգամիաս ձեռնարկ մըն է:

Անձկամիտ ուղեղներու մէջ պէտք է ցիցի պէս տեղաւորել սա տարրական ճշմարտութիւնը թէ՛ ցեղի մը բոլոր դաւակններուն երբէք պիտի չի վիճակուի միակերպ խորհիլ, միատեսակ դատել և միօրինակ գործել: Այս երեւոյթը այնքան անկախ է մեր նոյն իսկ հաւաքական կամքէն, որքան մեր ձեռքը չէ արեւը մեր ուզած կողմէն ծագեցնել: Իրերու անողորութեան առջև պիտի շարժինք այնպէս՝ ինչպէս օրէնքներու անյեղլիութեան առջև, այսինքն, խոհականօրէն վարժուիլ կարծիքներու զանազանութեան, սրադատօրէն գտնել զանազանութեան մէջ միութեան թաքուն եզրեր, ճարտարօրէն համադրել ու ներդաշնակել հասարակաց կարծիքներ, կարիքներ, յոյզեր ու գաղափարականներ, և

նոյն իսկ հնարաւոր ընծայել մերձեցումը «գրական և ժխտական» եզրերու, ցայտեցնել կարենալու համար հոսանքը այն վիթխարի ուժին՝ որ սահմանուած պիտի ըլլայ գեղեցիկ, ներդաշնակ ու փառաւոր կեանքը դառնալ մեր Յեղիւն:

* * * Ժամանակի և անձերու արժէքներուն ճշգրիտ ըմբռնումին պակասը կը մատնէ ներկայիս մէջ Հայութեան անպարագրելի անհեռաւսեալութիւնը՝ ի մասին օրուան հրատապ Իրականութեան: Անկեղծութիւնն ունենանք խոստովանելու որ՝ մեր խոշոր քիթէն անդին բան մըն ալ տեսած չունինք գրեթէ: Երեք տարիներէ ի վեր հայ աշխարհին ու կեանքին մէջ թաւալող քստմնելի եղբերեգութիւնը առ առաւելն հէքեաթի մը տպաւորութիւնը կը թողու մեր մեղկացած շիզերուն վրայ: Սինէմա, օդի, նարա, թղթախաղ, նորածեւք, ամփնօ, մրցում, զաւեշտ, այնքան համագրաւած կերելին մեր գատարկ գլուխներն ու գատարկագոյն սիրտերը՝ որ մարդուս պտուալը կուգայ հայրենի նահատակներուն. «Արտասահմանի ձեր ապիրատ եղբայրներէն ու այլասերած քոյրերէն խեր չի կայ ձեզի, ո՛վ միամիտներ. մեռէ՛ք, մեռէ՛ք, եթէ չէք կրնար հրաշքով մը ապրիլ...»:

Խենդեցնող իրականութեան մը առջև կը գտնուինք ու չենք տեսներ զայն, չենք ուզեր տեսնել, ապաժամ ծրագիրներով*), սուգի տան մէջ քմայքի ու պերճանքի ձեռնարկներով, ճառերով, հանդէսներով նախատինքներ կը դիզենք Արտասահմանի Հայութեան շուարած գլխուն վրայ: «Ազահանդէսը» կը կազմէ Ամերիկահայուն ազգասիրութեան երկրորդական ապացոյցը, իսկ... տաճկերէնի գէժ պոյքսթով Եգիպտահայը կը կարծէ իր ազգային պարտականութիւնը կատարած ըլլալ մինչև իր եօթը պորտը...

Գիտեմ, «Համերաշխութիւնը» պիտի ցցին ճակատիս, իբրև ապացոյցը ազգային հոտաուութեան, քա-

*) Կովկաս և Արտասահման կարծես զիրար կը գլեն երբեմն հրատապ նիւթէն խոշոր շեղումներ ընելու մէջ...:

ղաքական հասունութեան... Համերաշխութիւն կոչուածը այսօր Հայուն համար մեկ ծաղիկով զարուն մը եղաւ — ո՛ւր են միւս ծաղիկները, ո՛ւր են յուսթի արտերը, ո՛ւր են մանաւանդ սկեգոյն ցորինադէզերը...

Կը տեսնէ՞ք, այնքան հեռատես ենք որ իրին տեղ բառը առեր ցստեր ենք... «Համերաշխութիւն կայ, փա՛ռք Աստուծոյ, գգուըտուքը դադրեցու. հրապարակը մաքրուեցաւ...»: Եւ արդարև շունչ չի կայ, փափուք չի կայ. ամենքս ալ, մանկապարտէզի սանիկներու պէս, հրեշտակավայել դիրքով մը խելօքիկ մը նստած՝ կը յօրանջենք, մեր ամբողջ ուշքն ու երազը կեդրոնացուցած մեծ Տօնի մը վրայ, որ կ'ըսեն թէ պիտի գայ...

Տէ՛ր իմ Աստուած, այսքան վիթխարի միամտութեան մը ակնատես ըլլալու դժբաղդութիւնն ալ վերապահած ես եզեր մեզի՝ այնքան անլուր աղէտներ հրամցնելէ յետոյ... Բայց ո՛վ ըսաւ որ անշարժ նստելու, չգործելու, մեռնելու համերաշխութիւնը պիտի ըլլար մերինը: Համերաշխութիւնը ոմանց համար եղաւ այն մոգական գաւազանը՝ որուն շխրտոցին տակ յաւիտենական վարժապետը — հասարակութիւնը, ի կարգ կը հրաւիրէ «անառակները», «կուռազանները»: Ուրիշներուն համար ան եղաւ զրահ մը՝ իրենց անձերն ու գանձերը աւելի քան երբէք անմերձենալի դարձրնելու համար: Իսկ հանդիսատես ստուար բազմութիւնը նկատեց զայն ազնուականութեան նոր իմն տիտղոս, փրկութեան գօտի մը, չարխափուն հմայեակ մը, վերջապէս համայնարոյժ դեղ մը...

Հայկական իրականութեան զգեցած և զգենալիք երեւոյթներուն քննութեամբը զբաղող սրտցաւ հոգիներ չպիտի վարանին անկեղծօրէն ձեզի յայտնելու թէ՛ անոնք, մինչև օրս, Համերաշխութեան ցամաք բառէն ու զայն պճնող միակ ծաղիկին ի գատ, ուշադրաւ բան մը տեսած չունին. անոր շուրջը այնքան անշարժութիւն, այնքան խոպանութիւն ու երաշտութիւն կայ՝ որ մարդ երբեմն կը փորձուի ակամայ խորհիլ տիրող համերաշխութեան մը վրայ... Այո՛, ծափահարելի լաւ սկզբնաւորութիւն մը ըրինք. ո՛ւր է սակայն անոր վե-

հափառ ընթացքը, ո՞վ պիտի երաշխաւորէ մեզ փառաւոր վախճանը:

* * * Մինչ այս մինչ այդ՝ անվերադարձօրէն կ'անցնէին անգին ժամանակը, իր թեւերուն տակ կրելով կեանքի ու մահուան դատակնիքներ: Խեղցի ու արթուն վարիչներ իրենց ժողովուրդներուն բաղդին վրայ արգոտեան անթարթ աչքերով կը հսկեն, անթերի կազմակերպութեամբ մը ամէն գործ ու ամէն արժանիք կը ճշդդեն, կը բաժնեն, կը դասաւորեն, նախատեսելով ամէն ինչ, ոչինչ թողելով բաղդին ու անակնկալին: Իսկ մենք... — Միրտի կտրտուք հարցում: Անձուկ շրջանակէ մը դուրս՝ ժխտական համերաշխութեան մը միտախրականութեամբ հիպնոսացած՝ կ'սպասենք ու... կ'սպասենք, միշտ անկազմակերպ, տակաւին անպատրաստ, շարունակ անհետատես:

Ընդունեցինք թէ տխրանեան աշխատութիւն կայ կատարելիք ամէն մարզի մէջ. բայց արժանաւոր բազուկներ ո՛չ կը փնտռուին, ո՛չ ալ կը մատուցուին: Հագար անգամ յիդյուեցաւ թէ մեր պէտքերն ու բոլոր գործի գալիք ուժերը աչքի առջև ունենալով՝ լայն կազմակերպութիւն մը մէջտեղ բերելու ենք, աշխատութեան խելացի բաժանումով մը զբաղում հայթայթելով ըստ կարի ամէն հայ մարդու և ամէն հայ կնոջ: Ամէն ուսի յարմար բնու և ամէն բազուկի յարմար գործ կայ. և բարեբաղդաբար ո՛չ ուսը կը պակսի, ո՛չ բազուկը, ո՛չ ալ սիրտը. կը պակսի միայն հրաշագործ կազմակերպութիւնը, որուն լծուած ըլլան հայ կեանքին բովանդակ նեարդերը, ջիղերը և բջիջները: Կրտստ-պուստ միջոցներ դատապարտուած են արտադրել վիժածքներ միայն, երբեմն ալ՝ հրէշներ:

* * * Հասկնալի է, ուրեմն, որ առ հասարակ Արտասահմանի Հայութեան, և աղէտին ու փառքին իր մօտիկութեանը պատճառով մասնաւորաբար Եգիպտոսի մեր Գաղութին և անոր պաշտօնական ու անպաշտօն Մարմիններուն ու հանրային կարծիքին բոլոր վարիչներուն վրայ ահաւոր պատասխանատուութիւններ կը ծանրանան՝ խոշոր դէպքերով յղի այս պահերուս: Մարտիրոսուող ժողովուրդը անձկանօք կ'սպասէ, կոտորակ-

ուողներուն արիւնը բարձրաբարբառ կը պահանջէ սր, Համերաշխութիւնը ա՛յլեւս բառ ըլլալէ դադրի, մարմին հագնի, գօ՛րծ ըլլայ ու կեանք դառնայ, անխախտ մեր բոլոր խաւերուն մէջ. և այս բանը կրնայ անյապաղ ու պարտի անմիջապէս կատարուիլ ջնորհիւ խելացի, շրջահայեաց ու լայնախոհ կազմակերպութեան մը, որ կ'արժէ Հայկական Համաժողովի մը լուրջ նիւթեհն մեկը դառնալ:

Այս պատուական ժողովուրդին վարիչներուն բարի կամեցողութեանը վրայ երկմտելու ո՛չ ոք իրաւունք ունի. բայց ատիկա բաւական է: Անոնք խիստ լայն սահմաններու մէջ պէտք պիտի ունենան մեր բոլոր կարգի ուժերուն զինուորագրութեանը, մեթատուոր աշխատութեան վարժ կամ ընդունակ աշխատակիցներու: Անոնց գլխաւոր մտահոգութեան առարկայ պիտի ըլլայ նախ՝ անհրաժեշտ, որուն պիտի հետեւի իր կարգին՝ օգտակարը, գեղեցիկ բաներու վրայ կրնանք մտածել ապագային: Անոնք հեռատեսութեամբ և մտնաւանդ շատ փնտռուած նրբադատութեամբ (tact) պիտի գիտնան գործին շուրջ կեդրոնացնել ամէն գասակարգի գործնական համակրանքն ու անվերապահ նուիրումը: Անոնք, իրենց հսկայ ձեռնարկին մէջ, զինուորական խիստ կարգապահութեան մը ենթակայ՝ պիտի գիտնան անտարակոյս նոյնը պարտադրել ու ընդհանրացնել ամէն խաւերու մէջ, որպէս զի երկու տարի առաջ Փոր-Սայիտ ապստամուող Սուէտիացիներու բանակատեղիին շուրջ ստեղծուած Բարեւոնը չի կրկնուի՝ երբ օգնութեան առաջին հրաւէրը հնչէ: Անոնք, մեր քաջընտիր վարիչները, մեքենայի պէս լարուած կազմակերպութեամբ մը, ցոյց պիտի տան աշխարհին թէ՛ Հայը, իր ձգնաժամի գաժանագոյն վայրկեաններուն մէջ իսկ անշուար, անսայթաք, համերաշխ, արժանի է արդարեւ իր ճակատագրին տէր և իշխան դառնալու:

* * * Այս ընտիր ցեղին ծնելամերձ ճակատագրիին խանդավառ հաւատացող մը ըլլալով՝ ջերմօրէն պիտի փափաքէինք որ անպարագրելի լուստեսութեամբ մը գօտեպնդուէր անխախտ ամէն Հայ: Ապրե-

լու կոչուած, փառքի նոր օրեր տեսնելու վճռուած ժողովուրդ մըն է Հայը: Անոր կարգ մը թերութիւնները, ոմանք՝ բոլոր ժողովուրդներու յատուկ, ուրիշներ՝ պարագայական անշուշտ, երբէք չեն նահանջներ անոր անհատական և հաւարական բազմակողմանի բարեմասնութիւնները՝ որոնց պսակն ըլլալու սահմանուած է անտարակոյս անկէ ա՛յս պահուս սպասուած քաղաքական հասունութիւնը՝ ժամանակի, իրերու և անձերու ճշգրիտ գնահատումով մը օժանդակուած: Կարելի է որ առանց Եգիպտոսացուն օժանդակութեան վերականգնի Հայրենիքը. բայց մաղթելի է որ Պատմութիւնը խնայէ անոր այս մեծ կրօնքը, վերապահելով անոր փառքի խոշոր բաժին մը, իբրև տրիտուր անոր ստանձնելիք դիւցազնական պարտքի բաժինին:

Գահիրէ

Յ. Թ. ԳԱՅԱԵԱՆ

JACOB'S PHOTO STUDIO

18, Boulevard Ramleh, Թէլէֆօն՝ 300

Լուսանկարչական առաջնակարգ գործեր

ՃԻՒՂ

GRAND STUDIO & PHOTO STORES

2, Rue Ancienne Bourse, Թէլէֆօն՝ 11-10

Լուսանկարչական տիպի և սեվիլօբմանի մասնագիտութիւն, ինչպէս նաև ակուանսիսլումաններու:

Լուսանկարչական ամէն տեսակ պիտոյքներ, քամարաններ, շրջանակներ, ալպօմներ, քարտեր, և ըն.:

ՃԻՒՂ

LASSAVE'S PHOTO STUDIO

7, Rue Debbane, Թէլէֆօն՝ 11-10

Գերազանցապէս արուեստագիտական լուսանկարչատուն, ուր ժամագրութեամբ կը լուսանկարուին:

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԴԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

ԱՐՏԱՇԷՍ ՇԻՐՄԻՉ

Պոլսահայ ընտրանիին հովերէն ու հմայքէն բան մը կը բերէր մեզի, ամիսներ առաջ, իր խորհրդապահ այլ յանկարծական երեւումովը մեր մէջ:

Նախ չուզեցինք հաւատալ մեր աչքերուն, երբ՝ իր ժամանումի առաջին օրերուն՝ փողոցը կամ հանրային վայրեր իրեն հանդիպեցանք, քանի որ, տարապայման կարճատեսութեան մը հետեւանքով, անակնկալ նորեկը քայլ մը հեռուէն իսկ չէր ճանչնար մեզի, երէկուան իր ծանօթները, և կ'անցնէր քովերնուս, անայլայլ, մտացիր... «Ա՛ն է արդեօք», կը հարցնէինք իրարու կամ մենք մեզի... Բայց ուրիշ մը, սօզի մը, չէ՛ր կրնար ըլլալ: Իր հասակն էր, տիրական, իր գլուխը՝ ճգնախոնջ, իր կեցուածքը՝ պիւրկ ու ճապուկ միանգամայն... Տարակոյսը շուտով փարատեցաւ. անուշադիր այլ ուշադրաւ անցորդը բարեկամներու ստուար շրջանակ մը պատրաստ կը գտնէր հոս, և ընկերային իր ընդարձակ յարաբերութիւնները պիտի անյապաղ ստոյգ ընծայէին ամենուս նո՛յնինքն Տիար Արտաշէս Հիւրմիւզի ներկայութիւնը Եգիպտոսի մէջ:

Չուիցերիայէն կուգար, Պատերազմին առաջին անգոհական տարին անցընելէ յետոյ Պոլիս, ուր անհատական ու հասարակական բազմադիմի պարտաւորութիւններու իսպաս գտնուելը էր մինչև վերջը, և ուրկէ կրցեր էր մեկնիլ, շնորհիւ բացառիկ ձեռնտուութեան մը:

Ու տեսակ մը կազդոյր, կարօտառում էր մեզի համար հպումի գալ հոս, ներկայ ճգնաժամային օրերուն, պոլսահայ մտաւորականութեան այս համակրելի ներկայացուցչին, այս անպաշտօն պատգամաբերին հեռու մեզի կը յիշեցնէր վոսփորեան ու յոնիական ափերուն վրայ ապրուած հայրենի վաղանցուկ յոյսերն ու խանդավառութիւնները, իբրև վկայ ու մասնակից

նուրբիքեան մեր միամիտ ու անվերապահ սրտագեղումներուն... Ժողովրդային հոծութիւններու և համախմբումներու մէջ աչքի-զարնող ինքնատիպ սիլուէթ, իր գաշն ու համագուած խօսքը կարգախօսի մը պէս կ'ազդէր իր շուրջը գտնուողներուն վրայ, երբ՝ օրինակ՝ Աբէլեան-Արմէնեան ներկայացումներուն նկատմամբ մեր փայլուն միջակորեարին շահագրգռութիւնը կ'արծարծէր. «Պէ՛տք է գալ ամէն գիշեր, պէ՛տք է ներկայ ըլլալ ամէն երեկոյթի, պէ՛տք է քաջալերել հայ բեմը...» :

Հոյակապ Հիւրմիւզ Գերապայձառի եղբորորդին և բազմահմուտ Եղիշեապաշտ Բորթուգալ փաշայի փեսան, Օրթագիւղի մեր ռահվիրայ սերունդին մեծ յիշատակներովը, ներշնչող աւանդութիւններովը, անմռանալի ձայներովը սնած, Հայ Գրականութեան ու Արուեստին հաւատարիմ ու ջերմեռանդ սիրահար մը եղած է միշտ, թէև իր մտաւոր կորոյններն ու ընտիր ընդունակութիւնները վարչական ու ելեւմտական մարզերու մէջ վատնուած ըլլան: Այս գործի-մարզը — «Ռօսիա» ապահովագրական ընկերութեան Թուրքիոյ, այժմ Եգիպտոսի, տնօրէն, Նիւրբիկի խալիփի վարչութեան անդամ և ին. — անտնցմէ է որոնց խօսակցութիւնը, իր վայելչութեամբն ու լեցունութեամբը, հաճոյք մըն է ամենէն պատրանաթափ ու դժուար-շահագրգռուող մտաւորականին համար անգամ:

Տիար Արտաշէս Հիւրմիւզ Պոլսահայ-կաթոլիկ Հասարակութեան այն դէմքն է որ ամենէն աւելի խորհրդակիր դարձած է մեր միջլարանուանական համերաշխութեան: Ազգային եղբայրակցութեան ամէն արտայայտութիւններու մէջ, ինքն է որ սպասուած է միշտ միւս կողմէն, և իր ազգասիրութիւնը յուսախաբ չէ ըրած երբէք իրեն նկատմամբ տածուած համակիր ակնկալութիւնները:

Եգիպտոսի մէջ, ուր հայ-կաթոլիկ պաշտօնականութիւնը երբեմն մեկուսի կը մնայ մեզ ազգովին համագրաւող հարցերու հանդէպ, մինչ իր ներկայացուցած հասարակութիւնը անհատական այնքան թանկագին արժէքներ, ընկերական այնքան ազդեցիկ ուժեր կը հաշուէ, Տիար Արտաշէս Հիւրմիւզի պէս դիւրահաղորդ,

չինարար ու իմաստուն անձնաւորութիւն մը, բո՛ւն բառը գործածելով՝ սրտցաւ ու իրագեկ ազգայինցի մը, մեղի համար ճշմարիտ ստացում մըն է՝ եգիպտահայ աւելի կատարեալ, ներգաշնակ ու բեղմնաւոր համագործակցութեան մը տեսակէտով:

Բարեգործականի Պոլսոյ մարմնոյն անձնուէր գանձապետը այն հարազատ Հայերէն է որոնք, ինչ պայմաններու մէջ ալ գտնուին, չեն ուժանար ցեղին հակիրութիւններէն, թախանձագին հրաւէրներու չեն սպասեր իրենց հոգածութեան բաժինը բերելու համար հանրային իրին... Ազգային կեանքի ամէն ազնիւ երեւոյթ կը քաշէ զիրենք, ամէն հայրենանուէր ճիգ յենարան մը կը գտնէ իրենց մէջ:

Ես կը հաւատամ որ Տիար Արտաշէս Հիւրմիւզ — առանց Բուրգերն երազած ըլլալու և գուցէ առժամապէս այս երկիրն եկած — պիտի հանդիսանայ տիպար Եգիպտահայ մը, ո՛րքան ալ ասիկա փառասիրութեան փորձիչ տխողոս մը չըլլայ իրեն համար... :

ՏՕԲԹ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՕՎԼԷԹԵԱՆ

Փոթորիկին մէջէն մեղի եկած ուրիշ ուշագրաւ ու ինքնատիպ դէմք մը:

Տօքթ. Տէօվլէթեան պոլսահայ մտաւորական երկտասարգութեան ամենէն յանկուցիչ տիպարներէն մին յայտնուեցաւ՝ անշեշտ ու որևէ կերպարանքներու այն երանաւէտ ցուցահանդէսին մէջ զոր Նեղոսի ափերը կ'ընծային:

Գիտունի գլուխ մը — գմբեթարդ, կամաւոր ճակատով մը, որ կեանքին կնճիւղներն ու չարիքին սպառնալիքները կը դիմագրաւէ կարծես — քանքարաւոր բժիշկին կուտայ չես գիտեր ինչ խոհուն, սպահովիչ, անդորրիչ երեւոյթ մը:

Ճեմըլմենի մը կեցուածքն ու նիստուկացը. լուրջ ու բարեկիրթ, ինքնավստահ ու ինքնամիտփ, քիչ մը թերեւս վերապահ, ինչպէս վայել ու պատշաճ է ըլլալ ընկերութեան մը մէջ զոր խորապէս չես ճանչնար տա-

կաւին, և որուն կը զգաս թէ պիտի չուզէիր երբէք յանձնուիլ բոլորովին...

Գերմանիա ուսած, Պոլսոյ պէս դժուարահաճ հրապարակի մը վրայ աչքառու դիրք մը գրաւած էր արդէն, բժշկական արուեստին մէջ ցոյց տուած իր անսովոր մաքսքիաովը, երբ դէպքերու գահավէժ ալիքը զինք կը նետէր այս երկիրը՝ յուզումնալից ոգիսակաւնի մը իբրև հուսկ սահմանը:

Տօքթ. Տէօվլէթեան չաճապարեց օգտուել իր մտաւոր դրամագլուխը շահագործելու առիթէն: Իր խմորէն ու արժէքէն բժիշկի մը համար միջավայրը այլապէս ձեռնտու էր հոս յաջողութեան արագ ու փայլուն նուաճումներու:

Համեստօրէն, անձնուիրարար, տրամադրուեցաւ ազգային դարմանատար գործին: Բօր-Սայիտի Հայ Քեմբը գնաց, Սուէտիոյ մեր կտրիճ ապաստանեալները խնամելու, նիւթական ծիծաղելի պայմաններով, որոնք... տարապայման ալ թուեցան, պահ մը, մեր սխրալի լգործիչներէն ոմանց, մինչ Եգիպտահայ Տօքթորներու պատկառելի դասը, իր շահախնդիր այլուրութեամբը կ'անմահանար ցեղին տարեգրութիւններուն մէջ:

Տօքթ. Տէօվլէթեան մեզի տուաւ շինիչ օրինակը ասպարէզի մարդուն, որ իտէալի ու զոհողութեան մարդ կը հանդիսանայ ի հարկին: Եւ երբ հարկը այնքան ստիպողական, այնքան հրամայական եղաւ ազգին համար՝ որքան այս ճգնաժամային շրջանին:

Տեսայ զինքը Բօր-Սայիտի իր նուիրական գործին գլուխը, և հաճոյքով նկատեցի յարգանքը զոր ներշնչեր էր ամենուն, ազգակիցներու, այլ մանաւանդ օսարմեառ որոնք՝ խոնարհագոյն մակարդակի մը վրայ Հայրը տեսնելու վարժուած՝ իրենց դիմացը մարդ մը կը գտնէին, հարկադրող անհատականութիւն մը, որուն հպումին հմայքը կը կրէին: — Սրտապնդուած զգացի այս հանդիպումէս ու հաստատումէս:

Անկէ ի վեր երկու տարի անցած էր: Անցեալները, Գահիրէ, բազմն ունեցայ ներկայ գտնուելու Տօքթ. Տէօվլէթեանի հարսանիքին: — Ազնիւ ու սրտոտ արիւնքահայուն՝ Տիար Մաթիկ Գէորգօֆի դասեր, շնոր-

հալի ու մանկամարդ Օր. Սիպիլի հետ կ'ամուսնանար մեր բարեկամը, որ՝ իր պարտականութիւնը կատարած մարդու խղճի անդորրութեամբ մը՝ հրաժեշտ առած էր Բօր-Սայիտէն, լաւագոյն յիշատակներ ձգելով իր հտին...


Եւ այս հարսանիքը խորհրդանշական իմաստ մը առաւ իմ աչքիս, երբ հոն կատարուող, կնքուող խնամութեան անդրադարձայ... Երեք պատուական անձեր, երեք թրծուած կամքեր, երեք գործօն կորովներ — փեսան, հայրը և կնքահայրը — ուշադրութեանս կ'ընծայէին բարոյական զինակցութեան մը թելադրական պատկերը... Տօքթ. Տէօվլէթեան, ներհուն բժիշկ՝ որ ընդունակ է գաղափարական մղումներու, Տիար Մաթիկ Գէորգօֆ, ձեռներէցութեան մարմնացում մը, սիրուն պարզութեան ու յստակատես բարութեան տիպարի մը մէջ, Տիար Արթուրի Մելքոնեան, տենդային ճիզի մարդ, համակ ջիղ ու գաստակ, մին այս գաղութին ամենէն բանիբուն ու կտրուկ անդամներէն, որ՝ առեւտրական այնքան սուր հոտառութիւն ունի, որքան հանրային իրերն անկախօրէն գատելու ընդունակութիւն... Ահաւասիկ հազուագիւտ ռուքիմախոյս ուժեր որոնց միջև կեանքի դիպուածը կը հաստատէ ընկերական, ընտանեկան սերտ կապեր, և որոնք՝ իրարու առընթեր կանգնելով, զիրար ամբողջացնելով՝ կրնան բարօրութեան արտադրիչներ ըլլալ իրենց բազմակարօտ համայնքին համար՝ գործի թէ հանրային տիրոջթներուն մէջ:

Տօքթ. Տէօվլէթեան, անցեալ ամսուն, դէպի Եթովպիա մեկնեցաւ ընտանեօք: Բայց վստահ եմ թէ տար-աշխարհներէն հայրենիք վերադարձող առաջին կարաւաններուն մէջ պիտի ըլլայ ան, երբ ազգային փրկութեան և ստեղծագործ աշխատանքի ժամը հնչէ... Այս խորունկ հաւատքը թրթռաց, անշուշտ, ողջերթի մաղթանքներուն մէջ զինք ճամբու դնող բարեկամներուն. «Տեսութիւն, սիրելի՛ Տօքթոր»...:



ՀԻՆ-ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Կօհարի հիմնած քաղաքին կեդրոնէն հեռու, անապատին մէկ ծայրը, կիսաւեր գերեզմաններու առընթեր, կը գտնուի Մալէք-էլ-Աշրաֆ Շա'պանի դամբարանը. Դամբարան. բայց աւելի ճիշդ պիտի ըլլար զայն աւերակոյտ սնուանել. անոր երկնասլաց գմբէ-



Դամբարանի Միջնաբերդը եւ Մամուլներու դամբարանները

թին ու յաղթ կամարներուն վէմերը մաշած, խորտակուած, անոր նրբաւարտ քանդակներն ու ծակոտկէն զարդերը ցրիւ ինկած թումբ մը կը կազմեն հիմա՝ միջնադարեան աշխարհակալին սկրոտիին վրայ: Ի՞նչու արդեօք ժամանակն ու զէպքերն այնքան անողորք եղած են Շա'պանի մը վերջին ապաստանին հանդէպ, մինչ անդին, ուրիշներ, շատ աւելի հին տաճաններու մէջ կառուցուած, կանգուն մնացիւր են ցայսօր:

Բայց ո՞վ էր այս Շա'պանը: Կիլիկիոյ հայկական թագաւորութեան մահացու վերջին հարուածը աւուղ փորկեան բռնակալ մը, որ՝ եգիպտական գահուն հազիւ տիրացած՝ իր արիւննուշտ մամուլք ասպատակները կ'արձակէր Սուրիոյ սահմաններէն անդին, հուրի

և սուրի մատնելու համար ամբողջ Կիլիկիան, և կը հրամայէր՝ Հայոց Լեւոն Զ. թագաւորն ու իրենները շղթայակապ Եգիպտոս փոխադրելով բանտարկել Խաղանաթ Շամա'իլի մը (*) ժանտահոտ խցիկներուն կամ Միջնաբերդի հեղձուցիչ նկուզներուն մէջ...

Շա'պանի աւերակ դամբարանին առջև կ'ոգեկոչեմ այդ տխուր անցեալը: Մեր կտրիճ նախահայրերուն կորովի ընդդիմութիւնը, իրենց կուրծքերով պաշտպանելու համար հայրենիքը թշնամի գրոհներուն դէմ, իրենց ուժասպառ անկումը, իրենց գիւղիներուն բրգաւորումը կիլիկիան դալարագեղ դաշտերուն մէջ, իրենց տարագրումն ու բանտարկութիւնը, իրենց կրած հալածանքն ու տանջանքը կը յաճախեն հոգիս, և այդ սարսափներէն հինգ ու կէս դար յետոյ կատարուած ուրիշ խժոժութիւններու, ուրիշ եղեռններու, հայ հողին վրայ ստեղծուած ուրիշ դժոխքներու զարհուրելի պատկերը կը ներկայանայ յանկարծ աչքերուս...

Աւերակ դամբարանը կարծես ինծի կը բացատրէ անցեալին մէջ գործուած այդ մեծ վատութեան, քաղաքական այդ մեծ սխալին գաղտնիքը: Կիլիկիան թագաւորութեան կործանումը միակ սխրագործութիւնն եղաւ Շա'պանի, միեւնոյն տաճն ըլլալով իր ու իր սերունդին խողխողումին անուղղակի պատճառը: Պահրիններու Հարստութեան անկումի այդ շրջանին, մանաւանդ երբ ուրիշ Հարստութեան մը՝ Պօրկի Մամուլքներու աստղը կը սկսէր փայլիլ Եգիպտոսի հորիզոնին վրայ, Աշրաֆ Շա'պանի աշխարհակալական քաղաքականութիւնը, ի վնաս հարեւան խաղաղասէր ժողովուրդներու, վիթխարի սխալ մըն էր, ուրկէ ինք պիտի տուժէր նախ, Լեւոն-Թիմուրի մը հրոմներուն լայնօրէն բանալէ առաջ Եգիպտոսի դռները: Բնականաբար, հաշտ աչքով չի պիտի տեսնուէր կիլիկիան

(*) Խաղանաթ Շամա'իլ մին էր Եգիպտոսի սարսափելի բանտերէն, զոր Մալէք էլ-Մօ'այնատ քանդել կուտար, անոր գետնին վրայ կանգնելու համար գեղեցիկ մզկիթ մը (1416-1421):

ամուր պատնէջներուն խորտակումը Շա'պանի ժամանակակից էմիրներէն, որոնք՝ ապստամբելով յաղթականին դէմ՝ անխնայ պիտի կոտորէին զինքն ու իր կուռակիցները, մինչև անգամ դար ու մար ընելով անոնց գերեզմանները:

* * *

Եւ քանի որ էմիրներու յիշատակութիւնն ըրի, աւելորդ չըլլայ թրեւս անոնց մասին հակիրճ ծանօթութիւն մը տալ:

էմիրները խիստ կարեւոր դեր մը խաղացած են եգիպտական պատմութեան մէջ: Պետական բարձրատիճան պաշտօնատարներ, անոնք իրենց կամքը պարտադրած են յաճախ Եգիպտոսի սուլթաններուն: Գրեթէ ամենքն ալ Թուրքեստանի, Մոնկոլիոյ, Արաբիոյ կամ Պարսկաստանի խորերէն Եգիպտոս գաղթած բախտախնդիրներ, կրցած են իրենց խիզախութեան ու քաջութեան շնորհիւ մեծ գիրքերու և հարստութեանց տիրանալ, և ոմանք նոյն իսկ յաջողած են իշխանութեան գլուխն անցնիլ:

Սակայն զարմանալի է որ այդ ասիացի կեղեքիչներէն շատերուն մէջ արուեստի ճաշակը որոշ բարձրութեան մը հասած ըլլայ: Իրենց կանգնել տուած յիշատակարաններուն կամ իրենց բնակութեան սահմանուած պալատներուն մէջ ստէպ կը հանդիպիք այնպիսի գեղեցկութիւններու, որոնք կը մատնեն արուեստագէտին հետ իրենց ունեցած սերտ աշխատակցութիւնը:

Հին-Գահիրէի մէջ՝ իմ ըրած պատշաճերուս ընթացքին՝ այցելեցի այդ կարգի գլուխ-գործոցի մը, էմիր Պէշթաքի պալատը կ'ուզեմ ակնարկել. Տարպէլ-Գէրմըզ փողոցին մէջ, ԺԴ. դարու գրեթէ կիսուն կառուցուած ճարտարապետական գմայլելի գոհար մը՝ որուն կմախքը միայն կանգուն կը մնայ այսօր: Բայց այդ կմախքն իսկ պիտի բաւէր ձեզ իր հմայքին տակ պահելու ժամերով:

էմիր Սէյֆ էտ-Տին Պէշթաք էն-Նասիրի իր ժամանակին ամենէն նշանաւոր անձնաւորութիւններէն մին եղած է. սուլթան Մօհամմէտ էն-Նասրի մտերիմներէն

և անհունօրէն փարթամ, Գահիրէն օժտած է ան գեղեցիկ շէնքերով: Կորովի բայց հպարտ, Պէշթաք առանց թարգմանի երբէք չէր խօսակցեր իր քարտուղարին ու իր պալատին մատակարարին հետ, հակառակ որ ծանօթ էր արաբական լեզուին:

էլ-Մագրիզի արաբ պատմարանը, որուն «էլ-Խիթաթ»-էն կը քաղեմ Պէշթաքի մասին այս պատմական ծանօթութիւնը, կ'ըսէ թէ, երբ սուլթանը՝ մահամերձօրէն հիւանդ՝ անկողին կ'իյնար, Պէշթաք կը ներկայանար և կը հաղորդէր իրեն Գայսուն էմիրին ապրտամբուութեան պատրաստութեանց լուրը: Մօհամմէտ էն-Նասր երկու էմիրներն ալ իր սնարին մօտ հրաւիրելով զիրենք կը հաշտեցնէր, և կը նշանակէր իր յաջորդը՝ յանձին իր անդրանիկ որդւոյն Ապի-Պաքրի: Բայց Պէշթաք կը նախընտրէր սուլթանին երկրորդ որդին՝ Ահմէտը:

Սուլթանին մահուամբ երկու էմիրներուն յարաբերութիւնները կը լարուէին, և Գայսունի ողջմտութեան շնորհիւ միայն կարելի կ'ըլլար արիւնահեղութեանց առաջքն առնել: Այս վերջինը, յիշեցնելով իրենց խոնարհ ծագումը, կ'ըսէր. «Ո՛վ իշխան, ես սուլթան չեմ կրնար ըլլալ, վասն զի ես ածելիի կաշին եմ, ուստիս կաշիներ և նուագարաններու կաշիներ ծախեցի և դուն ինձմէ գնեցիր, ինչ որ ամբողջ ժողովուրդը գիտէ: Դուն սուլթան չեմ կրնար ըլլալ, որովհետև պուզա ծախեցիր և ես քեզմէ գնեցի, ու ժողովուրդը գիտէ ասիկա, և այն» Այս խօսքերուն ճշմարտութիւնն ընդունելէ յետոյ, Պէշթաք Գօրանին վրայ կ'երդնու, և երկու էմիրները կ'երթան միասին համբուրելու մեռած սուլթանին ոտքերը: Նոյնհետայն Ապի-Պաքր գահ կը բարձրացուի Մալէք էլ-Մանսուր (յաղթական արքայ) յորջորջումով և էմիրները՝ համբուրելէ վերջ գետինը նոր սուլթանին առջև՝ հաւատարմութիւն կ'ուխտեն անոր:

* * *

Եգիպտական պատմութիւնը շատ ճոխ է այսպիսի դրուագներով, որոնք ճշգրտօրէն մեզ կը բացատրեն

անցեալին մէջ Փարաւոններու երկրին օտարասեր ժառանգորդներուն բարքերն ու կենցաղը: Եգիպտոսի Սուլդանութեան յարաբերութիւնները դրացի ազգերուն հետ, անոր կատարած քաղաքական մեծ դերը Միջին Դարու ընթացքին, կ'արժէ որ լաւագոյն ուշադրութեան մը առարկան ըլլան մեր պատմաբաններուն կողմէ, Մեծ և Փոքր Հայաստանի մէկ նոր պատմութիւնը գրելէ առաջ: Պաղեստինի և Սուրիոյ ժողովուրդներէն յետոյ, ո՛չ մէկ ազգ մեզի չափ յարատեւ շփման մէջ գտնուած է Եգիպտացիներուն հետ: Եգիպտական իւրաքանչիւր արշաւանք դէպի Հայաստան մեծ յեղաշրջում մը յառաջ բերած է մեր ազգային կեանքին մէջ: Մենք այս երկրին տուած ենք նշանաւոր դէմքեր, յաճախ իսլամացած, և բազմաթիւ գաղթականութիւններ. ո՞վ պիտի թօթուէ անցեալի փոշիները և ի լոյս պիտի ընծայէ եգիպտահայ գաղթականութեան հին պատմութիւնը:

Մեր արարագէտներուն պարտականութիւնն է դիւրացնել հայ պատմագէտին վաստակը, թարգմանելով Սուլդանական Գրադարանի ճոխ ձեռագիրներուն և արտք պատմաբաններու քրոնիկներուն այն մասերը, որոնք կը վերաբերին Հայերուս: Առ այս նպատակաշարմար պիտի ըլլար որ գտնուէին գրասէր Հայեր, ստանձնելու համար այդպիսի պատմական կարեւոր վաւերաթուղթերու հրատարակութեան ծախքը: Չենք կրնար, վերջապէս, պահանջել քեֆէիք խրթնութիւններէ չի խրտչող և իր ժամանակին մեծագոյն մասն այս դժուարին աշխատութեան նուիրող անձէն, որպէս զի հրատարակութեան նիւթական հոգն ալ իր ուսերուն վրայ վերցնէ:

ԿԱՐՕ ՊԱՂԵԱՆ

Գանիբե, 1 Հոկտ. 1917



ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀՈԳԻԻՆ ՄԷՋ



ՀՈՐԻՋՈՆՆԵՐՈՒՆ Ա.ԿՆԻԷՏ...

Բարեկամիս՝ Կարօ Պաղեստին

Տիեզերական տուամին ուշադիր ականատես, մարդկային հոյակապ խոյանքներու, սխրալի գեղեցկութիւններու, պակուցիչ մեծութիւններու հիացումովը սարսուռազին, պիտի կարծէիր թէ առօրեայ կեանքի գոհհիլ պարագաները, ապրած միջավայրիդ ճղճիմ երեւոյթները չի պիտի շրջապահէին քեզի:

Պատերազմը շատ խեղճութիւններ կուտակեց կրակի սահմաններուն ետին, քաղաքներու անվտանգ այլ հետզհետէ աւելի դժուարին ճամբաներուն վրայ: Կենսապայքարի յաւիտենական տաժանքը աւելի անողոքօրէն ճզմեց ուսերը կեանքի անժառանգներուն: Արուեստի ու մտածումի գործաւորները մասնաւորապէս տուայտեցան ստեղծուած նոր պայմաններուն մէջ, ուր նպարավաճառներն ու ամէն գասու շահագէտները իրենց դիւրին ու անպատկառ յաղթանակները պիտի կերտէին: Բայց, միեւնոյն ատեն, ընկերային համերաշխութեան, իրերօգնութեան ճիգերը բազմապատկուեցան, և քաղաքակիրթ համայնքներ անհամար առիթներ ունեցան երեւան հանելու ազնուական բարեսիրութեան անսպառ գանձեր:

Վա՛յ անոնց, մտաւորական այն անկախ գործիչներուն, որոնց պիտի վիճակուէր բանտարկուած մնալ մօրուի ծոցին մէջ իրենց ազգին ամենախորթ մէկ հատուածին... Անոնք ընկերական սպիրտութիւնը պիտի ճանչնային իր ամենէն ծամածուռ, վայրագ ու զարչելի կերպարանքին տակ:

Ամէն քայլի, պիտի գարնուէին քարի մը: — Իրենց արուեստը — խաղաղութեան շրջանին արդէն աւելորդ — հիմա անհարկի, անպատշաճ, գրեթէ վիրաւորիչ պերճանք մըն էր, երբ մանաւանդ իրական տաղանդ դնել

յաւակնէին անոր մէջ: Իրենք անտանելի բեռ մըն էին հասարակութեան վրայ: Գրականութեան քանի մը զրուշ կը տրուէ՞, երբ ա՛յնքան աղէտեալներ, փախստականներ, վիրաւորներ կը սպասեն անգին: Է՛հ, ճառերը կարելի է նորէն մտիկ ընել... ձեռքաբար, ժամանակ մըն է կ'անցնի: Բայց գիրք մը գնե՛լ և կարգա՛լ, ի՛նչ այլանդակութիւն, այնպէս չէ՞, Գէո՛րգ էֆ. Թօփալեան, զո՛ւք, վեհա՛նձն մեկեմաս, որ 15 ոսկինոց զաւելտագրական մրցանակ մը (անշահելի՞) հաստատելով հանդերձ՝ ձեզի զրկուած 15 զրուշնոց «Անմահ Բոցը» մեծեցի՛ք այս տարի, անշուշտ իրաւա՛մբ և իմաստութեա՛մբ: Մամո՛ւլը... Խեցեվճուի ենթարկուած հրապարակագիրներուն համար չէ՛ անիկա, այլ «բարեխոյս» առողափառ... ամաքեօններուն, ըստ Մալէզեան թելագրական որակման:

Գպրո՞ց, ուսուցչութի՞ւն... Կ'աղաչե՛նք, այդ տեղուսնքը շատ մի՛ մօտենաք. մանաւա՛նդ որ «Նոզի՛ր կ'ելլայ»... Անուն մը, անցեալ մը, զօրաւոր անհատականութիւն մը ունիք, — ձախո՛րդ պակասութիւններ, — և յետոյ, չափազանց սրատես էք, չորս կողմերնիդ դիտելու դժբաղդաբար հակամէտ. մինք «խորհրդապահութեան» ջերմեամո՛ղ սիրահարնե՛ր ենք. այլպպէս «հոգաբարձու» կ'ընտրէին մեզի այնքան պատկառելի մարմիններ... Մնա՛ց որ, ուսուցչութեան անհրաժեշտ պայմանն է ուսուցչին խիստ չափաւոր հմտութիւնը իր աւանդելիք ձեռքին մէջ. հակառակ պարագային՝ ո՛ւր կը մնայ... մանկավարժութիւնը:

Ապաքէն, եկեղեցիէն ներս չէ՛ որ ապաստան պիտի փնտռէր գրագէտը, «տօքէն-չաբուխ» տէրտէրներու պակասող սրբութիւնը փոխարինելու... Ուստի թատրոնին դուռը ափ կ'առնէ: Գիշերախառն տենդերու մէջ բիւս մըն է արտադրեր, զօր սիրողներու երկսեռ խումբ մըն ալ յանձն առեր է ներկայացնել՝ ի նպաստ այս կամ այն բարի ձեռնարկին... Հեզինակը — եղկելի՛ գործի-մարդ — կը նախընտրէ Գթութեան թելին տակ մտնել, թէև փորձով գիտէ թէ կէսուակէս պակաս պիտի վարձատրուի՝ քան եթէ վճարէր իր դերակատարները և իր հաշույն խաղար: Նիւթական

տաղտուկներէ խուսափելու փափաքը, նուիրական բանի մը սատարելու գոհացումը, առաւելապէս կը հակակշռեն իր աչքին «եղեմտական արդիւնքին» նիհարութիւնը... Մարդը չի կասկածիր, սակայն, թէ «երախտագիտութեան» ի՛նչ վիթխարի պարտքի մը տակ մտնելու, խօթուելու վրայ է, աւանակօրէն... Դերերու բաժանում, ամիսներով դերուսուցութիւն, շրագրագութիւն, խանդավառութիւն. «Եղա՛ւ, չեղա՛ւ... Հրաշալի՛ էք, տիկին՛, զմայլելի՛ էք, օրի՛որդ, փառաւոր էք, պարոններ՛»... Ներկայացումը տեղի կ'ունենայ, փայլուն, յաջող, հասութառատ... Նպաստընկալ մարմնոյն սընտուկը կարեւոր գումար մը կը մանէ... Շնորհաւորութիւններ. «Պէ՛տք է Ֆրանսերէնի, անգլիերէնի թարգմանել բիւսը», ի՛նչ ըսել է... Թատերասէր շրջանակը կ'ոգեւորուի. «Սեզօն մը ընե՛նք, ուեքուքուառ պատրաստե՛նք»... Թատերագիրը արդէն կերած է իր պատուագինը, բայց անհատում ու անհաշիւ եռանդով կը նուիրուի տաղաբոլում հրապուրիչ գործունէութեան... «Ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ», այլ... Բայց օրին մէկը, երկու ներկայացման փորձերու մէջտեղ, աշխարհիս ամենէն բնական, անվիճելի ու անվնաս բանը ըսելու պէս, երեսդ ի վեր իրենց հոգին փոխելով, կը յայտարարեն, թէ գէթ տարուան մը գոյութիւնդ իրենց կը պարտիս, իրենց «շրջանակին», որ «հոգացե՛ր» է քեզի... Հաշիշի գինովութենէ մը կարծես կը սթափիս, ու գարշանքէ գալարուելով, ծովեզերք կը վազես...:

* * *

Ի՛նչէն է, որ մեր ընկերական բարքերը չեն բարեփոխուել, նո՛յն խակ համաշխարհային վսեմ յեղաշրջումներու, այլ մանաւա՛նդ ազգային սուգի, անդոհի, զգաստացումի այս շրջանին, երբ ապրելու ամօթովը գլուխնիս ծռելէ կը դադրինք ահա՛, երբ Արտասահմանի Հայութիւնը զոհողութեան ճամբուն մէջ արժանաւոր քայլեր կ'առնէ, և մեր տարագիր երիտասարդութիւնը հպարտութեան սիոփարար շունչ մը առնել կուտայ մեզի: Ի՛նչ արամութիւն է, որ հոգեկան

կարգ մը ախտաւոր վիճակներ կը յաւէրժանան, և իրենց առեւեկայթ պարտկումին մէջ աւելի դժնդակ ձեւեր կ'առնեն յաճախ:

Ժամու բակերն ու լրագրական սիւնակները թափուր են պայքարի ժխտքէն. բայց միջակութիւններու մախանքը զինաթափ չըլլար բոլորովին. անիկա՝ անկիւններ ապաստանած՝ իր յագուրդը կը փնտռէ ու կը գտնէ յամառ բանասարկութիւններու, դաժան զըրպարտութիւններու, խուլ ու խղճալի էնթրիկներու մէջ:

Ո՛ւր է պայծառութիւնը եղբայրական փոխադարձ նայուածքներուն, ո՛ւր է ժպիտը սրտբաց մերձեցումներուն ու անվերապահ հոգեխառնումներուն:

«Բարեկամութիւնը» ի՞նչու սուս մըն է մինչև իսկ անոնց բերնին մէջ սրտնք քու անունովդ կ'երդուրնան երբ քեզ փայլուն կերպով շրջապատուած տեսնեն, և որոնք՝ առաջին փողոցի դարձքին՝ քեզ Յուդայի պէս ծախելու պատրաստ են, երբ երեսուն արծաթ կայ քու արհամարհանքիդ կռնակէն վաստկելիք:

* * *

Բայց դառնութեան այս տողերը կ'ընդհատե՛մ, և՛ հորիզոններուն ակնդէտ՝ անհուն կարօտով ծանրաբեռն մտածումս կը յանձնեմ ա՛յ մօտալուտ ու բարերար վաղորդայնի մը ոգեկոչումին... Ծովուն վրայ ճամբաներ կ'ակօսուին աչքիս, ճամբաներ՝ որոնք, աղէ՛, պիտի բանան տարաբնակ մեր մտաւորական թիապարտներուն առջև անխարդախ համակրութիւններու, փորձանքներու մէջ անգամ մը եւս թրծուած, գեղեցկացած եղբայրութիւններու հոգեպարար գիրկը... Ա՛հ, պիտի ազատի՞նք, պիտի ազատի՞նք Անթուրեան զաւակներու, ծակաչք ապատեաներու, ատեցող տխրեցներու այս միջավայրէն, և մեզի հետ պիտի ըլլան, այնպէս չէ՞, սիրելի՛ս կարօ, այն հազուագիւտներն ալ զորս հոս ճանչցանք ու սիրեցինք — առանց պատրանքի...:



Յ Ա Է Յ Զ Ա Յ Ն Ե Ր

Ն Ա Խ Ա Չ Գ Ա Յ Ո Ւ Մ

Արեւը, որ «արեւ»ն է նաև իմ տարապարհակ աշխատաւորներուս, ամէն առտու և ամէն իրիկուն, լեռներուն վրայ, ինծի համար մորթուող զուարակ մըն է: Փա՛ռք անտեսանելի, երկնաբնակ հովուապետին, որ այս շնորհքը կ'ընէ ինծի, առանց վճարումի:

Այլեւս ի՞նչ փոյթ ինծի, եթէ իմ շուրջս, աչքերուս առջև, բիւրաւոր արիւնակիցներ անօթի ու ծաբաւ կը մեռնին, քանի որ իմ տանս մէջ աղբիւր մը կայ, որմէ օրն ի բուն գինի կը հոսի, մինչ ուրիշ աղբիւրէ մըն ալ, որ վաճառատանս մէջն է, ոսկի ու արծաթ կը յորդին, անգուսպ պոռթկումներով:

Բայց ի՞նչ է այս. ի՞նչու այս չարաշուք դազաղը ոտքերուս առջև: Որո՞ւ համար է ասիկա:

«Քեզի՛ համար», կը պատասխանէ հողը ոտքիս տակէն: Ու ես՝ լսելով՝ կը սոսկամ...:

«Այս դազաղը քեզի համար է, քեզի՛՝ որուն վաճառատանը մէջ ոսկին ու արծաթը կը յորդին, առտուընէ մինչև իրիկուն, և որուն տանը մէջ, լայնածորակ աղբիւր մը կայ, որմէ շուայտութեան գինին կը հոսի, իրիկուընէ մինչև առտու, փրփրալից ուղիներով...»

ՄԻՀՐԱՆ ԱԺՏԷՐԵԱՆ

Ն Շ Ա Ն Դ Ա Ի Ի Թ Ե Ա Ն

Գահիրէ, Շուաբայի պողոսային վրայ բիւ 58

Առաջնակարգ խահուէ, բարս, ամէն օր խարկուած: Մեծախանակ եւ փոքրախանակ վաճառում:

Մեզի դիմեցե՛ք, ո՛վ վասակաբեկ ու մեղամաղձիկ հոգիներ, որ ձեր առաւօտեան մսաքափումը, ձեր մարտողութեան խքանը, ձեր խոնջեցիկ կազդոյրը կը փնջրուէք անարատ սուրնի բուրումնաւե՛ս ու մպերուն մէջ: Մեր հայրայրած խահուէն միայն կրնայ պարգեւել ձեզի մաքսիմա՛նը ձեր երազած վայելիքն:

“ԱՆՄԱՀ ԲՈՑԸ”

Տիկիճ Զ***իճ

«Սարսուռով կարգացի Ձեր Անմահ Բոցը: Սրտիս միտեցաւ տէգի մը պէս»... Այսպէս սկսող Ձեր խանդավառ նամակն ալ, ազնիւ տիկին, քրոջական ձեռքի մը սփսփիչ քաղցրութիւնը զգացուց ինձի՝ մտաներուս, աչքերուս ու մտածումիս մէջ:

Ձի գրեցի Ձեզի, չեկայ Ձեզի ըսելու ամբողջ սրտապնդումը զոր ինձի բերին Ձեր խոսվազին տողերը: Բայց սուր վիշտ մը պիտի զգայի եթէ սկեսպակ կամ յափրացած անտարբերութեան մը վերագրէիք այս վարմունքս: — Խիղճս հանդարտեցնելու համար թէև քանիցս կըթնեցայ չքմեղանքի առձեռն փաստին՝ այն խորհրդապահութեան զոր պարտաւոր էի ունենալ Ձեր հասցէին ու սանդուղներուն հանդէպ, կը խոստովանիմ, սակայն, թէ լուսթիւնս աւելի եսական ընոյթ մը ունէր:

Ձեր բառերը կ'երգէին մենաւոր հոգիիս մէջ, և ինձի կը թուէր թէ բան մը պիտի նուազէր ներսիդիս անոնց փայփայանքին վայելքէն, եթէ նոյնիսկ Ձեզի հաղորդէի հաճոյքը զոր անոնք առթեցին ինձի:

Մեկուսացումի ու ինքնամոլութեան վարժուած, հասկցաք, անշուշտ, իմ պարագաս, տիկին, և ներեցիք ինձի, անշահախնդրօրէն ըլլալով ինձի համար մին այն իտէալ — երբեմն անծանօթ — բարեկամներէն, որոնք արուեստագէտը կ'ոգեւորեն իր ճիգին մէջ, անոր ինքնավստահութիւնը կը խթանեն, զայն գերծ կը կացուցանեն իր խրախոյսը հանրային օրկաններէ սպասելու ցաւագար փորձութենէն, և անոր արհամարհանքը կ'ամրապնդեն՝ իր գործին շուրջը լարուած լուսթեան դաւերուն դէմ:



ԲԱՆՏԻ ԿԵԱՆՔԷՆ ԴՐՈՒԱԳ ՄԸ

ԴԱՆԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԻՇՈՏԱԿԻՆ

Մեր առաջին հանդիպումը տեղի ունեցաւ 1893ին, Գաղատիոյ բանտին մէջ, ուր հարիւրի մօտ Հայեր՝



Հանգուցեալ Դանիել Վարդապետ Բարսեղեան վանագան նահանգներէ, քաղաքական «յանցանք»ով ամբաստանուած, կ'սպասէինք հրապարակային դատաւարութեան:

Հսկողութեան թուլութիւնէն օգտուելով՝ առաջին գործս եղաւ տեղեկանալ Կեսարիոյ շրջանին բանտարկեալներէն թէ՛ կառավարութիւնը ի՛նչ գրական փաստեր ձեռք անցուցեր էր իրենց դէմ, թէ մատնութիւն տեղի ունեցած էր:

Ծանօթներէս — որոնց հետ շփման եկած էի երկու տարի առաջ՝ շրջանային պտոյտի մը միջոցին — Պալականցի Քերոբէ Փափաղեան, անձնուէր, ոսկեմաքուր երիտասարդ մը, ըսաւ թէ Դանիէլ Հայր Սուրբի մօտ միայն կրնայի գտնել վստահելի տեղեկութիւններ:

Ու առաջնորդուեցայ Հայր Սուրբին գտնուած ընդարձակ նկուզը, որ Հաւատաքննութեան շրջանին մէկ լիակատար նմոյշը կը ներկայացնէր: Նկուզին բնակիչները, որ ցորեկը միշտ բակին մէջ կը դեգերէին, Հայր Սուրբին տուեր էին պատուոյ տեղը, միակ պատուհանին մօտ:

Այդ մութնուլուսին մէջ մեր առաջին տեսակցութիւնը եղաւ խիստ սիրազեղ և այնքան մտերմական՝ որ քանի մը ըսէի մէջ հանգամանօրէն տեղեկացայ Կեսարիոյ և շրջանին վերջին երեք չորս ամսուան քաղաքական փոթորկումներուն, հայ յեղ. իրադարձութիւններուն, և շատերուն փառաւոր ու մէկ քանինուրու նսեմ արարքներուն:

Մատնութեամբ «կոխուած» էր Դանիէլ վարդապետի սիրական վանքը, մեր ձիաւոր և հետիոտն «տաքգլուխներուն» ժամադրավայրը, նշանաւոր Տէրէվանքը: Անուր չարչարանքներով կորչուած յայտնութիւններու միջոցով թաղուած տեղէն երեւանէր հանուեր էր «վտանգաւոր» գիրքերով ու թուղթերով լեցուն սնտուկը, ի մասնաւորի թալտացի ասպատակ Կիւլպէնկի օրագրութիւնը, որ պատճառ դարձեր էր Կիւրիւնի դիւցազնին, թորոս Ծառուկեանի (Չէլոյի) և շատերուն ձերբակալութեանը:

Ծառուկեանի անունը արիւնս գլուխս ցատքեցուց: Մեր, Մարզօւանի շրջանին բանտարկեալներուն, շրջափակող փոխադրութեան միջոցին, Եօզկատի բանտին մէջ, ուր քանի մը օր մնացինք Պայրամի առիթով, Ժիրայրի կողմէն մասնաւոր լրաբերէ մը տեղե-

կացեր էինք թէ՛ Ծառուկեանն ալ կը փնտռուէր աշխուժիւ: Անցողակի — Ժիրայր այդ լրաբերին միջոցով կ'առաջարկէր մեզ՝ իր զինեալ խումբով՝ քաղաքէն 2-3 ժամ հեռուն՝ կորզել սատիկաններուն ձեռքէն: Մեր ընկերները շնորհակալութեամբ մերժեցին այս յանգուզն բայց ոչ անխրագործելի առաջարկը, առարկելով թէ, իրենք քանի մը շաբաթէն անպարտ արձակուած՝ իրենց տուները պիտի վերագարծուէին անշուշտ:

Թորոս Ծառուկեան Փոքր Հայքի անդրանիկ ասպատակն էր, որ Ձեյլոյ անուանակոչութեամբ՝ իր մկրտութիւնը, սուրը, հրացանը ու ձերմակ ձին ստացեր էր Մարզօւանի կազմակերպութենէն, ու յետոյ իրեն ընկեր առած՝ Կիւլպէնկը և աւելի ուշ՝ միացած հոչակաւոր Մինասեան Խումբին, որ նպատակ ունէր պէտք եղած տեղը խրախոյս, հարկ տեսնուած տեղը սարսափ պտոյցներու...

Դանիէլ Հայր Սուրբը հեծկտուքի մօտեցող հատակոտոր ձայնով մը յայտնեց թէ՛ երեք օրէ ի վեր թորոս Ծառուկեանն ալ բերուած՝ բանտին վերնայարկին մէջ կը պահուէր, «խիստ հսկողութեան տակ»: Բայց Հայր Սուրբը իր վստահելիներուն ձեռքով միջոցը գտեր էր հարցազակցելու թորոսին հետ: Այդ միջոցը կամ միջնորդն էր բանտապահներէն մէկը, որուն բարութիւնը մեր Կեսարացի բանտակիցները յաջողք էին վարձել ամսական երկու մէծխոով...

Դանիէլ վարդապետին իմացուցած էր մեր թորոսը թէ ինք վար բերուել, Հայերուն մօտ ըլլալ կ'ուզէր: Բոպէապէս որոշեցինք գումար մը գոյացնել և կաշառքով թորոսը վար իջեցնել: Հանգանակութեան թուղթին գլուխը, իր անուան գիմաց գումար մը նշանակեց վարդապետը, բան մըն ալ գրեցի ևս. Քերոբէն թուղթը պտոյցուց միւս նկուզներուն ու բակին մէջ և քանի մը վայրկեանէն Ա մէծիտի պատկառելի գումարով մը զայն վերագարծուց մեզի: Հիմա խնդիր էր թէ ս'վ պիտի կախէր բոժոժը:

Հայր Սուրբը, առաջին անգամ ըլլալով, յոգնած, բռնի ժպիտով մը ըսաւ. «Այդ ալ հոգ ընելու բան է» և Քերոբէին կռնակը ձեծելով՝ «Մեր Խեմքը ողջ ըլլայ»

ըսաւ : Քերորէն մեկնելէն յետոյ Հայր Սուրբը անսահման խանդաղատանքով և խիստ ներբողալից ոճով մը խօսեցաւ Քերորէի անկեղծութեան, անձնուիրութեան և խիզախութեանը մասին — իր վերջին խիզախ պատասխանը լման 60 գաւազանի հարուած արժած էր իրեն կեսարիոյ բանտին մէջ, Միւթէսարըֆին իսկ ձեռքով : «Քայց վախնամ», յարեց Վարդապետը, տխուր բնազդով մը օրօրելով իր աղերեկիլ սկսող գլուխը, «օր մը խեղճին գլուխը ուտեն») իր անսանձ համարձակախօսութեանը համար :»

Քերորէն շատ չանցած ճառագայթարձակ դէմքով մը ներս մտաւ և «Եղաւ» ըսաւ : Գործը ուղղակի բանտապետին հետ կարգադրեր լմնցուցեր էր : Թորոսը նոյն իրիկունը իսկ վար, մեր մօտը պիտի բերուէր : Քերորէն այս բարի լուրը յաջողեր էր նոյնիսկ հաղորդել Թորոսին որ այդ պահուն պատուհանին առջև կայնած՝ բակին վրայ կը նայի եղեր :

Ես, մութը մնացած կէտի մը վրայ ապահովուելու համար, ներողութիւն խնդրելով Հայր Սուրբէն, դուրս, բակը խոյացայ, վեր նայեցայ զգուշութեամբ, տեսայ Թորոսը, փայլակի պէս իրարու զարնուեցան, սարսուցին մեր նայուածքները, եւ գլուխի աջ ու ձախ ցընցումով մը հարցուցի թէ՛ ի՞նչ կար չիկար : — Ազնիւ տղան անմիջապէս հասկնալով մտահոգութիւններս իրեն և ուրիշներու մասին, ձեռքը՝ դանակած և՛ վզին տանելով և գեղեցիկ յօնքերը վեր նետելով՝ տուաւ անդորրացուցիչ պատասխանը, որ կը թարգմանուէր՝ «Վիզս կտրելու ալ ըլլան՝ ինձմէ խօսք չելլեր» — Ու նորէն փութացի Վարդապետին քով, որ այս անգամ գրանը մօտ ծալուած անկողինի վրայ նստած էր :

Դռնէն ներս խուժող լոյսին մէջ իր լրութեամբը,

*) Անանկ ալ եղաւ : Հագիւ ամիս մը յետոյ յոյն բժիշկի մը տեղեկագրել տուին թէ՛ «Քերորէ խեղաբուութեան նշաններ ցոյց կուտար...» ու գիշերին մէկը հեռացուցին զայն մեր մէջէն և Պոլիս տարին... Շատ փնտառուքներ, բայց ի զո՛ւր :

յստակօրէն տեսայ մարդը, որուն դէմքին և հինաւուրց նահագնեաներու, մարգարէներու և սրբակրօն ձգնաւորներու պատկերներուն միջև հանգիտութեան զարմանալիօրէն ակնառու դիժեր նշմարեցի : Այն ատեն իր մօրուքին մէջ տիրող տարրը սեւն էր, և անոր յոխորտ աչքերուն աներկիւղ նայուածքը՝ դեռ «գործող» հրաբուխի մը խառնարանին տպաւորութիւնը կը թողուր վրաս : Միքայէլ Անճէլոյի Մովսէսը տեսնողներ պիտի վկայէն ինձի հետ թէ՛ այս երկուքին աչքերուն միջև տարօրինակ նմանութիւն մը կար, այդ աչքերը ըսել կ'ուզեն կարծես թէ, իրենց տէրերը երկնաքաղաքացիներ են, իրենց հողաթափներուն ներբանովը միայն հողին կապուած :

Ես որքան կը հետաքրքրուէի Հայր Սուրբին անձովը, ինք, կարծես դիտուեմով, այնքան խոյս կուտար իր անձին վրայ խօսելէ : Վերջապէս ուղղակի հարցումներուս պատասխանել ստիպուելով յայտնեց թէ՛ երբեմն խիղճի խայթի պէս բան մը կ'զգար «տաք գլուխներուն» ընծայած իր չափազանց վստահութեանը համար : «Ասկէց զատ, կ'ըսէր, Ազգին պատիւը մէկ սակի ըրին հեթանոսները, վանքը կոխելով և թաղուած սընտուկը երեւան հանելով :»

«Ինչ որ այսօր վիշտի նիւթ է՝ վաղը, ազատութեան օրերուն, փառքի առիթ պիտի դառնայ,» ըսի զինքը խրախուսելու համար, զուարճախառն յուսադրութեամբ մը թէ՛ «սնտուկը պահուած վայրը՝ վրան յեղափոխական վարդապետի արձանով մը՝ Հայուն ապագայ ուխտավայրերէն մէկը պիտի ըլլար :»

Վարդապետը, իր անձը կարծես նորէն մտացութեան մէջ թաղելու համար, առաջարկ դրաւ որ յաջորդ օրը «ծանրագլուխ» բանտարկեալներ մէկտեղ գալով խորհին թէ՛ ի՞նչ միջոցներ ձեռք առնուելու են՝ թուրքերուն խժղութիւնները, սխաթեմաթիք հալածանքները և հայ բանտարկեալներուն կրած չարչարանքները կրտսթոնի կամ անգլիական մամուլին տեղեկագրելու համար : Աս ըսելէ յետոյ հաղորդեց թէ ինք արդէն, Թալասցի համակրելի ուսուցիչ Կարօ Քէրթմէնեանի հետ, կարգ մը թարմ դէպքեր ամփոփած էր :

Դանիէլ Վարդապետին թելադրութիւնը խիստ բանաւոր էր. անիկա կը յայտնէր երկու բան. նախ՝ Հայր Սուրբին մտահոգութիւնը՝ իր ցեղին հայածական զաւակներուն և խոշտանգուած բանտարկեալներուն նկատմամբ. երկրորդ՝ ցեղին յամառ ակնկալութիւնը թարգմանող իր հաւատքը՝ Անգղիոյ հռչակուած հայասիրութեան և արդարախօհութեան վրայ: Խնկանոյշ տպաւորութիւններու ներքեւ հրաժեշտ առ ի Հայր Սուրբէն և բակը ելայ գաղտագողի ակնարկներով Թորոսի գեղեցիկ գլուխը որոնելու վերնայարկի փեղկերուն ժլատ բացուածքներուն մէջ:

Քերորէ Փափաղեան, Կարօ Քէրթմէնեան և նախկին սաներէս էվքարացի Մարտիրոս Ճիվանեան դուրսը կ'սպասէին ինծի, Վարդապետին նկատմամբ կազմած տպաւորութիւններս լափելու պատրաստ անօթի հետաքրքրութեամբ մը: Մարտիրոս, որ ամենէն սակաւախօսն էր, թերահաւատ քմծիծաղով մը հարցուց. «Քանի՞ բառ յաջողեցաք կորզել Հայր Սփինքսէն: — Պատասխանեցի թէ մարզը՝ իր անձէն զատ՝ ամէն բանի վրայ հատորավայել ճոխութեամբ խօսած էր ինծի հետ: Յետոյ երեք խօսակիցներս՝ Վարդապետին խնամուտօրէն լուծ կէտերուն վրայ՝ պակաս տեղ չթողցուցին. հապճեպով, բայց կատարեալ գիծերով ու գրուագներով ներկայացուցին ինծի Յեղափոխական Վարդապետը, որ ա՛յդ վայրկեանէն սկսելով ամպածրար Արգէսի վեհութեամբ կը բարձրանար աչքերուս առջև, անխառն հիացումի հպարտութիւնը ըմբռնելով առ ինձի: — Նոյները այդ առիթով յայտնեցին նաև թէ Թորոսը իրիկունը, մութը կոխելէն յետոյ, վար պիտի բերուէր:

Դանիէլ Հայր Սուրբի նկատմամբ տպաւորութիւններս և անոր թելադրութեանը մասին կարծիքս իսկոյն եւեթ հաղորդեցի ընկերոջս, Փրօֆ. Կ. Թումանեանի: Ընկերս իրեն յատուկ յտակատեսութեամբ մը յայտնեց թէ նոյն մտածումը երկու երեք օրէ ի վեր ի՛նք ալ ունեցեր էր. հետեւաբար խիստ նպատակայարմար գտաւ որ յաջորդ օրը իսկ ընդարձակ տեղեկագիր մը խմբագրուի սակաւաթիւներու աշխատակցութեամբ: Որոշե-

ցինք Վարդապետին նօթերէն ու խորհուրդներէն օգտուիլ, առանց զինքը հրապարակ հանելու:

Յաջորդ օրը բանտին մէջ տեղի ունեցաւ ժողով մը, որուն կը մասնակցէին Փրօֆ. Կ. Թումանեան, Անտոն Ռչտունի, Յակոբ Պահլաւունի, Կարօ Քէրթմէնեան և այս տողերը գրողը: Հոգ տրուեցան երեք որոշումներ. ա) փաստով, թուղթով բռնուած ընկերներէն հինգը պիտի պատրաստէին մէկ մէկ խնամուած պաշտպանողական ճառ՝ մերձեցող հրապարակային դատավարութեան համար. բ) բանտէն դուրս և անկէ ներս թարմ խժոժութիւններու տեղեկագիր մը՝ Պուխի Անգղ. Գեսպանին. գ) բանտարկեալներու ազատութեան համար խնդրագիր մը՝ յիշեալ տեղեկագրին կցուած:

Աշխատութեան բաժանում տեղի ունեցաւ և գործ ստանձնողներ սկսան անմիջապէս պրպտել, հաւաքել, գրել, խմբագրել եւ ինչ: Այս գեղեցիկ ձեռնարկին աւետիսը Հայր Սուրբին հաղորդելու համար փութացի իրեն մօտ, ուր գտայ Թորոս Ծառուկեանը, որուն հետ սղջագուրուեցանք յուզուած, բարբախուն սիրտերով: Վարդապետը տարած բարի լուրիս վրայ գրեթէ անտարբեր մնաց, ինք համագրուած էր Թորոսին կացութեամբ, զոր «ժանր, շա՛տ ծանր» կ'որակէր: Յուսադրիչ խօսքերով զուր տեղ ջանացի խրախուսել Հայր Սուրբը և Թորոսը. իրենց ամբողջ միջաւանը — որ ի՛մա ալ եղեր էր Գաղատիոյ բանտը փոխադրուած օրէս ի վեր, Կիւլպէնկի յիմար օրագրութիւնն էր, ուր Թորոսի և իր քաջագործութիւնները արձանագրուած են եղեր լայնօրէն:

Դանիէլ Վարդապետը կանուխէն ճանչցողներ ինծի հաւատեցին թէ ան լրջախօս ու միաժամանակ շէն շող, կենսուրախ, ընկերական մարդ մը եղած է, բայց իր վանքէն գտնուած «վտանգաւոր» սնտուկը դադարը եղած էր խեղճ մարդուն բովանդակ զուարթութեանը: Կապարի պէս ճնշող մթնոլորտին ու շարաշուք երկիւղներուն մէջ կաթիլ մը յոյս ծորեցնելու դիտումով ըսի. «Դուրսը լուր կը շրկենք որ Թորոսին ազատումը ապահովեն ամեն գնով...» Վարդապետը շունչ մը առաւ և

իր մատերով մօրուքը յարդարելով ըսաւ թէ՛ ինք ալ տարբեր ճամբայ մը չէր տեսներ :

Յետոյ թորոսը առի ու գուրս ելայ և տարի զինքը ներկայացուցի մեր Մարգուանցի բնկերներուն, սրտնք, քիչ բացառութեամբ, արդէն կը ճանչնային զինքը. և առաջարկեցի Մարգուանցի Մկրտիչ Փափագեանին որ՝ նարտի փառթիով մը «չափուի» թորոսին հետ — երկուքն ալ քաջ նարտ խաղացողներ էին : Ու ես առանձին կրկին դարձայ Հայր Սուրբին մօտ :

Վարդապետը խիստ տխուր մտածումներու մէջ թաղուած՝ խորունկ հառաչանքով մը՝ իր տագնապակոծ սիրտը անգամ մըն ալ բացօթ առջիս : Սիրոյ, խանդադրտանքի, բարութեան մարդը պարզապէս նահատակուելու վրայ էր՝ աննման թորոսին, Կիւլպէնկին և ուրիշ լրջօրէն վտանգուածներու կացութեանը պատճառով : Անոր ազնիւ սիրտը բուրվառի մը պէս կը մխար և ապահովարար անբարբառ հառաչանքով ու պաղատանքով զիշեր ցրեկ կ'սղոյէր Ամենակալին գահը :

Դուրսէն առաջնակարգ Հայ փաստաբաններ, Աւագեան եւ Շամլեան, անձնուէր և ազնիւ Հայեր, մեզի լուր հասցուցեր էին թէ՛ մեր դատավարութիւնը պիտի սկսէր Մայիսի առաջին օրը (1893) և թէ փաստաբան Շամլեան ազնուօրէն ստանձնած էր թորոսի պաշտպանութիւնը : Ներսէն վայելուչ սեպեցիներ և խնդրեցիներ որ մեզի համար նշանակուած փաստաբաններ մեզի հետ չփուռ մտնեն կարգ մը լուսարանութիւններ մեր բերնէն լսելու համար : Մեր այս խնդիրքը կատարուեցաւ մէկ տեսակցութեան համար միայն, բանտարկեալներուն կողմէն երկու ներկայացուցիչներու հետ : — Փրօֆ. Թումանեանի և ինձի յանձնուեցաւ այդ հոգը : Տեսակցութիւնը տեղի ունենալու էր բանտէն դուրս՝ բայց անոր կից գրասենեակի մը մէջ :

Արդ, Դանիէլ Վարդապետին հարցուցի թէ իրեն համար ինչ կ'ուզէր որ ըսէի Հայ փաստաբաններուն : — «Իմ անձովս բնաւ թող չզբաղին,» ըսաւ Աստուծոյ ճշմարիտ մարդը, «Թորոսը թող ազատեն և այդ հերիք է ինձի...» Հայր Սուրբին աչքերը լեցան, խմինիրս՝ նմանապէս : Այդ պարզուկ մարդը այդ ըսպէին մարդ-

կային երեւակայելի բարձրութիւններուն վերջին ծայրը հասած էր իմ աչքերուս առջև : Ուրիշ ըսելիք ու ընելիք մը չգտնելով՝ յափշտակեցի իր աջը (զոր միշտ խնամտօրէն կը փախցնէր) ու երկիւղած ու երկար համարոյր մը գրողմեցի անոր վրայ :

Աւագեան և Շամլեան փաստաբաններուն հետ մեր տեսակցութիւնը անօգուտ չեղաւ : Մարդիկը շատ նպատակայարմար գտան մեր ներսը սկսած ծանօթ գրական աշխատութիւնները : Կարծիք յայանեցին թէ ըլլալիքը ձեւապաշտական դատավարութիւն մըն էր, որովհետեւ իրենք Գաղատիոյ կուսակալ Ապէտին փաշայէն տեղեկացեր էին թէ՛ իր թելադրութեանը վրայ հաւաճօրէն ամենքը կայտերական ներուժի պիտի արժանանային :

Դանիէլ Վարդապետին լուրջ մտահոգութիւնը, յանձնարարութիւնը և ողջոյնները հաղորդեցի իրենց : Իրենք արդէն տեղեակ էին գրեթէ ամէն բանի : Թորոսի և Կիւլպէնկի համար իրենց հօգին ալ կը մրկէր. և իրրե դարման թէ սփոփանք՝ մեզի խոստացան երթալ նոյն օրը իսկ տեսնել Անգղ. Հիւպատոսը և հարկ եղածը խօսիլ, ընել վտանգուած հիւզին կեանքը ազատելու համար : Ներսը զանազաններու ուղղելիք կարգ մը պիտանի թելադրութիւններով մեկնեցան փաստաբանները, առանց սակայն գուարթ մթնոլորտ մը թողելու իրենց ետին :

Հայր Սուրբը և առ հասարակ ամենքը բակին մէջ կ'սպասէին անհամբեր : «Ձեւապաշտական դատավարութիւնը» և «ներու մի» հեռանկարը միայն առաջ քշեցինք, մեզի վերապահելով մեր երկիւղները : Փաստաբաններուն յանձնարարութիւնները առանձին առանձին կատարեցինք : Յետոյ Հայր Սուրբը աչքով ըրաւ որ իր խուցը քաշուինք : Մեր տեսակցութիւնը պատմեցի իրեն բառ առ բառ : Մարդը, նորէն, յուսեալօրէն, գլուխը օրօրելով՝ ըսաւ. «Տեսա՞ր որ իմ երկիւղներս անհիմն չեն :» «Բայց, յարեց վճռական շեշտով մը, պէտք է ամեն միջոց գործածել տղաքը ազատելու համար :» Իր թելադրութեանը վրայ ես գացի տեղեկագիր, խնդրագիր եւ ըն. փութացնելու համար, և ինք, ապահով եմ,

կրկին թախանձագին ափ առաւ իր Ամենակալին դուռը :
 Հրապարակային դատավարութիւնը սկսաւ Մայիս
 1ին : Վկաներու և ամբաստանեալներու հարցաքննու-
 թիւնները տեւեցին երկար օրեր : Մեր քաջ հայ փաս-
 տաբանները յաջողեցան քաշեցնել այն օրինական
 տրամադրութիւնը թէ՛ հրապարակային յայտարարու-
 թիւններ միայն պիտի կրնան վաւերական համարուիլ
 և ոչ նախնական հարցաքննութեան միջոցին ո՛ր և է մի-
 ջոցով կորուսած յայտարարութիւններ : Այս յաջողու-
 թիւնը մեծապէս գօտեպնդեց ամբաստանեալները , որոնց
 մեծագոյն մասը հրապարակային ատեանին առջև հեր-
 քեցին իրենց նախնական յայտարարութիւնները , խոս-
 տովանութիւնները , իրրեւ արգիւնք ծանր տանջանք-
 ներու : Գատարանը այդ օրերը բաւական նեղն ինկած էր :

Մեր Հայ փաստաբանները ազնիւ խնամքն ունե-
 ցան մեզի հաղորդելու թէ՛ այս նոր յայտնութիւննե-
 րուն վրայ Անգղիոյ Հիւպատոսը բոլորովին շահուած էր
 մեր գատին և հեռագրական ծածկագիր հաղորդագրու-
 թեամբ մը եղելութիւնը իսկոյն հաղորդած էր իր կա-
 ռավարութեանը : Յոյսը սկսեց էր ճառագայթել մեր
 նկուղներուն մէջ : Դանիէլ Վարդապետ միայն չէր հա-
 մարձակեր յուսալ . Սփինքսի պէս լուռ , գերեզմանի
 չափ վհատ՝ կը շարունակէր քաշել իր համբիշքը , իր տե-
 սանողի խորթափանց աչքերովը նշմարելով դաժան
 ապագան :

Հայր Սուրբը իր յուստեսութեան բոլոր պատ-
 ճառները թուելէ յետոյ յայտնեց ինձի թէ՛ ինք թորոսի
 և Կիւլպէնկի փրկութեան համար մէ՛կ ճամբայ միայն
 կը տեսնէր , որ էր՝ դատավարութեան բաւական եր-
 կայն երթեւեկի միջոցին՝ պատրաստ բռնուած մէկ եր-
 կու ձիով ու զէնքով փախուստ : Յայտնեց նոյն ատեն
 թէ այս խիզախ գիւտը թորոսի կողմէն յղացուած , իր
 կողմէն որդեգրուած էր : — Յղացումը հիանալի էր ,
 արդարեւ . բայց գործադրութիւնը բաւական տարա-
 կուսելի , քանի որ Գաղատիոյ մէջ հազիւ սկսեց էր
 «կազմակերպութիւն» մը . . . Ծրագիրը դուրս հաղոր-
 դուեցաւ և պատասխան եկաւ թէ՛ մարդ չունէին գլխ-
 բաղաբար :

Եւ , տարօրինակ բան , այս յուսահատ լուրին վրայ ,
 և փախուստի ներքին , անյաջող ուրիշ փորձէ մը յե-
 տոյ՝ Դանիէլ Հայր Սուրբին մէջ խիստ ուշագրաւ յե-
 դաշըջում մը տեղի ունեցաւ : Ան յաճախ բանտին բա-
 կին մէջ կ'երեւէր , իր կողքին ունենալով «արիւնով»
 ամբաստանուածները : Ինք , անխուսափելին կուսած ,
 բանտին համակերպած , հանդարտապէս , երկիւղածօ-
 րէն , հովուարար կը պատրաստէր իր հօտին զաւակ-
 ները՝ դիւցազնաբար ճաշակել նոյն խսկ մահուան բա-
 ժակէն . . . Այս հովուական կազդուբանքին ու յորդո-
 բանքին միջոցին էր որ թորոս քաջօրէն արտասանած
 էր իր անմահական խօսքը . «Հայր Սուրբ , եթէ եօթը
 կեանք ունենայի՝ եօթն ալ կուտայի Ազգիս սիրոյն
 համար :» Ատոր ի պատասխան՝ Վարդապետը ըսած էր .
 «Ապրի՛ս , թորոս , կախադանին բարձունքէն տալիք
 պատգամդ ա՛յդ ըլլայ :» Եւ թորոս խոստացեր էր ա՛յդ-
 պէս ընել . . .

Դատավարութիւնը տեւեց 29 օր : Բանտին մէջ
 պատրաստուած պաշտպանողական ճառերէն ոմանք ար-
 տասանուեցան , ուրիշներ ընդմիջուեցան : Հայ փաս-
 տաբանները շատ լեզու թափեցին , համարձակելով յի-
 շել նոյնիսկ Պերլինի ՅԱրդ . յօդուածը և ընդհ . դատա-
 խօսքին առաջարկին վրայ ի կարգ հրաւիրուելով իրենց
 այդ մեծ յանդգնութեանը համար , և կարգ մը ամբաս-
 տանեալներ ալ համարձակ պոռացին թէ իրենք անլուր
 չարչարանքներու մատնուած էին և չն . : Հակառակ այս
 բոլորին՝ վերջին օրը , Մայիսի 29ին (1893) արձակ-
 ուեցան վճիռները , 17 հոգի , Հայր Սուրբն ալ միա-
 սին , մահապարտ հռչակուեցանք , 24 հոգի 7-15 տարի
 բերդարգելութեան դատապարտուեցան , խումբ մը
 անպարտ արձակուեցաւ , ուրիշ խումբ մըն ալ իր կար-
 զին կ'սպասէր դատուելու :

Դանիէլ Վարդապետ գրեթէ բերանը չբացաւ դա-
 տավարութեան միջոցին . ու երբ վճիռները շաղկած
 բանտ վերադարձանք՝ անսպասելի պաղարիւնութեամբ
 մը՝ «Տղա՛ք , ձեր լուադոյն երգե՛րը» բացազանչեց ան .
 ու իր հրամանին վրայ հնչեցին ազգային երգերը , հա-
 մարձակ , խիզախ , թնդացնելով բանտին պատերը :

սաւոր շեշտով մը ըսաւ Գանիէլ Հայր Սուրբը. «Կը հաւատա՞ք որ Նախախնամութիւնը ազատեց ձեզ, որ երթաք և Թորոսի ու ընկերներուն ազատութեանը համար թափէք ամէն հնարաւոր ջանք:» — «Այո՛, կը հաւատամ, և այ՛գպէս ալ պիտի ընենք,» ըսի, երկիւղածօրէն, հաստատարաբար:

Ու բանտին Սուրբը Թորոսին ձեռքը բռնելով դըրաւ ձեռքիս մէջ, ու իր աջը դրաւ մեր շաղկապուած ձեռքերուն վրայ իբր սեխափ կնիք, ու իր բարեպաշտ աչքերուն նայուածքը մխրճելով կապոյտին ալքերուն մէջ՝ վճիտ շեշտով մը արտասանեց. «Տէ՛ր, ուղղեա՛ր ըզգընացա՛մ ուղեւորութեան աղօթքը: Ողջագուրուեցանք անգամ մըն ալ: Թորոս ինձի իբր յիշատակ տուաւ իր կամար-գօտին, զոր դեռ կը պահեմ անգին նշխարի մը պէս: Բանտին դուռը կը բացուի. կ'ելլենք գուրս. մաղթանքներուն կը պատասխանենք խոստումներով: Ու վերջին անգամ ըլլալով կը տեսնեմ Թորոսը, իր գեղեցիկ գլուխը հանգչեցուցած վարդապետին ուսին վրայ...»

* * *

Թեթեւ հսկողութեամբ մը, առաջնորդուեցանք Կ. Պոլիս, ուր ժամանակին Ոստիկանութեան Նախարար Նազըմ պէյ (յետոյ փաշա) մեզի հաղորդեց թէ Պրինտիզի պիտի ճամբորդենք: Եւ արդարեւ առաջին նաւով, երկու գօմխէրներու անուանական հսկողութեան տակ, ուղղուեցանք Պրինտիզի, ուր առաջին անգամ զգացինք կատարեալ ազատութիւնը: Եւ հեւասպառ ընթացքով մը կտրելով Եւրոպական ցամաքը՝ հասանք Լանտոն, ուր մեզ կ'սպասէր շատ կարեւոր գործ մը:

Մեր առաջին զբաղումը եղաւ մասնաւոր տեղեկագրով մը երեսփոխաններու և խմբագիրներու պարզել մեր բանտակից եղբայրներուն արգահատելի դըրութիւնը ու խնդրել միջամտութիւն մը անոնց ի նըպաստ: Գացինք տեսանք Ճէյմս Պրայսը, որ մեծապէս զիւրացուց մեր գործը. անոր յանձնարարութեամբ ներկայացանք Սըր Էտուարտ Կրէյլին և զանազան Եւրոպոխաններու: Այս վերջիններէն Մր. Սթիվընսըն,

Ճէյմս Պրայսի կազմած Anglo-Armenian Association-ի համակրելի նախագահը, ուրախութեամբ մեզի հաղորդեց թէ՛ Սըր Էտուարտ Կրէյլ, մեր վկայութիւններուն վրայ, հաւանած էր որ Երեսփ. Ժողովին մէջ հարցապնդում մը ուղղուի Գաղատիոյ մնացած հայ բանտարկեալներուն ի նպաստ: Լոնտոնեան մամուլն ալ ուժ տուաւ մեր խնդիրքին:

Հարցապնդումը տեղի պիտի ունենար Յուլիսի 20ին, Ընկերիս, Փրօֆ. Թումանեանի հետ, բարախուն սրտով, ու Մր. Սթիվընսընի կողմէն մուտքի բարտերով, որոշեալ ժամուն գացինք ներկայ գտնուելու Երեսփ. Ժողովին: Մր. Սթիվընսըն՝ յուզուած երեւոյթով, ու լեցուած աչքերով, դիմաւորեց մեզ ու գուժեց թէ՛ մեր ընկերներէն հինգը նախօրդ գիշերը կախազան հանուած էին Գաղատիոյ մէջ... Մեր սրտերը, այս անակնկալ բօթէն շանթահարուած, աւերակոյտի վերածուեցան հոն: Մթնցած աչքերուս առջև, օդին մէջ, ջահերու նման կը ձօձէին կարծես Թորոսը, Կիւլպէնկը, Յովհաննէսը, Միրիճանն ու Փանոսը: Իսկ Գանիէլ Վարդապետը՝ Անիի հոյակապ տաճարներէն մէկին պէս, կործանած կ'երեւակայէի... Եւ գէթ մնացածներուն ի նպաստ հարցապնդումի հաւաստիքն ու հրաժեշտ առնելով մեր հայասէր երեսփոխան բարեկամէն՝ Խորհրդարանի սեմէն շիտակ մեր բնակարանը վերադարձանք մեր վիշտին հետ առանձնանալու համար...

Եւ արդարեւ հարցապնդումը տեղի ունեցեր էր, ու որոշուեր էր միջամտութիւն, սրուն անմիջական արդիւնքն եղաւ Գանիէլ Հայր Սուրբին և իր ինը բաղակիցներուն մահավճիռին աքսորի վերածումը և միւսներուն պատիժներուն թեթեւացումը: (Ժամանակ յետոյ՝ ողջ մնացողները ազատեցան մասնաւոր ներումներով:)

* * *

Այդ յուզումնալից թուականէն լման 17 տարի յետոյ, 1910ին, բաղդը նեւեց զիս Նեղոսի օփերուն վրայ: Գերազանց երջանկութիւնն ունեցայ Աղեքսանդրիոյ մէջ կրկին հանդիպելու Գանիէլ Վարդապետին, որուն խնկանոյշ դրացնութիւնը վայելցի երեք տարի.

Մարդը ընցեր էր. իրաւցընէ Անիի կործանած տաճարի մը սրբատաշ աւերակոյտը կը յիշեցնէր ինծի իր խորխլած առողջութեամբ, նուէր բանախի և աքսորի կեանքին: Առաջին հանդիպումիս՝ սահմակումս արդարացնելու համար ըսաւ. «Ես Թարսին հետ մեռայ...»

Թարսին յիշատակը իր ազօթքներուն սրբութիւնն ու քողցրութիւնը ունէր Դանիէլ Վարդապետին համար: Անոր մագաղաթեայ գէմքին վրայ յաղթանակի զգացումին մտեցող գահունակութիւն մը կ'ուրուագծուէր ամէն անգամ որ Թարսի գիւցազնավայել մահուան պարագաները կը թուէր ինծի: Ան, Փոքր Հայքի անդրանիկ Ասպատակը, բանախի Սուրբին խրատը յարգեր էր՝ կախազանին գագաթէն աղաղակելով. «Մնաս բարո՛վ, սիրական Ազգս, երէ եօրը կեանք ունենայի՛ եօ՛րն ալ կուտայի քեզի համար:» Կիւլպէնի ծայնակցեր էր Թարսին, միւս երեքը աղաղակեր էին՝ «Կեցցէ՛ Հայրենիք:»

Յեղափոխական գործունէութեամբ նուիրագործըւած Տէրէվանքի յիշատակը, սրուն վրայ աւատան աստղին պէս կը ճաճանջէր Թարսին յիշատակը, և Ազգեքանդրիոյ հայ թշուառներուն սէրը, երկու գլխաւոր երակները եղեր էին Դանիէլ Վարդապետին ջախջախուած կեանքին: Ան, մտրած հրաբուխի երեւոթին տակ, կը պահէր տակաւին իր ցեղին փրկութեան հաւատքին խարոյկը. «ձեռքով դրածի պէս» գիտէր թէ Հայը պիտի ազատուէր: Ու ապահովարար իր մարգարէական աչքերը գահունակութեամբ փակեց՝ ազգային Արեւագալը հեռուէն ողջունած ըլլալէ յետոյ...

Դանիէլ Վարդապետ հանրային ուշադրութենէն շարունակ և յաջողարար խոյս տուած ըլլալուն համար էր անշուշտ որ աւելորդ գատուած ըլլալու է իրեն ալ խորշ մը յատկացնել Ս. Պօղոս-Պետրոսի շիրմատանին մէջ... Հոգ չէ. նոյն իսկ աւելի՛ ըսւ. անոր աւելի կը վայլէ ժողովուրդին ննջեցեալներուն մէջ ըլլալ, ինչպէս վայլեցուց անոր սղջերուն համար ըլլալ: Միայն թէ կ'սպասուէ որ՝ Կեսարացի մը կամ Կեսարացիներ, իրենց սովորական դրականութեամբ, վայելուչ մահարձանով մը գիտնան յաւերժացնել Տէրէվանքի Սուրբին քաջութիւնն ու բարութիւնը: Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

ՀԱՅՈՒՆ ԿՈՐՈՎԸ

Խարուսիկ ազատութեան ութնամեայ շրջանի մը մէջ մէկէ աւելի անգամներ յուսահատեր էինք անկէ, Հայուն ազգմիկ կորովէն, մէկէ աւելի անգամներ աւա-



Տիգրան Գիգիբեան
(Թուրք բանակէն փախստական մը)

մանեան) դաւաճան հղբայրակցութիւնը հայ մարտական ոգին սմբեցնող, յարձակողական ջիղը թուլցնող, մեղկացնող աղետաւոր յուսութքն հղաւ, խորհեցանք, և չէինք սխալեր: Ատանան մեզ յանկարծակիի բերաւ: Պալքանեան ամպրոպը մեր հորիզոնէն անցաւ իր փայ-

ղեր էինք մօտիկ ու մույլ անցեալի մը ետեւէն՝ ուր ցեղին պայքարողականութիւնը միշտ լարուած, զսպանակուած էր, և ուր խիզախ ու ամենի երիտասարդութիւն մը պատրաստ էր կրակին մէջ նետուելու, յեղափոխական առաջին ազգանին՝ վըտանգներ դիմագրաւելու, անկարելիին սպառաժնէրուն զարնըւելու... Օս-

լակներուն շրջումը միայն դնելով մեր սահմակած աչքերուն ու հոգիին մէջ: Անկարողութեան գալարումներն ապրեցանք:

Պատերազմին հետ Հայուն դիմադրական կորովը վերստին երեւան եկաւ, հայրենի երկրին մէկ քանի կէտերուն վրայ, յուսահատութեան խելայեղ թափովը, և Վան, Շապին-Փարահիսար, Ուրֆա, Սուէտիա գոյն պանծացուցին եղբրական շռուափով մը: Կովկասահայ կամաւորական շարժումը դիւցազներգական շքեղ դրուագներ աւելցուց Հայ Կռիւին տարեգրութիւններուն մէջ: Բայց Անդրանիկներու, Քեռիներու, Վարդաններու երկնած արշալոյսը շուտով խաւարեցաւ մատնութեան սև դաւերուն և աղէտքի համատարած մղձաւանջի մը մէջտեղ, և մենք անգամ մը եւս ճանչցանք պարտութեան անդոհը, աւելի անաւոր քան ամենէն դառնակակիծ սուգերը:

Այն ժամանակ մեր առջև պարզուեցաւ ամբողջ տարածութիւնը մեր քայքայումին, ամբողջ անդունդը մեր կորուստներուն:

Ո՛րքան ատեն որ կռուող շարքեր ունէինք հայկական սահմաններուն վրայ, ներսերը թաւալող զարհուրանքը չէր զահանդեցներ մեզի: Պատերազմիկ ա՛յգ մըն էինք, և Յոյսին հեռապատկերները, Յաղթանակին աւետաւոր արձագանգները մեզ կը գօտնապնդէին, հայրենի անսահման մարտիրոսացումին իսկ տալով հաւաքական գերմարդկային զոհողութեան մը վեհաշուք ու աղեխարշ կերպարանքը:

Կամաւորական գունդերուն ցրօնքը յուսալքման կը մատնէր մեր ամենէն լաւատեսներն անգամ՝ որոնք կ'ըմբռնէին թէ իրաւունքին ախոյեանները ո՛րքան ալ գոյն վեր դատէին ուժե՛ն՝ տակաւին պէտք ունէին ուժով ապահովելու այդ գերադասութիւնը, և հետեւաբար անոնք դաշնակից փոքր ազգութիւններու իրաւապահանջ յաւակնութիւնները պիտի դատէին ռազմական կորովի չափին համեմատ որ իրենց ապացուցուած պիտի ըլլար՝ հասարակաց բաղձորոշ մարտնչումին մէջ:

Արտասահմանի Հայութեան կը մնար՝ կովկասահայ խափանուած ռազմաճիգը այլուր շարունակել: Մեր

տարագիր երիտասարդութիւնը կրնա՞ր տալ իրմէ սպասուած անձնուրաց կամաւորութեան փաստերը... Դաշնակից ճակատները նոր չի՛ պիտի ընդունէին հայ արիւնին տրիտուրը: Պատերազմին առաջին օրէն՝ հազարեակ մը Հայորդիներ դէպի Փրանսական կրակի գիծերը վազեր էին՝ երախտագէտ խանդավառութեամբ՝ մասնակցելու համար մեր մտաւորական հայրենիքին պաշտպանութեանը... Հարիւրաւորներ ինկած էին արդէն՝ պատուի խաչերը լանջքերնուն... Ընդունա՛կ էինք հազարաւորներ հանել ազգային կենսականութեան արտասահմանեան մեր թանկագին պահեստէն:

Փա՛ռք Հայուն կորովին, որ հեռաւոր քանդումներուն մոխրալի շունչէն կարծես կը զօրանայ, կ'աճի, կը յորդի, որ նահատակ եղբայրութիւններու վրէժխնդիր ցաւովը կը պրկուի, կը ծառանայ, կը խոյանայ... Երեք տարուան հայրենի աղէտակոծումը հրա՛շք էր գործէր մեր զարիպական դեռ առոյգ տարրերուն մէջ, որոնք ահա՛ փրթեր են կ'երթան դէպի ճամբաներն ազատաստեղծ մաքառումին:

Հրա՛շք... Ո՛չ, անարդար ջըլլա՛նք... Փա՛ռք քեզի, Արտասահման, որ գերեզմանն ըլլալ կը կարծուէիր ցեղին վայրավատին բեկորներուն, փա՛ռք քեզի, ո՛վ զըրպարուած, անիրաւուած, անիծուած Արտասահման, որ եղբայրագաւ ոգորումներու և հայրենուրաց այլասերումի անհուն սոսկաբէզ մը վատահամբաւուեցար. քո՛ւ ծոցէդ է որ ահա՛ ծայր կուտայ առնագեղ պոսթկումը հայ կորովներուն... Դո՛ւն ամլութեան հրէջ մը չէի՛ր, ուրեմն, Արտասահման, և ոչի՛նչ, ոչի՛նչ կորսըւեցաւ՝ տասնեակ տարիներու, տաժանքի, քաշկըտութի, տուայտանքի տասնեակ տարիներու ընթացքին՝ քու կողերուդ նետուած գաղափարական սերմերէն... Հայրենիքէն գեռ երէկ դասալիք սերունդ մը քու ստինքներէդ խմեց ազգասիրութեան անխառն կաթը, հասարակական քու դպրոցիդ մէջ մարդացաւ, սորվեցաւ քաղաքացիական առաքինութիւնները, քու բովէդ անցնելով թրծուեցաւ, սրտոտեցաւ, զինուորուեցաւ... Երկուսն ձեզի, և ձեր մուրասին, ձեր տղամարդութեան մատա՛ղ, ո՛վ Արտասահմանի կտրիճ ձեռնասուն-

ներ, որ քարուքանդ Հայաստանին տիրութիւն ընելու կը շտապէք... Ազգովին ողջակիզուած Հայուն կորսիլն է որ ձեզմով Արեւմուտքը կ'ապշեցնէ, կը սքանչացնէ, և Արեւելքի ապագան դարձնող գործօններուն մէջ նոր ու հզոր ազդակ մը կ'աւելցնէ:

Ձեր նախորդները, Արտասահմանի հասցուցած երէկուան կամաւորները, Ֆէտայիներ, անարեւելիներ, մութին մէջէն սողացող, հողին տակէն քալող, քարէ քար մագլցող, անշուք ու հալածական անձնագոհներ եղան... Դո՛ւք զինուորական համազգեստաւոր շարքեր կը ձեւացնէք, պաշտելի դրօշակ մը կը ծածանի ձեր գլուխներուն վերեւ, փառքի լուսաւոր ճամբաներէն կ'ընթանաք խորխտաքայլ, երանի՛ ձեզի... Բայց ձեր անդրանկներուն բոցավառ հոգիէն ձեր ներսիդին փոխանցուած է նուիրական կրակը, և դուք անոնց ու մեր բոլոր զոհերուն հանդէպ վեհագոյն պարտականութեան մը կատարումին կը քալէք անտեղիտալի վճռականութեամբ մը:

Հերոսներ չենք կոչեր ձեզի... Հերոսութիւնը Պատերազմէն առաջ իմաստ ունեցող բուռերէն էր. բայց մարդիկ այնքան վարժուեցան պարզօրէն մահուան գերիզ նետուիլ, որ ա՛լ հերոսականը հազիւ ուշադրութիւն գրաւող բան մըն է... Դո՛ւք կը զգաք թէ ճակատագրական մեծ ու անողոք հրամանի մը գործադրութեանը կը գիմէք անգառնալիօրէն... Դո՛ւք կատաղիները պիտի ըլլաք որոնք իրենց սուխներուն ու ակռաներուն ծայրով Ազատութիւնը պիտի կորզեն, — կամ անվերադարձ ուխտաւորները պիտի ըլլան աստուածային Ոճիրին...:

Գանիբէի մէջ, ԻՓԷՔԵԱՆ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ կեդրոնական վանատասունը՝ Շարա Էմաս-էլ-Տին Բիբասէլլի (նախկին Վիօլէ) Սինէմա-Թասրոնի կից խանութէն Փոնս.ԴՐՈՒԱԾ է Ֆակկալա փողոց, նամակասան դիմացը:

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՏԱՐԻՆ

1917

Վերջացող տարին այն թուականն է որ ազգերու պատմութեան էջերուն վրայ հուրի և սուրի մէջէն պիտի ներկայացնէ աշխարհի բոլոր հինգ հողամասերը: Միջազգայինէն անցնելով մեր ազգային կալուածին՝ 1917ը պիտի չըլլայ նուազ շահեկան թուական մը: Աւելի ամփոփելով մեր տեսութեան հորիզոնը, մենք մեզի կ'ուզդենք սա՛ հարցումը. «Ի՞նչ է 1917ի դիմագիծը Եգիպտոսի Հայութեան տարեգրութիւններուն մէջ?»

1917ը եղաւ Եգիպտոսի Հայերուն համար յաւէտ փոխանցման շրջան մը: Հայրենիքի կրկնակ տուրքերը, որ իրականացան այս տարեշրջանին, 1916էն կտակուած էին իրեն: Պէտք է ըսել, սակայն, անմիջապէս, ի պատիւ մահամերձ տարիին, թէ ան փառաւոր կերպով գլուխ հանեց այդ գործը: Թէ ի՞նչ միջոցներով և ի՞նչ պայմաններու մէջ կատարուեցաւ ազգային ուրոյն կեանքի մը կազմաւորութեան առաջին գլուխը ներկայացնող դրական այդ աշխատութիւնը՝ դուրս կը մնայ այս յօդուածին սահմաններէն, մեր նպատակն ըլլալով հոս ուրուագծել մտածումի ուղղութիւնները որոնք պէտք է մեզի առաջնորդեն այն աշխատութիւններուն զորս անցնող տարին իր կարգին ժառանգութիւն կը թողու իր յաջորդին:

1818 տարեշրջանի գործը այլապէս դժուարին պիտի ըլլայ քան իր նախորդինը: Իսկապէս, ազգային կեանքը, որ այս տարի շնորհիւ Հայ Ազգային Միութեան գոյութիւն ունեցաւ ներուժ կենսունակութեամբ մը, իբր օրէ օր աճող երիտասարդ ուժ մը, չի կրնար բաւականանալ միայն Ֆիդիքական ու նիւթական ձիգերով. ան պէտք պիտի ունենայ ազգերու կեանքին բաղկացուցիչ միւս երկու ազգակներուն՝ տընտեսական և մտաւորական մարդերուն մէջ ալ հաւասարապէս զարգանալու, և, որպէսզի այսօրուան աւե-

րակներուն մէջէն վաղը Հայաստանը բարձրանայ գեղեցիկ ու զօրաւոր, այդ կրկնակ ուղղութիւններով ալ պէտք է այժմէն ծրագիրներ մշակուին և ասոնց կիրարկութեան միջոցները ապահովուին^(*): Ահաւասիկ աշխատութիւններ որոնցմով զբաղելու համար, յառաջիկայ տարեշրջանին, Հայ Ազգ. Միութեան քով և անոր հովանաւորութեան ներքեւ, զանազան յանձնախումբեր պէտք պիտի ըլլար կազմել կարող մասնագէտներէ: Այսպիսի յանձնախումբեր կրնան ստեղծուիլ ամէն ուր որ Ազգ. Միութեան Մարմիններ կան, և իւրաքանչիւր յանձնախումբ իր պատրաստած նախագիծերը, որոշ ժամանակի մը մէջ, ներկայացնելով կեդրոնական յանձնախումբի մը, կամ լաւ եւս պատգամաւորական խորհրդագծադրովի մը, կրնանք ստանալ բազմակողմանի ստեղծասիրութիւններով կատարելագործուած ծրագիրներ, որոնք վաղը յարմարցուելով երկրի տեղական պահանջներուն, նուիրագործուին իբրև հիմնագծերը մեր ազգային կեանքի կազմակերպութեան և ընկերային շէնքին կառուցման:

Ժողովուրդի մը տալու համար երջանիկ կեանքի մը կարելիութիւնները, կան երեք գլխաւոր պայմաններ որոնցմէ մէկին կամ միւսին մէջ թերացումը կ'ուեննայ փաստակար հետեւանքներ, նախ սահմանափակ շրջաններու մէջ, և յետոյ, հետզհետէ մեծ համեմատութիւններ առնելով, կը դառնայ կ'ըլլայ ազգային վտանգ մը: Այդ պայմաններն են՝ բարեկեցութիւն, դաստիարակութիւն և առողջութիւն: Քաղաքակրթուած ազգերու կեանքի կատարել զարգացման անհրաժեշտ այս երեք գլխաւոր պայմանները անհամար ստորաբաժանումներ ունին, որոնցմէ իւրաքանչիւրը առանձին մասնագիտութիւն մը կը ներկայացնէ: Որպէս զի ժողովուրդ մը ըլլայ բարեկեցիկ, պէտք է իրեն տալ հողային արդար բաժանում մը, հաւաքական արդիւնաբերութեան մի-

(*) Գրեխ վերջին էջերը փակող տետրիւնը արդէն գրի առած էինք, երբ մեր Գաբամանեան բարեկամէն ստացանք գրեթէ նոյնիմաստ, զուցէ քիչ մը անդրազոյն կանխահոգութիւններ արտայայտող այս յօդուածը, զոր հանդիմով կը հրատարակենք: (Ծ. Խ.)

ջոցներ, հաղորդակցութեան գիւրութիւններ, ճարտարուեստական հաւասարակշիռ օրէնքներ, ազգային հարստութիւններու լաւ մատակարարութիւն մը և ըն. : Գաստիարակութեան համար՝ ձրի և պարտաւորիչ կրթութիւն, մտաւորական և բարոյական հիմնական զարգացում, գեղարուեստական հաստատութիւններ, դաստիարակներու համար առանձնայատուկ օրէնքներ, սպազրութեան և հրապարակագրութեան ընդհանրացում և ըն. : Ժողովուրդին առողջութիւնը պահպանելու համար պէտք է քաղաքներու մաքրութիւն, բնակարաններու և գործատուներու առողջապահիկ շինութիւն, յորդառատ օդ, ջուր և լոյս, սնունդի վերաբերել օրէնքներ, պետական բժշկական հսկողութիւն և ձրի գտրմանում և ըն. և ըն. :

Հոս տեղը չէ այս աշխատութիւններու մասին մասնագիտական բացատրութիւններու մէջ մտնել և ընդլայնումներ ընել. կրնանք գիտել միայն թէ՛ երկրի մը բարօրութիւնը ապահովող այս մարզերուն մէջ ինչ սերտ կապերով իրարու պիտի գործակցին և ս'ըքան յաճախ զիրար պիտի լրացնեն բժիշկն ու դաստիարակը, ճարտարապետն ու ճարտարագէտը, օրէնագէտն ու տնտեսագէտը, հրապարակագիրն ու ճարտարուեստագէտը, հողագէտն ու տարրագէտը. և այս մասնագէտներուն պակասը չէ որ պիտի շփոթեցնէր մեզի, հապա հանրային կեանքին մէջ անոնց խնամքին յանձնուած աշխատութեան սխալ բաժանումը: Այդ մասնագէտներէն ուղիղ ընտրութեամբ մը առնուած յանձնախումբեր կոչուած են հիանալի ծառայութիւններ մատուցանել Հայրենիքին, երբ մանաւանդ անոնց մէջ գտնուին Հայաստանը ճանչցող, հոն ապրած և զայն ուսումնասիրած անհատներ: Ամէն պարագայի, ընդհանուր գիծերուն մէջ, օգտակար ծրագիրներ կ'ըլլան պատրաստուածները, որով ձեռնունայն չէ որ վաղը Մայր-Հայրենիք վերադարձած կ'ըլլան Արտասահմանի Հայ Գաղութները:

Ազգերու բարեշրջման այս անհրաժեշտ օրէնքներուն դէմ մեղանչումը կամ անոնց մասին տգիտութիւնը չէ որ — հակառակ պարբերական բազմաթիւ արուես-

տական ճիգերու — թուրքիան մահուան դատապարտեց: Կեանքը շարժում, յառաջդիմութիւն է որ պէտք է յայտնուի ամէն ընդունակութեան ձեւի տակ. իր կեցած տեղը մնացող գոյութեան մը անհետացումը ժամանակի հարց է միայն. լճացումը փճացում է առանց բացառութեան: Կեանքի ամէն երեւոյթ արդիական գիտութիւն մը ձեւացուցած է այսօր շնորհիւ տարիներու յամառ և ժրաշան աշխատութեան: Մեզի կը մնայ օգտուիլ գիտութեան ընձեռած փորձառութիւններէն՝ սկիզբէն ուղիղ հիման վրայ կառուցանելու համար մեր ազգային շէնքը: Որքան կատարեալ միջոցներ տրուին ժողովուրդին իր աշխատութեան արդիւնքովը ապրելու, այնքան քիչ պէտք կ'ունենանք անհատական և հաւաքական բարեգործութեան: Բարեգործութիւնը գործուած նախկին չարիք մը կամ սխալ մը կ'ենթադրէ անպայման, առաջին պարագային մէջ հատուցումի և երկրորդին համար փոխարինութեան ենթակայ. իսկ անոր յաւերժացումը ամօթ մըն է պարզապէս ազատ և երիտասարդ երկրի մը համար: Այս ճշմարտութեան ժխտումը չեն եւրոպական քաղաքակիրթ երկիրներու բարեգործական հաստատութիւնները. ընդհակառակը, հետեւելով ամէն օր հոն տեղի ունեցող յեղաշրջումներուն, կը համոզուինք որ՝ եթէ այդ երկիրներուն տրուած ըլլար այսօր իրենց օրէնսդրութիւնը և ազգային շէնքը հիմնովին կառուցանել այնպէս ինչպէս որ է մեր պարագան, անսխալօրէն պիտի հետեւէին կեանքի տրուած նոր պայմաններուն:

Մասնագիտական վերոյիշեալ աշխատութիւններէն զատ կայ սակայն ուրիշ մը, այլապէս դժուարին, անոր համար որ ըլլալով բացարձակօրէն անսխալ շատ աւելի ճիգ կը պահանջէ որպէս զի իրականութիւն մը դառնայ և շօշափելի արդիւնքներ տայ: Արժատական բարենորոգութիւն մըն է սոսիկա, առանց որուն շատ աննշան արդիւնքի, գրեթէ զէրօյի պիտի վերածուէին բոլոր միւս աշխատութիւնները, այն է թօթափումը մնացորդին բոլոր այն մոլութիւններուն և թերութիւններուն, որոնք մեր էութեանը մէջ կը մնան տակաւին իբր

թոյն մը ներարկուած թուրք անիծեալ տիրապետութիւնէն. ահա՛ հոգեբանական այս մեծ յեղաշրջումը մողթիւի է որ իրականանայ՝ յառաջիկայ տարուան ընթացքին՝ ամբողջ Հայութեան մէջ: Անշուշտ, սոսիկա այնքան պարզ գործողութիւն մը չէ, ինչպէս մեր գլուխէն նետելը թուրք ֆէսը և կամ հրաժարումը թուրք լեզուով խօսակցութենէ: Այս մաքրագործումը աւելի կը դժուարանայ մանաւանդ ինքնախաբէութեան մարդկային հակամիտութիւնովը՝ որով մեզմէ իւրաքանչիւրը կ'ուզէ ինքզինքին հաւաստել թէ՛ գոնէ ինք ազատ է այդ թերութիւններէն: Աւելորդ պիտի ըլլար թուրքիկ զանոնք, բայց պէտք չէ մոռնալ որ շատ անգամ փոքր և հետեւաբար զանցառելի առաքինութիւններ նկատուածները ճիշդ անոնք են որ կը կազմեն մեծ ազդերու մեծ գիծերը. խօստումը պահել, ժամագրութիւնը յարգել, «այս» և «ոչ» զանազանել գիտնալը ընկերական փոքր առաքինութիւններ չեն:

Նիւթական և հոգեկան վերածնունդի ահա՛ այս օրերուն վեր հանելու համար ազգին ծոցին մէջ գըտնըւած թաքուն բայց ուժեղ նկարագիրները և առաջնորդելու համար ժողովուրդին մտայնութիւնը՝ աշխատութեան անսահման ասպարէզ կայ բացուած եփիպտոսի հայ մամուլին և խօսքի բեմերուն առջև: Չեմ կարծեր որ անձնուէր և իրենց կոչումին բարձրութեանը վրայ գանուող հրապարակագիրներ և դասախօսներ(*) ընտրանքի դժուարութիւն կրեն իրենց նիւթերուն համար: Քաջութիւն և պորկեշտ, ներուժ աշխատութիւն: Տարին որուն կը փոխանցենք մեր յոյսերը թերեւս զանոնք պտակէ շատ առաջ քան ինչ որ մենք կ'ակնկալենք, և մենք մէկ օրէն միւսը դէմ՝ յան-

(*) Աղեփանդիոյ Հայ Յառաջդիմաւէր Երիտասարդաց Ընկերակցութիւնը, այս այժմեական մտահոգութիւններով սոգորուած, ժողովրդային Համալսարաններու սիսէմին վրայ, հաստատուած է հրապարակային դասախօսութիւններ, որոնց օտար սիրաբար բացաւ Մէքր Տ. Թիւրքիւնեան պէյ, Հոկտեմբեր 20ի իրիկունը: Մանրամասնութեան համար դիմել Ընկերակցութեան պիւրքէնի՝ «Յառաջդիմաւէր»ի, որուն առաջին պրակը լոյս տեսաւ այս օրերս: Թ. Խ.

գիտան գտնուինք ժողովուրդի մը՝ որ կը կրէ գրողմը հուրի և սուրի մկրտութեան:

Օրերը, ժամերը, օրոնք կը սահին կ'անցնին մեր գլխուն վրայէն, թանկագին են, և Արտասահմանի Հայերը պէտք է գիտնան ի զուր չի վատնել զանոնք՝ եթէ չենք ուզեր վաղը ամօթապարտ մնալ մեր հարազատներուն առջև: Այս է ազգարարութիւնը նոր տարիին:

Ա. ԳԱՐԱՄԱՆԻԱՆ

IMPRIMERIE DE LUXE

KH. TELLALIAN

9, Rue El-Falaki - Alexandrie

Եգիպտոսի ամենեկն նրբանաւակ հայ սպագրիչը

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Նամակագրութիւն — Հաշուեցոյց — Պահարան — Շրջաբերական — Յիշատակագիր — Այցարարտ — Հրատարակում — Մահազգ — Հասցէի քարտեր — Չէքեր — Հրամանագրեր և ամէն տեսակ տպագրական ընտիր գործեր:

Maison "Pygmalion,"

Սեփականատէր՝ ՍՏԵՓԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Շարէ Բասր - ել - Նիլ, Գահիրէ

Յիշեալ տունը, որուն համբաւը իբր հայթայթիչ հզօրացումի իշխանական գերգաստաններու գրաւական մըն է իր նուրբ ճաշակին, պատիւ ունի ծանուցանելու բոլոր մաքուր և ճաշակաւոր ճերմակեղէն ունեւալ փափաքող դժուարահաճներուն և բժախնդիրներուն, որ անգլիական լաւագոյն գործարաններու ընտիր կերպասներէն ճօխ մթերը մը կը գտնուի իրենց տրամադրութեան ներքև:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՀԱՆԴԷՊ

Թրքահայութեան գրեթէ ամբողջական քայքայումէն յետոյ, Արտասահմանի Հայութիւնը ուժգնօրէն պարտաւոր պիտի զգար ազգային ճակատագրին տիրութիւն ընելու:

Այդ պարտագիտակցումն երեւան եկաւ համերաշխական կարգապահութեան մը ձեւին տակ, ինչպէս նաև երիտասարդ անձնուիրութիւններու խորհրդաւոր տողանցութեան մը մէջ:

Այսքան միայն... Չենք գիտեր: Կուզենք հաւատալ թէ Հայ Ազգային Պատուիրակութիւնը, Փարիզի մէջ, և Հայ Ազգային Միութեան վարիչ մարմինները, Եգիպտոսի ու Ամերիկայի մէջ, մնացածը մտածելով, մշակելով, հոգալով զբաղած են:

Ու մնացածը բաղդին ձգուելիք, ետքէն ուշադրութեան տոնուելիք, մետասաներորդ ժամուն խորհուրէք, ոչ-կենսական կարեւորութիւն ունեցող բաներու կարգէն չէ: — Մնացածը՝ մեր վաղուան գերագոյն գոյապայքարին այսօրուրեկ պահասութեան հրամայական խնդիրը, անյետաձգելի գործն է:

Պատերազմը անձնագոհութիւն կը պահանջէր մենէ, և մենք ազգովին բոլորանուիրուեցանք իրաւունքի ու արդարութեան դատին: Մեր հայրենիքը հայ շունչէ թափուր աւերակոյտ մըն է այսօր, և Արտասահմանի մինչև մեր վերջին կենսունակ լանջքերը տրամադրուած են սրբազան մաքառումին... Բայց Յաղթանակէն առնալ միայն պիտի բաժին ստանան, ա՛յն ցեղերը միայն պիտի օգտուին, որոնք պիտի գիտնան քայլ առ քայլ նուաճել անոր հետքերը, քաղաքական հասունութիւնն ունեցած պիտի ըլլան իրենց զոհողութիւններն արժեցնելու, արգասաւորելու, կանխահոգօրէն կազմակերպուելու, իրաւատիրացման արժանի ու պատրաստ դիրքի մը մէջ գտնուելու համար առաջին պատեթեան ներքև:

Արտասահմանի մեր վարիչները ազգային ճակատագրին հանդէպ իրենց ստանձնած անհունօրէն պատասխանատու գերին բարձրութեան կը հաւատարի՞ն այս րոպէիս :

Ահա՛ հարցում մը, որ աւելի տագնապեցուցիչ է՝ քան մեր հայրենի կորուստներուն ամենէն եղերական անազանքը : Եւ մենք վստահ ենք թէ այս անդո՛նը մեզի հետ կը բաժնեն ինքզինքնին ղեկավարի հանգամանքին մէջ գտնող կարգ մը անկեղծ հայրենակիցներ :

* * *

Համերաշխութիւնը՝ աղուո՛ր, պաշտելի՛ : Բայց հանդիսաւոր առիթով մը ըսինք արդէն թէ չէր բաւեր զայն սրգեգրել սոսկ իբրև իմաստուն քաղաքականութիւն, թէ պէտք էր նոյնհետայն ջանադիր ըլլալ զայն սիրտերուն մէջ տեղաւորելու, որպէս զի՛ վայելուչ այլ կրաւորական կեցուածքէ մը աւելի՛ անիկա գառնար զոհողութեան յորդաբուզիս ազբիւր մը, ստեղծագործ ուժ մը : Եւ յետոյ, պէտք էր Համերաշխութիւնը դուրս բերելով նեղ-կոմիտէական շրջանակներէ՝ անոր ապահովել, կապիլ անխտիր բոլոր ուշագրաւ ձեռնհասութիւնները, առանց պիտակի, կնիքի ու պաշտօնական ուրիշ պարտադիր պայմաններու :

Ի՞նչ եղաւ այս անհրաժեշտ առաջադրութեամբ . . .

«Նպաստամտոյց», հանգանակութիւն, այո՛, դրամ պէտք էր, բազում դրամ. բայց միթէ կարելի՞ է լրջօրէն ընդունիլ, որ ամիսներով — գրեթէ տարիէ մը ի վեր — ազգային ֆօնտի մը գոյացման հարցը տարամերժ սեւեռակէտն ըլլար մեր բոլոր մտահոգութիւններուն ու նախաձեռնութիւններուն . . . Ի՞նչ պիտի ձեւացնէր, լաւագոյն յաջողութեան վարկածին մէջ, մեր բովանդակ հանգանակելիքը, որ անոր վրայ հիմնէինք Ազգին ճնշակայ ու ապագայ բոլոր պէտքերուն ապահովումը . . . Տասը-քսան հազար ոսկի աւելի կամ պակաս, առիկա չէ՛ր որ մեր կացութիւնը պիտի փրկէր, վաղուան բաղդորոշ պատահականութիւններուն հանդէպ . . . Մենք ամէն ժամանակէ աւելի հիմա փորձըւելու էինք հակառակ կողմէն կարգալ դրամ բառը, և մարդու պահանջովն առաւելապէս մտահոգուել :

Կարիքը պիտի ստեղծէ դրամը, ե՛րբ որ ալ ըլլայ, ո՛ւրիշ որ ալ ըլլայ . . . Մեր նիւթական միջոցներուն եթէ մնայինք, մենք Սուէտիոյ քաջարի ապաստանեալները թաղած կ'ըլլայինք Բօր-Սայիտի աւազուտքին մէջ : Հապա եթէ թրքական գեհնին դռները բացուի՞ն, և հարիւր հազարաւոր սովալուկ վերապրողներու պարենաւորման և ամբողջ փլատակ հայրենիքի մը վերականգնումին վիթխարի հարցը ցցուի՛ մեր առջեւ . . .

Դաշնակից եղբայրութիւնը պիտի հոգայ ինչ որ զոհողութեան մեր մարդկօրէն հնարաւոր ճիգերը պակաս թողուցած պիտի ըլլան :

Նիւթապէս անզօր ըլլալը ամօթ չէ՛, եղբայրներ, բայց՝ իբրև ազատութեան յաւակնող ազգ՝ գէթ մեր արտասահմանեան անվթար հատուածներէն կարենալու ենք երես ձերմկցնող չափով մարդ հանել, մեզի վերապահուած քաղաքական կեանքի հիմնարկէքին արժանաւորապէս մասնակցելու և մեր անձնուէրներուն ետեւէն հասնելով գրաւելու՛ համար հայ ձեռներէցութեան սահմանուած գերերն ու դիրքերը :

Այս նախատեսութեամբ անձկօտ, Եգիպտոս, Եւրոպա, Ամերիկա, մեր վարիչ մարմինները ի՞նչ ծրագիր, ի՞նչ վիճակագրութիւն պատրաստած ունին արդէն . . . Անհարկի՛ է, արգօք, այս հարցապնդումը, հասարակ մահկանացուի մը կողմէ . . . Բայց կը սխալիք, սիրելի՛ հայրենակիցներ, եթէ կը մտածէք թէ Համերաշխութիւնը ձեզի իրաւունք կուտայ հանրային կարծիքը անգիտանալու, անկէ վեր սաւառնելու, կամ շտտ-շտտ լսէր և միութեան ու «կարգապահութեան» յորդորներ կարգալու անոր . . . Դո՛ւք շատ պզտիկ ու խելօքիկ տղու մը տեղ գրեք էք ժողովուրդը . . . Ձեզի պէս չեն մտածեր Լօյա Ճօրձերը, Րիպօներն ու Բէնլլվիները . . . Դաշնակից երկիրներու մամուլը այսօրուան ու վաղուան քաղաքական ու տնտեսական հրատապ հարցերովը կը գրադի . . . Մեր մէջ Համերաշխութիւնը չի կրնար մեր համեստ օրկանները զերծ կացուցած ըլլալ մեր անմիջական ապագան էապէս շահագրգռող խնդիրներու բազմադիմի ուսումնասիրութեանէն . . . Նկատի ունեցէ՛ք, թէ մենք պատերազմական-

զինուորական զազանիքներու հետ գործ չունինք, և սոսկ մեր ազգային-քաղաքական կազմակերպութեան տեսակէտէն կ'առաջնորդուինք... Կը հաւատանք որ Գաղափարները Հայաստան մը պիտի վերստեղծեն, բայց մենք ինչ պիտի կրնանք բերել, իբրև քեֆնիֆ, վարչական, մտաւորական պատրաստ ստտար, հայկական վարկը վեր և իրաւունքը ամուր բռնելու համար մեր վերածնող հայրենիքին մէջ, մեր ազատարարներուն առջև:

Ազգային Միութիւնը մեր ռազմամանակեայ կառավարութիւնն է. անիկա իր աւագ գործը պէ՛տք է ընէ Արտասահմանի Հայութեան բոլոր զարգացած երիտասարդներուն ֆալաֆային զօրաշարժի յատակագիծը պատրաստել. պէ՛տք է այժմէն սերտ յարաբերութեան մէջ ըլլայ անոնց հետ, զասաւորէ անոնց կարողութիւնները, վճռական յանձնառութիւններ պարտադրէ անոնց, առօրեայ թելադրութիւններով, նպատակաշարմար հրահանգներով լարէ անոնց կորովները, և կազմ ու պատրաստ ունենայ զանոնք՝ մարդու-պէտքի առաջին առիթները կարենալ զխնադրուելու համար:

Միայն եզրպտահայ Գաղութը աչքի առջև ունենալով, մենք կրնանք, առանց ինքնախարութեան, ըսել, թէ նախապատրաստական-կազմակերպական կարեւոր աշխատանք կայ հոս տեսնալիք, Ազգային Միութեան համար: Այս երկրին մեծ վարչութիւններուն մէջ բաւական թուով երիտասարդ Հայեր իսկապէս փայլուն պահեստ մը կը կազմեն՝ առաջադրուած հայրենի գործունէութեան տեսակէտով: Գիտական-փորձառական պաշարը, զոր անոնք ձեռք բերած են զանազան ճիւղերու մէջ, զիրենք կանխանշանակուած ուսովիրաները կը կացուցանէ հայրենատիրացումի յառաջիկայ մեր կենսական գործին:

Զոհողութեան կոչերով չէ՛ որ պիտի մօտենայիր այդ երիտասարդութեան, որ իսկապէս բան մը չունի զոհելիք... Ազատագրուող Հայաստանը շատերու պիտի ժպտի, շատեր պիտի առինքնէ իր փառքի ու բարօրութեան անպատիր խոստումներովը... Արիւնին զոհողութիւնը պիտի ընեն անոնք որոնց երակներուն մէջ

ցեղին արիւնը զիւցազնօրէն խնդեցաւ... Միւսներուն մասին կարելի չէ՛, սակայն, մտածել, թէ Անապատին աւազը հրապուրած, հմայած, գերած ըլլայ զանոնք առ յաւէտ... Ամենէն համոզները, ամենէն մեղկացածներն ալ պիտի քալեն, եթէ գիտնաք զանոնք անգամ մը շարժել, դուրս բերել իրենց հեղգութենէն:

Պիտի բողձայինք որ Ազգային Միութիւնը, իր առաքելութեան մասին աւելի բարձր ու լայնահայեաց հասկացողութիւն մը ցոյց տար հետզհետէ: Իր առաջին քայլը, գէպի Ամերիկա փութացուցած իր պատուիրութիւնը, ակնկալուածէն աւելի բարեյաջող ու արդիւնաւոր եղաւ: Բայց ատով չի լրանար Միութեան նախաձեռնող ու հոգատար գերը: Արտասահմանի Հայութեան կողմէ ան է որ պիտի աշաւորջ հսկէ ազգային ճակատագրին, և՛ այս պատասխանատու հանգամանքով՝ պէ՛տք չէ երբէք անբաւական կամ անփոյթ զանուի իր հեղինակութենէն կախում ունեցող ո՛ր և է ձեռնարկի, ո՛ր և է հետապնդման առջև, ճղճիմ ճիւղայրթոյթան» պատրուակներով և այլ աւելի խղճալի հաշիւներով: Այս ժողովուրդը միշտ վճարած է իր փրկագինը:

Եւ այնքան աւելի ուշադիր ու զգոյշ ըլլալու են մեր օրուան յիսրները՝ որքան ինքզինքնին ո՛չ մէկ հակակշռի տակ կը գտնեն հիմակուհիմա, մինչ զաշնակից մեծագոյն երկիրներու դանլիծները օրբօրիսիօնի մը և մամուլին բծախնդիր հսկողութեան ներքև կը գործեն... Այսօր մութի մէջ գործուած թերութիւնները կամ սխալները վաղը աւելի անողորմօրէն կը պախարակուին:

* * *

Հակառակ ազգային-քաղաքականութեամբ հոս բնա՛ւ չի զբաղելու առաջադրութեանս, խղճի պարտք սեպեցի այս խոնարհ յուշածումներով փակել՝ ազգային կեանքի գերադրապէս մտալիկիչ վայրկեանի մը լոյս տեսնող այս հատորը:

Թրքահայաստանի անագորոյն փլուզումէն յետոյ, կովկասահայ եղբայրական զանգուածին յառելով է որ սիրտերնուս մէջ հայրենի վաղորդայնի մը յոյսը կը փայ-

ժայենք տակաւին... Եւ ահա՛ ուսն անիշխանութիւնը
ահռելի մղձաւանջ մը կը կախէ Կովկասի գլխուն ալ...
Պաղտատի ու Պաղեստինի մէջ կռուող Մեծն-Բրիտա-
նիոյ բանակներն են որ մեր ցեղին վերջնական բնա-
ջնջումը կ'արգելին այսօր, անեղօրէն ձնշելով ոճրա-
խանձ Տաճկութեան կողերուն:

«Աստուած պահէ թագաւորը», և իր արեւմտեան
ու արեւելեան ուժերն առաջնորդէ յաղթանակէ յաղ-
թանակ...:

Յ. Գ. — Այս էջերը տպարան յանձնելէ յետոյ,
սրտապնդումն ունեցայ «Յուսարեր»ին մէջ կարգալու
Տօքթ. Ն. Պաղտիկեանի «Վաղուան Համար» յօդուա-
ծաւարբը: Յարգելի բժիշկին հետ հեռուէ հեռու հա-
մախորհուրդ գտնուած ըլլալուս պարագան ա՛յնքան ա-
ւելի ուրախացուց զիս՝ որքան յայտնի էր ինձի, թէ
Տօքթ. Պաղտիկեան ընկերական որոշ շրջանակի մը լա-
ւագոյն ներկայացուցիչներէն է:

Վ Ե Ր Ձ



ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

1. — ՔԱՅՔԱՅՈՒՄ (Սպառամ)
 2. — ԿԻԼԻԿԵԱՆ ԱՐՀԱԻԻՐՔԸ (Սպառամ)
 3. — ԱՅՈՒՀԻՆ (Սպառամ)
 4. — ԱՐԻՆԻՆ ՄՍՏԵԱՆԸ 40 Ե. Ղ.
 5. — ՉԱՅՆԸ ՀՆՉԵՅ! — ՎԷԿ — (Սպառամ)
 6. — ԵԳԻՊՏԱՀԱՅ ՏԱՐԵՅՈՅՅԸ, Ա. ՀԱՏՈՐ (1914) 20 Ե. Ղ
 7. — » » Բ. » (1915) 15 Ե. Ղ
 8. — » » Գ. » (1916) 15 Ե. Ղ
 9. — » » Գ. » (1917) 15 Ե. Ղ
 10. — «ՀՈՍԱՆՔ»Ի ՀԱԻԱՔԱԾՈՒՆ 50 Ե. Ղ.
 11. — ԱՆԱՊՈՏԻՆ ՅՈՒՇՈՐՉԱՆԸ, Ա. ՀԱՏՈՐ (Սպառամ)
 12. — » » Բ. » (1917) 20 Ղ. Ո.
- ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴՈՐԾ**
13. — ԱՆՄԱՀ ԲՈՅԸ } Մեկ հատրի մեջ 15 Ե. Ղ.
 14. — ՉԱՅՆԸ ՀՆՉԵՅ }

ԳԻՆ 20 ՂՐՇ. ՈՂՁ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Ք Ա Ր Է Ք Ա Ր

ՎԷԿ ազգային եւ իրական կեանքէ, հինգ հատրով



«ԵԳԻՊՏԱՀԱՅ ՏԱՐԵՅՈՅՅԸ» փոստի միջոցով ստացող մեծալարգ ազգայիններէն կը խնդրուի բարի ըլլալ փոխարժէքն ԱՆՅԱՊՈՒՂ ղրկելու հեղինակին հետեւեալ հասցէով. —

SOURÈNE BARTÉVIAN

Poste Restante

ALEXANDRIE (Egypte)

2 013

5343

« Ազգային գրադարան



NL0153014

